ԷՄԻՐԱԾԻՆ



ՌՆԺ

ԺԷ ՏԱՐԻ

Սեպտեմբեր

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Թ

1960



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Հոբելյանական մեծ տոնի նախօրյակին	3
Ա. Հ.— Սուրբ Խաչի տոները	6
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	12
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՅԱՆ—Աստվածաշնչի հայերեն տպագրության պատմությունից	13
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ— Գարեգին պատրիարք Խաչատուրյան	27
Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ— Հաղբատի վանքը և նրա հետ կապված Հաղբատ գյուղի մյուս հուշարձանները	36
Ա. Ն. ՇԱՀԻՆՅԱՆ— Հայկական խաչքարերի արվեստը	45
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ— Պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսեսյանը Մայր Աթոռում	52
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	54
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	57

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Redaction of the monthly review «Etchmiadzin», Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1960

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԵԾ ՏՈՆԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Այս տարի, Նոյեմբերի 29-ին, լրանում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակը: Հայ ժողովուրդը պատրաստվում է արժանավայել կերպով դիմավորել իր ազգային վերածնունդյան և պետականության փառապանծ տարեդարձը: Ամեն տեղ ծավալվել են ազգային մեծ հոբելյանի նախապատրաստման աշխատանքները: Ավելի քան մի ամիս է, ինչ տոնական, կենսախիզ խանդավառություն և աշխուժություն է տիրում ամենուրեք՝ մայրաքաղաքում, հայրենի բոլոր քաղաքներում, շեներում և դաշտերում, ուսումնական, գիտական բոլոր հաստատություններում և հիմնարկ-ձեռնարկություններում՝ աշխատանքային նոր սխրագործություններով և ավելի պայծառ հաջողություններով նշանավորելու համազգային մեծ տոնը:

Հայ ժողովուրդը, տոնական այս օրերի նախօրյակին, ուրախ է և հպարտ՝ երանությամբը այն ժողովրդի, որ երկար դարերի ստրկությունից հետո, նվաճել է իր ազատությունը, իր հողն ու պատիվը, և ուրախանում է ու հպարտանում իր Հայրենիքով, իր նվաճումներով և իր պայծառ ապագայով:

Վերածնված հայ ժողովրդի ազգային հոբելյանական տոնի բարեբաստիկ առիթով, իր ամենաջերմ խնդակցությունն ու սրտաբուխ օրհնությունն է բերում նաև Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ, աղոթելով ի սրտե Հայրենիքի և նրա ժողովրդի բարօրության, բարգավաճման, խաղաղության և լուսապայծառ ապագայի համար:

Համազգային մեծ տոնի ուրախ առիթով, Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում կկատարվեն սրտագին մաղթանքներ՝ Հայրենիքի է՛լ ավելի բարգավաճման, մեր ժողովրդի բարօրության, աշխարհի խաղաղության համար: Հայ հավատացյալ ժողովուրդը սրտեռանդն կաղոթի իր լուսաբնակ պապերի լուսեղեն խորանների առաջ ծնրադիր, որպեսզի «ՕՐՀՆԵՍՑԻ ԵՒ ՊԱՀՊԱՆԵՍՑԻ ԵՒ ՆԱԽԱԽՆԱՄԵԱԼ ՊԱՀԵՍՑԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿՈՂՄՆ ԱՇԽԱՐՀԻՍ, ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, ԱՅՍ ՆՇԱՆԱՒ՝ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՒՍ ԵՒ ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆԱՒՍ ԵՒ ԱՒՈՒՐՍ ՇՆՈՐՀԻՒ»:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումը պատմական մեծ, շրջադարձային իրադարձություն է: Հայ ժողովրդի նորագույն պատմության նվիրական թվականներից մեկն է Նոյեմբերի 29-ը, երբ հայ ժողովուրդը, ազատագրական իր պայքարով, մեծ կամուրջ կապեց իր տխուր անցյալի և պայծառ ապագայի միջև: Նոյեմբերի 29-ը հայ ժողովրդի, հայ անկախության տոնն է:

Անցնող 40 տարվա ընթացքում մեր Հայրենիքը, հայ աշխատավոր ժողովրդի անդուլ ջանքերով, ճարտար ձեռքերով և մեր հայրենի կառավարության ազգաշեն ղեկավարությամբ ու անշահախնդիր օժանդակությամբը ռուս ազնիվ և բարի ժողովրդի, փրկվելով վերջնական կործանումից, վերագտավ իր ազգային, մշակութային, տնտեսական նոր կյանքի փրկարար ճանապարհը, և շնորհիվ վերահաստատված պետական նոր կյանքի, դարձավ Սովետական Միության ռեսպուբլիկաների առաջնակարգ ազգային հանրապետություններից մեկը, որտեղ հայ կյանքը, գիրն ու գրականությունը, արվեստն ու մշակույթը զարգանում են համաչափ, բազմակողմանի, անհախընթաց չափով և բազմազան ձևերի մեջ, հուրախություն և ի մխիթարություն բովանդակ հայության:

Անցնող 40 տարիների ընթացքում, բառացիորեն հրաշքի հավասար վիթխարի փոփոխություններ են կատարվել մեր մշակույթի, արվեստի, գիտության, գրականության, ժողովրդական կրթության և լուսավորության, առողջապահության, բնակարանային շինարարության, գյուղատնտեսության, արդյունաբերության և հայ ժողովրդի հոգևոր-բարոյական նոր կյանքի կերտման մեջ:

Սրանից 125 տարի առաջ, երբ ռուս մեծ բանաստեղծ Պուշկինը շրջագայում էր Հայաստանում, «Երևանում ի՞նչ կա» հարցին տալիս էր չափազանց տրտում և սպառիչ մի պատասխան. «Երևանում ժանտախտ կա»: Սրանից 40 տարի առաջ, նույնպես, պայծառ չէին մեր Հայրենիքի պատկերն ու կյանքը: Մեծանուն Հովհաննես Թումանյանի բառերով՝ այդ օրերին մեր Հայրենիքը «զարնված ու զրկված, ողբի և որբի Հայրենիք» էր:

Իսկ այսօր Հայաստանը դարձել է հայ մշակույթի օջախ, ծածկվել է մշակութային հիմնարկների, ուսումնական, գիտահետազոտական հաստատությունների, լաբորատորիաների լայն ցանցով, ու եղել համատարած գրագիտության, առաջավոր գիտության, գյուղատնտեսության և արդյունաբերության, արվեստի և գրականության բարգավաճ երկիր, լույսի Հայրենիք, հույսի Հայրենիք, նոր ու հզոր Հայաստան:

«Հայաստան կատարած մեր այցելության ժամանակ,— գրում է մեքսիկացի գրող Խուան Միգել Մորան,— մենք տեսանք մի երկիր, որ իրոք ֆանտաստիկ է: Բայց դա այնպիսի մի ֆանտազիա է, որն արդեն ռեալ իրականություն դարձած, քայլում է ասֆալտապատ ճանապարհներով... Թվում է, որ հայկական այս իրականությունը դուրս է եկել «Հազար ու մեկ գիշերներ»-ի սահմաններից և դարձել է մի այնպիսի ռեսպուբլիկա, որի կես միլիոն բնակչություն ունեցող մայրաքաղաքում այսօր գործում են օպերայի և բալետի թատրոն, հայկական և ռուսական դրամատիկ, պատանի հանդիսատեսի և տիկնիկային թատրոններ, երաժշտական կոմեդիայի թատրոն, գեղարվեստական թատերական ինստիտուտ, թատերական, երաժշտական, երգի և պարի բազմաթիվ կոլեկտիվներ ու ինքնագործ խմբեր: Թվում է, թե թռչող գորգի նման է իջել բանվորների և ծառայողների համար կառուցվող բնակելի տների, վարչական ու հասարակական գեղեցիկ շենքերի, պողոտաների անվերջանալի շինարարությունը («Սովետական Հայաստանը արտասահմանյան հյուրերի աչքերով», Երևան, Հայպետհրատ, 1960 թ., էջ 26):

Անցնող 40 տարիների ընթացքում Հայաստանում աննախընթաց վերելք է ապրել հայ գիտական միտքը, որի կենտրոն է հանդիսանում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան, հայ արվեստը, հայ գրականությունը, հայ մամուլը, հայ գիտությունը:

Հայ ժողովուրդը ի բնե օժտված է կառուցողական, հարտարապետական մեծ ընդունակություններով: Մեր ժողովուրդը շինարար է, և շնորհիվ իր անսպառ աշխատասիրության, նա միշտ փյունիկի նման հառնել է մոխիրների տակից, և հաղթահարելով նահատագրի հաջորդական հարվածները, վերակառուցել է իր Հայրենի տունը, իր քանդված օջախը, ի հայտ բերելով ապրելու, ստեղծելու, գոյատևելու իր հավատը:

«Ինչքա՜ն հարուստ ու հարատև են ձեր պատմությունն ու մշակույթը, և թե ինչպես դուք, բազում դարերի ընթացքում մաքառել եք այն պահպանելու համար,— գրում է անգլիացի հայտնի գրող Ջեյմս Օլդրիջը:— Իրոք դուք ուշագրավ մի ժողովուրդ եք, որ կարողացել եք մնալ այսքան կենսունակ և հավատարիմ ձեր ավանդություններին, երբ ամբողջ պատմությունն ու հանգամանքները ձեր դեմ են եղել:

Ինձ թվում է, եթե այսօր ես հայ լինեի, խորապես հպարտ կլինեի և՛ հայ ժողովրդի պատմությամբ, և՛ ներկա Հայաստանով: Մի՞թե չափազանցություն կլիներ ասել, թե արդի Սովետական Հայաստանը արդեն բրոնել է գեղեցիկ ու կուլտուրական մի երկիր ստեղծելու հանապարհը, որին ձգտում է հայ ժողովրդի ամբողջ պատմությունը:

Չեմ կարծում, որ դա չափազանցություն կլիներ: Ձեր գեղեցիկ գյուղերն ու քաղաքները, ինչպես նաև պատմական հուշարձանները տեսնելուց հետո, ես հավատացի, որ դուք շուտով կդառնաք աշխարհի ամենասիրուն ու բարգավաճ պետություններից մեկը» («Սովետական Հայաստանը արտասահմանյան հյուրերի աչքերով», էջ 95):

Արդարև, անցնող 40 տարիների ընթացքում, Հայաստանը դարձել է շինարարական մի անսահման հրապարակ, որտեղ կերտվում են մեր օրերի հայ ժողովրդի երկաթագիր նոր պատմությունը և հայոց պայծառ ապագան, ավելի ապահով ու խաղաղ:

Այս վկայություններն ու փաստերը խոսում են այն հսկայական նշանակության մասին, որ ունեցել է սովետական կարգերի հաստատումը Հայաստանում հայ ժողովրդի համար: Ներկա Հայաստանը ավելի շքեղ է, քան մեր նախնիքների, նահատակների «երազների աշխարհ Հայաստան»-ը: Իրականությունը կարծեք գերազանցում է երազին, եթե մի պահ համեմատենք Սովետական Հայաստանը նախասովետական շրջանի հետամնաց, ագրարային, ֆիզիկապես ու տրնտեսապես հյուծված, իմացապես ու հոգեպես կազմալուծված Հայաստանի հետ:

Այսօր Հայաստանում անցյալի ավերակների տեղ բարձրանում են վարդագույն կառույցներ, լուսաշող քաղաքներ, շեն ու պայծառ ավաններ, նորաբաց, լայն ու պայծառ պողոտաներ, որոնց մեջ ապրում և քայլում է ապագային վստահ աչքերով նայող մի երջանիկ ու հավատավոր հայ նոր սերունդ: Եվ այս բոլորը՝ յուրաքանչյուր հայրենասեր հայ մարդու սիրտը լցնում է ազգային հպարտության ամենաքաղցր զգացմունքներով, որովհետև ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՆ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԱՐԱՎՈՐ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՆԵՐԻ, ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ, ԼՈՒՍԱՎՈՐ ԵՐԱԶՆԵՐԻ, ՊԱՅԾԱՌ ՀՈՒՅՍԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՈՒ ՓՐԿԱՐԱՐ ՀԱՆԳԸՐՎԱՆԸ, ԽԱՂԱՂ ՈՒ ԱՊԱՀՈՎ ՄԻԱԿ ՆԱՎԱՀԱՆԳԻՍԸ, ԴԱՐԵՐՈՎ ՄԵՐ ԵՐԱԶԱԾ, ՓՆՏՌԱԾ ԵՎ Ի ՎԵՐՋՈ ԳՏԱԾ ԱՎԵՏՅԱՑ ԵՐԿԻՐԸ:

Նոյեմբերի 29-ին, դարերով տրորված ու նահատակված, մահվան եզրին հասած, բազմաչարչար հայ ժողովուրդը, վիրավոր ու արյունաքամ, բայց արի ու վճռական, ոտքի կանգնեց գերեզմանից, և ապրելու, ստեղծելու անմեռ հավատով լցված, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ, ընդմիշտ թոթափեց 600 տարիների սարկության անարգ լուծը և արևի տակ նվաճեց իրեն համար Հայրենիք, ազատություն, աշխատանք և խաղաղություն:

Այժմ տեղը չէ մի առ մի նշել տնտեսական, մշակութային, հոգևոր այն խոշոր տեղաշարժերը, որոնք կատարվել են Հայաստանում անցնող 40 տարիների ընթացքում:

Համազգային ուրախության, ազգային իրավ հպարտության օրեր են մեզ համար հոբելյանական այս օրերը, թե՛ Մայր Հայրենիքում ապրող մայր զանգվածի և թե՛ Սփյուռքի հայ ժողովրդի համար, որը 40 տարիներ շարունակ խանդավառվել, երջանկացել է իր Հայրենիքի անունով, երգով ու վերելքով, նրա հաղթությամբ և պայծառ ապագայով: Սփյուռքի հայրենակարոտ հայության բոլոր իղձերը, խոհերը, սերը Հայրենիքի հետ են միշտ:

Իր ազգային մեծ տոնի ուրախ առիթով, հայ ժողովուրդը մի անգամ ևս իր խորունկ երախտագիտության և ջերմ սիրո առաջին խոսքն է ուղղում իր ավագ եղբորը՝ ռուս մեծ և հերոսական ժողովրդին: Հայ ժողովուրդը միշտ երախտագիտությամբ կհիշի իր ազատագրության և առաջադիմության գործում ռուս մեծ ժողովրդի կատարած հսկայական և եղբայրական աջակցությունը: Երբեք պատահականություն չէր, որ հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունը միշտ էլ սերտորեն կապված է եղել ռուս ժողովրդի անվան և պատմության հետ: Հանձին Ռուսաստանի, հայ ժողովուրդը տեսնում էր այն ռեալ ուժը, որի օգնությամբ հնարավոր կլիներ թոթափել գերության լուծը և նվաճել ազատությունը:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումով, հայ և ռուս ժողովուրդների պատմական հարաբերությունը վերածվեց սրտառուչ, անֆակտելի բարեկամության: Ռուս ժողովրդի օգնությամբ և իր հերոսական աշխատանքով, հայ ժողովուրդը 40 տարի է անա ստեղծագործում է իր հայրենի հողի վրա, շքեղ մարմին տալով իր լուսակերտ երազներին: Օրերի հետ միասին աճում է նա, «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն, ընդ միոյ հարիւր», ժայռերից վարդեր է քաղում, քարերը վերափոխում հացի, լույսի, կյանքի, և կյանքը դարձնում անսահման բարիքների մի անսպառ աղբյուր: Հայրենիքում դրվող յուրաքանչյուր նոր քար հայ ժողովրդի ապագայի համար է, նրա հավերժության համար:

Ամեն քայլի, ամեն կողմ, երևում են խաղաղության պայմաններում ստեղծագործ աշխատանքի բարի արդյունքները:

Պայծառ է մեր ժողովրդի այսօրը ու վաղ՝ նրա ապագան: Դարերի դիմաց հայ ժողովուրդը ընդմիշտ և հավերժորեն վառել է իր գոյության անշեջ խարույկը և պայծառ, վառ հավատով է նայում գալիքի խոստումնալից աշխարհին: Եվ աշխարհում չկա ոչ մի ուժ, որը կարողանա փոխել հայ ժողովրդի պայծառ ուղին դեպի խաղաղություն, բարգավաճում և մեկտեղում Հայրենի հողի վրա:

Թո՛ղ օրհնվի այն փրկարար և նախախնամական ձեռքը, որը պայծառ հանապարհ է բացել հայ ժողովրդի առաջ դեպի ազատություն, ազգային վերածնունդ:

Թո՛ղ արդարև ընդմիշտ օրհնվի, պանպանվի և նախախնամության Աջով ու հայ ժողովրդի բազուկներով պահվի արևելյան կողմն աշխարհի, «եւ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ եւ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ»:

«ԵՂԻՑԻ՜, ԵՂԻՑԻ՜ եւ ԵՂԻՑԻ՜»:

ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՏՈՆԵՐԸ

(Պատմական-մատենագրական տեղեկություններ Խաչվերացի տոնի առթիվ)

Երունական գլխավոր տոների, այն է՝ Աստվածահայտնության, Պայծառակերպության և Հարության տոների հետ, որոնցով Եկեղեցին պանծացնում է Քրիստոսի տնօրինությունն ու նրա կյանքին վերաբերյալ խորհրդավոր հիշատակները, «տերունական հիշատակներ» անվան տակ տոնվում են նաև Եկեղեցու և Խաչի տոները, որոնք նույնպես համարվում են տերունական տոներ, որովհետև սերտորեն առնչվում են, ըստ Եկեղեցու ուսուցման, փրկագործության խորհրդի հետ։ Եկեղեցին Խաչն ընկալում է որպես գործիք փրկագործության, իսկ Եկեղեցին ինքը համարվում է արգասիքը, արդյունքը փրկագործության, այսինքն Քրիստոսի արյունով փրկվածների ժողով։

Շատ վաղուց, քրիստոնեական զգացմունքների և հավատի համար, Քրիստոսի խաչը եղել է ջերմ հարգանքի և պատվի առարկա։ Քրիստոս, որպես «պատարագ և զենումն Աստուծոյ» (Եփես. Ե 2), մահացավ խաչի վրա «վասն մեր» և այդ օրվանից խաչը հռչակվեց դրոշն ու պարծանքը Եկեղեցու և հավատացյալների, միաժամանակ նաև քրիստոնեական կյանքի կենդանության, զորության և հավերժության խորհրդանշան։

Ըստ քրիստոնեական ուսուցման՝ Խաչը ապրված, խտացված Ավետարանն է։ Քրիստոս Իր հետևորդներից առաջինը պահանջում է, հասնելու համար ճշմարտության և փրկության, ուրանալ անձը, վերցնել խաչը և հետևել Իրեն. «Որ ո՛չ առնու զխաչ իւր և գայ զկնի իմ՝ չէ ինձ արժանի» (Մատթ. Ժ 28, ԺԶ 24, Մարկ. Ը 34, Ժ 21, Ղուկ. Ի 23)։

Խաչի խորհրդի, «Խաչի ճառ»-ի մեջ է բովանդակվում, ըստ Պողոս առաքյալի ուսուցման, քրիստոնեական կրոնի կենսունակությունը, զորությունն ու հմայքը. «զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցն մեզ՝ զօրութիւն Աստուծոյ» (Ա Կորնթ. Ա 18)։ Խաչը, հավատացյալ մարդու համար, որպես փրկագործության խորհրդանշան, իր մեջ է խտացնում քրիստոնեական սերը, աստվածային գերագույն զոհողությունը և քրիստոնեական բարոյականի ամբողջ խորհուրդը։ Այս իմաստով, Եկեղեցու մեծ և լուսամիտ մատենագիրները, քարոզիչները խաչն իր խորհրդով համարել են «վսեմ ամփոփումը քրիստոնեական կրոնի»։ Հավատացյալը չի կարող լիապես ըմբռնել քրիստոնեական կրոնի փրկարար էությունը, նրա մարդասիրական, խաղաղասիրական ոգին, մինչև որ լուսավորված չլինի խաչի՝ այն է հանուն բարձր գաղափարների հանձն առնված զոհողության, զրկանքների և նահատակության գաղափարներով։

Պողոս առաքյալը, խտացնելով խաչի բարոյական, հոգեկան արժեքը քրիստոնյա մարդու համար, գրում է. «այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է, և ես՝ աշխարհի» (Գաղատ. Զ 14)։ Այս նույն մտածմամբ և զգացմունքով տոգորված, առաջին քրիս-

տոնյաները, ապա Եկեղեցու սրբերն ու նահատակները, գոտեպնդված «զօրութեամբն խաչին», իրենց կյանքով և արյունով ամրապնդեցին Քրիստոնեական Եկեղեցու հիմքերը, «իրենց անեղկեան հավատքին զորության խարիսխ հաստատեցին և իրենց դյուցազնական արիության համար կապեցին [խաչի] այդ նշանը, անոր մեջ խտացված զգալով հավատքի, հույսի և սիրո առաքինության լրումը» (Թորգոմ արքեպիսկոպոս, «Սիոն», 1933 թ., № 10, էջ 299)։

Եկեղեցու սրբերի, նահատակների և հավատացյալների համար խաչով էր պատկերվում Քրիստոսի կյանքը, նրա քարոզության ճշմարտացիությունն ու կենսունակությունը։ Եկեղեցին միշտ ապավինել է Քրիստոսի խաչի զորության, օգնության։ «Ապաւինեցաք ի խաչ քո»,— երգում է մեր շարականագիրը։ Խաչի խորհուրդն էր, որ հավատացյալների հոգում և մտքում զորացնում, բոցավառում էր քրիստոնեական հավատի և զոհողության սրբազան հուրը, մարդասիրության զգացմունքները և խաղաղության ձգտումը։

Քրիստոսի խաչելությունից հետո, պատժի և մահվան անարգ գործիք հանդիսացող խաչը Քրիստոսով սրբացավ, գեղեցկացավ և դարձավ հավատավոր ժողովրդի հարգանքի և երկրպագության առարկան, իր խորհրդով և նշանակությամբ։

Խաչը խորհրդանշանն է տառապանքի, զոհողության՝ հանուն վեհ սկզբունքների։ Իսկ տառապանքն է, որ կատարելագործում, ազնվացնում, սրբացնում է մարդկանց և հավաքականություններին։ Տառապանքի, արցունքի մեջ է, որ ծնվում են գեղեցկությունն ու հերոսությունը, հոգեկան, բարոյական, իմացական արժեքներն ու սրբությունները։ Չկա ոչ մի գեղեցկություն առանց զոհողության, աշխատանքի, տառապանքի։ Իսկ Քրիստոսի խաչը խորհրդանշանն է տառապանքի, կրված հանուն հավատացյալ մարդու երջանկության, հոգու խաղաղության։

Եկեղեցին իր գոյությունը պարտական է մանավանդ խաչի զորության, խաչի խորհրդին. «զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ՝ զօրութիւն Աստուծոյ... մեք քարոզեսցուք զխաչելեալն Քրիստոս... Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն» (Ա Կորնթ. Ա 18, 23, 24)։

Խաչը Եկեղեցու համար եղել է զորության, կյանքի նշան և ներշնչարան։ Այդ զգացմամբ երգում է «Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից, այսօր պսակեաց զքեզ խաչիւն իւրով»։

Այս գաղափարների լույսի տակ, Եկեղեցին, շատ վաղուց, իր Տոնացույցում նշանակել է Խաչի մի շարք տոներ.

1. «Տօն Վերացման Ս. Խաչի».—Այս տոնը քրիստոնեական մյուս եկեղեցիները տոնում են սեպտեմբերի 14-ին, անշարժ կերպով, իսկ մեր Եկեղեցին՝ սեպտեմբերի 14-ի մերձավոր կիրակին, «ըստ հանրական սովորության, որով զերևելի տօնս տէրունականս ի կիւրակէ օր սահմանեալ կատարէին, նոյնպէս զտօնն Խաչվերացին զետեղեցին ի կիւրակէն, որ հանդիպի երբեմն ի 14 սեպտեմբերի և երբեմն յառաջ քան զայն» (Հ. Գաբրիել Ավետիքյան, «Բացատրութիւն շարականաց», Վենետիկ, 1814 թ., էջ 504)։

Վերացման կամ խաչի բարձրացման տոնի մասին Ընդհանուր Եկեղեցու պատմության մեջ հիշատակվում են երեք պատմական դեպքեր. «Պատճառ տօնին վերացման խաչին՝ յոմանց կարծի լինել երևումն նշանի խաչին եղեալ առ մեծն Կոստանդիանոս ի պատերազմելն ընդ գթաց, զոր և նա դրոշակ արարեալ զօրաց իւրոց յաղթեաց թշնամեաց. ի յիշատակ այսր կարգեցաւ ասեն տօնն Խաչվերացի։ Այլք ասեն սահմանեալ ի յիշատակ գիւտի պատուական խաչին ձեռամբ Հեղինեայ թագուհւոյ» (Ավետիքյան, էջ 504)։

Հայոց Եկեղեցին Խաչվերացի տոնին պանծացնում է հիմնականում խաչի գերեդարձի հիշատակը։

610 թվականին պարսից Խոսրով թագավորը պատերազմ է հռչակում Բյուզանդիայի դեմ և առաջին տարիներին պարտության մատնելով հույներին, 614 թվականի ապրիլին գրավում է Երուսաղեմը։ «Երուսաղեմի ավարին հետ գրավվեցավ խաչափայտն ալ, և գերիներու հետ տարվեցան Զաքարիա պատրիարքը և բազմաթիվ եկեղեցականներ» (Օրմանյան, «Ազգապատում», Ա, էջ 651)։ Քրիստոնեական ողջ աշխարհը հուզվում է այդ դեպքից։ կազմվում է խաչակրաց նոր արշավանք պարսիկների դեմ։ Նոր կայսր Հերակլը զորաժողով է հռչակում և ապա մեծ բանակով 627 թվականի գարնան արշավում Խոսրովի վրա։ Արշավանքին մասնակցում է նաև ժամանակի Արևմտյան Հայաստանի կյուրապաղատ Մժեժ Գնունին՝ հայկական ուժերով։ Խոսրովը շարաշար պարտվում է և սպանվում։ 628 թվականին կնքվում է հաշտություն և նույն թվականին խաչը ազատվում է գերությունից։ Քրիստոնյա բազմություններ խաչը բարձրացրած («վերացեալ») գլուխներից վերև, Թավրիզ—Կարին—Կոստանդնուպոլիս ճանապարհով բերում են Երուսաղեմ։ Խաչի վերադարձի ճանապարհին ստեղծվում է ան-

նկարագրելի ոգևորություն։ Հավատացյալ ժողովուրդը հանդիսավորապես դիմավորում է խաչափայտը և այն ծածկում իր արցունքներով և երկյուղած պաշտամունքի ջերմությամբ։ Ահա այս է Խաչվերացի տոնի պատմական ճշգրիտ ֆոնը։

Խաչվերացի տոնը կատարվում է բացառիկ շքեղությամբ, մանավանդ մեր Եկեղեցում, ըստ մեր Տոնացույցի, ուր կա «Կանոն Վերացման Սրբոյ Խաչին»։ Տոնից առաջ շաբաթապահ է, շաբաթ օրը՝ «Տօն Սրբոյ Եկեղեցւոյ ի նաւակատիս Սրբոյ Խաչին». իսկ «ի գիշերին հսկումն է»։ Առավոտյան ժամերգության վերջում կատարվում է Քրիստոսի թաղման կարգը՝ «Խաչի քո Քրիստոս երկրպագանեմք և զսուրբ զթաղումդ քո փառաւորեմք»։ Ապա հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցվում, որովհետև Խաչվերացի տոնը եկեղեցական մեծ տոն է, հինգ տաղավարներից մեկը։ Երեկոյան՝ թափոր Խաչվերացի։

Օրվա կանոնը հրահանգում է «յառաջ քան զերեկոյին ժամն՝ դիցեն արծաթի սկտեղը զսուրբ խաչն (որ ունի զմասն ինչ ի Խաչափայտէն)։ և զարդարեսցեն զնա ոսկեղանով և վարդեղէն ջրով և ծածկեսցեն պատուական կտաւով» («Տօնացոյց», Վաղարշապատ, 1906 թ., էջ 156)։ Ապա սկսվում է Խաչվերացի թափոր-անդաստանը տաճարի բակում, որից հետո, հրահանգում է կանոնը, «ի թափօր մի՛ ևս ելցեն մինչև ի Տեառնընդառաջն և անտի ի Ցաղկազարդն» (նույն տեղում, էջ 160)։

Խաչվերացի Անդաստանին նախագահում է թեմի եպիսկոպոսը կամ առաջնորդ վարդապետը, ապա եկեղեցական թափորը, «հանդերձ քահանայիւք և սարկաւագաւք, երթիցեն բուրվառովք, լապտերօք և քշոցօք առ սուրբ խաչն, և երկու սաւգերէցք վերացուսցեն սկուտեղամբ զսուրբ խաչն բարձրագոյն և գեղեցիկսքն սպասաւորեսցեն շուրջանակի»։ Այնուհետև սաղմոսերգությամբ, շարականներով և սուրբգրական համապատասխան ընթերցումներով սուրբ խաչը բերվում է վանքի կամ տաճարի բակը և եպիսկոպոսը, «առեալ զսուրբ խաչն ի քահանայէն, բարձրացուցեալ՝ տեառնագրեսցէ ասելով։ «Օրհնեսցի՛ և պահպանեսցի՛ և նախախնամեալ պահեսցի արևելյան կողմն աշխարհիս և Հայրապետութիւն Հայոց»։ Նույն ձևով հանդիսադիրը Անդաստանի ժամանակ հոգևորականության մասնակցությամբ օրհնում է «արևմտյան կողմն աշխարհիս... և ամենայն ժողովուրդք քրիստոնէից», «հարաւային կողմն աշխարհիս, երկիրս, անդաստանս, այգիս և պտղաբերութիւն տարուոյս», «հիւսիսային կողմն աշխարհիս, վանք, անապատք և ամենայն եկեղեցիք Հայոց՝ հանդերձ եկեղեցականօք և ժողովրդովք, զի լիցին ի շինութեան, ի բարեկարգութեան և ի խաղաղութեան»։

Անդաստանից հետո, եկեղեցական թափորով, սուրբ խաչը նորից բերվում է տաճար և «դիցեն զսուրբ խաչն և զԱւետարանն ճար և «դիցեն զսուրբ խաչն և զԱւետարանն ի վերայ խորանի յատեանն և երկիր պագցեն ամենեքեան»։

Այնուհետև 8 օր Խաչի և Եկեղեցու տոն է նշում Տոնացույցը (էջ 160—163)՝ հատուկ «Օրհնութիւն»-ներով, «Հարց»-երով, «Տէր-Տէր»-ներով (տե՛ս նաև «Ձայնքաղ յերկնից»-ներով (տե՛ս նաև «Ձայնքաղ յերկնից»-ներով, Վաղարշապատ, 1888, էջ 367—392)։

Խաչվերացի տոնի առթիվ իրապես բացառիկ և զուտ հայկական հանդիսության մասին Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը գրում է հետևյալ հատկանշանական տողերը. «Հավանական է, որ այս հանդիսավորությունը չափով մը գեթ արդյունքը լինի այն տպավորության՝ զոր խաչափայտին գերեդարձը գործեց հայության սրտին վրա՝ Հայաստանեն անցված միջոցին։ Կանոնադաշտին հարավ-արևելյան կողմը բարձրացող լեռներուն մեծ գագաթը խաչափայտ կկոչվեր մինչև վերջերը։ Այդ լեռան սարահարթին վրա, որ 9000 ոտք բարձրություն ունի, կբխի սառնորակ ջուր մը, որ նույն ատեն ուխտավայր է։

Տեղական ավանդություն մը կպատմեր, թե պարսիկները խաչը հանձնելե վերջ, զզջալով, նորեն հարձակիլ փորձած են ետ առնելու համար զայն. հայերը, խաչափայտը այնտեղ թողլով, իրենց ամբողջ ուժով վանած են հարձակումը, ու վերադարձին տեսած են, որ խաչին հանգչեցված տեղեն բխած է այդ վճիտ ջուրը։ Նույն լեռներու սորոտը կար Խաչկա վանք մը, ուր Խաչվերացի ատեն ուխտավորություն կկատարվեր» («Սուրբք և տօնք», էջ 317—318)։

Մեր Շարակնոցի գոհարներն են Խաչի շարականները, որոնք շատ գեղեցիկ են իբրև բովանդակություն և ձև, պատկերավոր, ռիթմիկ և հանդիսավոր. «տասնևինը դարեր երգեր ենք անոր (խաչին) խորհուրդն ու փառքը, ինչպես անոր զգացումն ու ձևը բնաղդորեն կարծես ամենեն հիմնական մոտիվը (հորինվածք) դարձեր է մեր գրականության ու գեղարվեստին։ Կարելի պիտի ըլլար թանգարան մը ամբողջ լեցնել նմուշներովը բյուրապատիկ խաչերուն, որոնք, իբր քանդակ կամ իբր զարդ, հոգևոր ներշնչումի օծությամբ լեցուցած էին մեր սրբավայրերը և գրչագիրները, ազգային ճարտարապետության և մատենագրության մեծ

ու փոքր հիշատակարանները» (Թորգոմ պատրիարք, «Սիոն», 1933, № 10, էջ 299)։

Նույն մտածումներով և զգացմունքներով, շնորհալի բանաստեղծ Զավեն Սյուրմելյանը գրում էր, որ մեր հին Հայրենիքը «խաչքարերու սուրբ աշխարհ մըն է»։

Խաչվերացի առաջին օրվա կանոնն է շարական ած, «Որ զանարատ բաղուկս քո («Զայնքաղ Շարական», էջ 367)։ Այս գեղեցիկ շարականի հեղինակն է համարվում է դարի նշանավոր մատենագիր և աստվածաբան Թեոդորոս Քռթենավորի աշակերտ Սահակ Զորափորեցի կաթողիկոսը (677—703 թ. թ.), «որ գնաց ընդդէմ տաճկաց» («Զայնքաղ Շարական», էջ 3)։ Զորափորեցուն են վերագրվում նաև Խաչի մի շարք կանոններ, ինչպես նաև «Եկեղեցւոյ, Կենդանագիր անարատն և Տէր երկնից՝ որ զարդարեաց» (էջ 3)։

Ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը ևս բարձր է գնահատում ընդհանրապես Խաչի շարականների բանաստեղծական թափը, պատկերավորությունն ու հուզականությունը. «Խաչի երգերի մեջ կան մի քանի այնպիսիները, որոնք գեղեցիկ են իրենց խրախուսական աշխուժով։ Խաչի հավատը շատ ջերմ է եղել, մանավանդ 7-րդ և 8-րդ դարերում, երբ Հայոց երկիրը զարդարում էին խաչարձաններով։ Ուստի բանաստեղծի սրտից թռչում են առ Խաչը ոգևորության խոսքեր, որոնք լի են հափշտակիչ քնարականությամբ» («Հայոց հին գրականության պատմություն», Ա, Երևան, 1944 թ., էջ 500—501)։

Հոգեկրոն հայ բանաստեղծը Խաչը երգում է որպես «նշան յաղթութեան ընդդէմ թշնամւոյն», «զէն յաղթութեան», «անյաղթելի նշան անպարտելի զօրութեան») «Զայնքաղ շարական», էջ 364, 367)։ Խաչը երգվում է նաև որպես «օգնական հաւատացելոց» (էջ 367)։ Խաչը շարականների մեջ երգվել է նաև խորհրդանշանական ձևով, որպես Մովսես մարգարեի «գաւազան», «որ զանդունդս մեղաց ծովու սովաւ բաժանեցեր և զբռնաւորն ծածկեցեր խորօքն յատիտենական հրով» (էջ 388)։ Շարականների մեջ Խաչը համեմատվում է նաև Դրախտի «գիտութեան ծառ»-ի հետ, որ «զմեզ ի կենացն հանեալ արտաքսեցոյց» (էջ 374), «իսկ փայտ Խաչի քո կենսատու գաւազան զօրութեան կենաց մարդկան և յոյս հաստատութեան» (էջ 374), «յոյս և ապաւէն ազգի մարդկան» (էջ 391)։ Խաչը միաժամանակ երգվում է նաև որպես «մորենի վառեալ որ ոչ այրէր», Զաքարիա մարգարեի տեսած «աշտարակ ոսկի եօթնաջահեան լուսով», «Սաբեկայ ծառ», Մովսեսի անապատում բարձրացրած պղնձե օձը, սրբութեան սեղան, աթոռ տերունական, արքայութեան բանալի, անապատում իսրայելացիներին առաջնորդող լուսեղեն ամպ (տե՛ս նաև Մ. Աբեղյան, հիշված աշխատությունը, էջ 499—500)։

Խաչվերացի տոնը մեր հինգ տաղավարներից վերջինն է, ունի իր նախընթաց պահքը, նավակատիքը, մեռելոց հիշատակը և յոթնօրեքը։

2. «Գիւտ Խաչի»-ն, ըստ Տոնացույցի, Խաչի երկրորդ մեծ տոնն է։

313 թվականին, Միլանոյի հրովարտակով, Հռոմեական կայսրության մեջ հեթանոսական կրոնի կողքին թույլատրվեց նաև քրիստոնեության քարոզությունը։ Եկեղեցին, 300 տարի հալածվելուց հետո, ազատ շունչ քաշեց։ Կայսրության մեջ ստեղծվեց ուխտավորական ուժեղ հոսանք դեպի Պաղեստին, տեսնելու, համբուրելու տերունական վայրերը, ինչպիսիք էին Քրիստոսի ծննդյան այրը Բեթղեհեմում, շարչարանաց վայրերը, խաչելության, հարության և համբարձման տեղերը Երուսաղեմում։

Ուխտի գնաց նաև Կոստանդիանոս կայսեր (313—336 թ. թ.) մայրը՝ Հեղինե թագուհին, շատերի հետ։ Պաղեստինում և հատկապես Երուսաղեմում, տնօրինական տեղերում քրիստոնեական առաջին մատուռների և եկեղեցիների շինությունը պատմականորեն կապվում է Հեղինե թագուհու անվան հետ, ըստ քրիստոնեական առաջին մատենագիրների և պատմիչների։ Աստվածասեր և բարեպաշտ թագուհին Երուսաղեմում հետաքրքրվում է նաև Քրիստոսի Խաչափայտի հարցով, որը թաքցվել էր «առ ատելութեան, ընդ երկրաւ», և «մեծաւ գոհունակութեամբ եգիտ զխաչն աստուածային և լցաւ անճառ ցնծութեամբ» (Հովհաննես վարդապետ Երուսաղեմացի, «Գիրք պատմութեան Ս. Երուսաղէմի», 1782 թ., Կ. Պոլիս, էջ 163)։

Ընդհանուր եկեղեցական պատմության մեջ Խաչի գյուտի թվականն է ընդունված 327-ը։

Հեղինե թագուհու ջանքերով գտնվում է նաև Քրիստոսի Ս. Գերեզմանը և մեծ հանդիսությամբ կատարվում է հինարկեքը Երուսաղեմում Ս. Հարության մեծագույն տաճարի և այլ եկեղեցիների, որոնց նավակատիքը կատարվում է մեծ հանդիսությամբ, կայսերական հրամանով Երուսաղեմ են հավաքվում եպիսկոպոսներ, ուխտավորներ, Երուսաղեմի հայրապետը բարձրացնում է («վերացոյց») Ս. Խաչը, «ի տեսիլ ամենեցուն, առ ի պահպանումն հաւատացելոց»։

Այնուհետև եպիսկոպոսները, բավարարելու համար հավաքվածների կրոնական ջերմեռանդությունը, որոշում են Խաչափայտը

մասունքների վերածել և բաշխել եկեղեցիներին, ինչպես վկայում է Կյուրեղ Երուսաղեմացին իր «Կոչումն ընծայութեան» գրքում (Կ. Պոլիս, 1727 թ., էջ 19)։ Խաչափայտի մեծագույն կտորը գուրգուրանքով պահվում է Երուսաղեմի եկեղեցում, ոսկով և թանկագին քարերով ագուցված, և «այնմ ժամանակէ հանդիսաւոր տօն կատարէ եկեղեցին Երուսաղէմի ամի ամի», ըստ Սոզոմենոս պատմիչի (տե՛ս «Բացատրութիւն շարականաց», էջ 503)։

Մեր Եկեղեցին Խաչի գյուտի տոնը կատարում է հոկտեմբեր 26-ի մերձավոր կիրակին, «յեօթներորդ կիւրակէի Խաչվերացի»։ Հույները Գյուտ խաչի հատուկ տոն չունեն. այն միացրել են Վերացման խաչի տոնի հետ և կատարում են սեպտեմբերի 14-ին։ Կաթոլիկներն ունեն Գյուտ խաչի տոնը։ «Հեղինէ առաքեալ կամ ընդ իւր բերեալ ի Հռոմ զման ինչ խաչի և զետեղեալ յեկեղեցւոջ, անդ եղև սկիզբն տօնախմբելոյ զխաչ գիւտն» («Բացատրութիւն շարականաց», էջ 538)։ Բայց ստույգ կերպով հիշվում է, որ կաթոլիկները Ը դարում հաստատեցին այս տոնը, մայիսի 3-ին (նույն տեղում, էջ 539)։ Մեր Եկեղեցում Գյուտ խաչի տոնը, ամենայն հավանականությամբ, հաստատվել է Ը դարում, Սահակ Ձորափորեցու ժամանակ, հետևելով շատ հավանաբար Երուսաղեմի Եկեղեցու սովորության, որովհետև հույները չունեն այդ տոնը, իսկ կաթոլիկներն այն սահմանել են հայերից հետո։ Փաստ է, որ մեր Եկեղեցին սերտ հարաբերության մեջ էր Երուսաղեմի Եկեղեցու հետ։ Այս մասին կան պատմական-մատենագրական բազում փաստեր։ Մինչև անգամ, ըստ հայկական զրույցների, Երուսաղեմի Ս. Տեղյաց ավանդական շինության մեջ մեծ դեր են ունեցել «ամենաբարեպաշտ և գթածասիրտ մեծ թագուհին Հեղինէ, կինն Աբգարու թագաւորին մերոյ», Տրդատ Գ թագավորը, Գրիգոր Լուսավորիչը և Մեծն Ներսեսը։

Է դարի մատենագիր Հերապոլսեցի Անանուս վարդապետը իր «Վասն վանորէից Հայոց որ յԵրուսաղէմ» համառոտ աշխատության մեջ դնում է ցուցակը Երուսաղեմում և նրա շրջակայքում գտնվող հայկական 70 վանքերի, որոնցից շատերը կառուցվել են «ի ժամանակս թագաւորութեան Տրդատայ և ի հայրապետութեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի» (տե՛ս այս մասին նաև Մկրտիչ եպիսկոպոս Աղավնունի, «Ս. Երկրի սրբավայրերի ավանդությունները», Երուսաղեմ, 1936 թ., էջ 414, 424)։

Գյուտ խաչի շարականների կանոնն է «Հրաշակերտ և զօրեղ փայտ խաչի քո Քրիստոս», որտեղ պատմվում է սովորական կերպով խաչի գյուտի պատմությունը։ Ըստ հայ շարականագրի՝ հրեաները «առ ատելութեան», թաքցրել էին «զանթաքչելի զգանձն», այսինքն Քրիստոսի խաչափայտը, որը սակայն գտնվում է «մեծասաստ հրամանաւ և փափաքմամբ թագուհւոյն» («Զայնքաղ Շարական», էջ 395)։

3. «Տօն երեման Ս. Խաչի».—Զատկից հետո, Հինանց Ե կիրակին, մեր Եկեղեցին կատարում է Խաչի երրորդ տոնը, «Տօն երեման Ս. Խաչի» անունով։ Հույները այս տոնը կատարում են մայիսի 7-ին։ Կաթոլիկները չունեն այս տոնը։

351 թվականի մայիսի 7-ին, Կյուրեղ Երուսաղեմացի հայրապետի (315—386 թ. թ.) ժամանակ, Երուսաղեմում, օրը-ցերեկով, երևում է երկնքի վրա խաչի մի հրաշալի լուսանշան, «Գողգոթայեն մինչև Ձիթենեայց լեռ տարածված խաչանման պայծառությամբ, որ ավելի փայլուն էր քան լույսը։ Զայն տեսան ամենքը, ժողովուրդ և կղեր, որոնք եկեղեցի փութալով գոհություն մատուցին Աստուծո, իրենց պարգևված այս հրաշալի մխիթարության համար։ Ժամանակին Երուսաղեմի պատրիարքը, Կյուրեղ, այս առթիվ հատուկ թուղթ մը գրեց Կոստանդինուպոլսո Կոստանդ Բ կայսեր, որ դատապարտված Արիոսականությունը վերականգնելով Եկեղեցվո ներքին խաղաղության դեմ մեծ վտանգ մը կպատրաստեր, և ողոքական քաղցր ոճով բայց խստադատ նկատողությամբ մատնանիշ կըներ անոր՝ իր հոր Մեծն Կոստանդիանոսի պաշտպանած դավանության ուղղափառ ճշմարտությունը, միևնույն ատեն այս երևումեն ալ ապացույց մը հանել փորձելով այդ մասին։ Այս թուղթին թարգմանությունը կկարդացվի մեր Եկեղեցվո մեջ տոնին օրը, Անդաստանի Ավետարանեն առաջ» («Սուրբք և տօնք», էջ 319)։

Խաչի երևման տոնը, որպես զուտ հիշատակությունը պատմական մի դեպքի, չունի իր մասնավոր շարականի կանոնը։

4. «Տօն Վարագայ Ս. Խաչի».— Խաչի տոնների մեջ վերջինն է Վարագա Խաչի տոնը, զուտ ազգային մի տոն, իր սրտառուչ ավանդությամբ, հայկական շնչով։ Թորգոմ պատրիարքը այս տոնը անվանել է Հայկական Խաչի տոնը. «մեր Խաչին տոնն է ան, վասնզի բոլորովին ազգային հիշատակի մը պանծացումն է» («Սուրբք և տօնք», էջ 320)։

Վարագը անունն է Վանա մոտ գտնվող մի սարի։ Ըստ Խորենացու վկայության («Մատենագրութիւնք», Վենետիկ, 1865 թ., էջ 640), Ս. Հռիփսիմե կույսի վրից կախված էր խաչափայտի մասունքից մի խաչ, «մածեալն տէրունական արեամբ»։ Հռիփսիմեն այդ

մասունքը միշտ կրում էր իր վզի վրա, իր ուղևորության ժամանակ։ Եվ երբ մի օր, ընկերների հետ հալածական, սպաստան է գտնում Վարագա լեռան վրա, «վասն կասկածի հալածանաց», կույսը այդ թանկագին սրբությունը ապահով թաքցնում է Վարագա լեռան վրա, ժայռերի մեջ, «հանդէպ Վանի, ի հարաւակուսէ լեռինն», և ընկերների հետ իջնում Վարագից և ուղղվում դեպի Վաղարշապատ, երկու քահանաների հսկողության թողնելով այդ թանկագին սրբությունը։ «Այս ավանդությունը,— գրում է Օրմանյան սրբազանը, —կենդանի պահված էր Վանի կողմերը, վասնզի Վարագը հաջորդաբար ճգնավորներու տեղ եղած է» («Ազգապատում», Ա, էջ 730)։

Է դարի կեսերին, ըստ նույն ավանդության, Վարագա լեռան վրա ճգնող Թոդիկ անուն մի ճգնավորի տեսիլքով հայտնվում է Հռիփսիմե կույսի խաչի տեղը, որ վաղուց մոռացվել էր, պահապան քահանաների մահից հետո։ Թոդիկը և իր աշակերտ Հովելը, երկրպագելուց հետո հայտնված խաչին՝ Վարագա Ս. Նշանին, ինչպես նա կոչվում է ժողովրդական բարբառով, պատմում են եղածի մասին շատերին։ Վարագա Ս. Նշանի հայտնությունը մեծ ոգևորություն է ստեղծում ամբողջ Վասպուրականում, և ապա Հայաստանում։ Ներսես Գ Շինող (640—661 թ. թ.) շտապում է Վարագ, հայտնության վայրը, անվանի հայ իշխան Թեոդորոս Ռշտունու որդի Վարդ սպարապետի հետ և «եղելությունը ստուգելեն ետքը, մեծահանդես տոնախմբություն կկատարե և Վարագա խաչին երևման հիշատակին տարեկան տոն կհաստատե Հայ Եկեղեցվո մեջ» («Ազգապատում», Ա. էջ 739), մեհեկան ամսի 20-ին, այսինքն հոկտեմբերին, Խաչվերացի Գ կիրակին։ Վարագա Ս. Նշանի հայտնությունը պատահել է 660 թվականին, ինչպես վկայում է նաև Թովմա Արծրունին, երբ գրում է. «Յամի ունելութեան Տաճկաց ՉՀայկական աշխարհս» («Պատմութիւն Արծրունեաց», Կ. Պոլիս, 1852 թ., էջ 398)։

Վարագա խաչի տոնի կանոնն է «Նշանաւ ամենայաղթ խաչիւդ քո Քրիստոս» գեղեցիկ շարականը, վերագրված սովորաբար Ներսես Գ կաթողիկոսին։

Շարականի Օրհնության մեջ չկա որևէ ակնարկություն դեպքի մասին, միայն Հարցի առաջին տան մեջ հիշատակվում է, որ «Այսօր ի լեռն Վարագայ» ծագեց «լոյս անճառելի աստուածութեանն» («Ձայնքաղ Շարական», էջ 394)։ Այստեղ ևս շարականագիրը Վարագա Ս. Նշանի հայտնությունը երգում է որպես «զէն ընդդէմ թշնամւոյն», և Աստուծուց խնդրում՝ «պահպանեա սովաւ զհաւատացեալս»։

Օրմանյան սրբազանը, խորհրդածելով Վարագա Ս. Խաչի զուտ ազգային-եկեղեցական նշանակության մասին, գրում է հետևյալը. «Ինչ ալ կարենա ըսվիլ տեսիլքին մեկնության վրա, և ինչ իմաստ ալ տրվի Ս. Նշան կոչման, որով հայերը սովորեցան անվանել Վարագա Խաչը, իրական եղելություն մըն է, որ Խաչափայտի կտոր մըն էր Վարագա Ս. Նշանը, որ հայոց ազգային բարեպաշտության առարկա եղած է առջի օրեն մինչև ցայսօր, և որ ցարդ կպահվի Վանա մեջ։ Հրաշալի երևմամբ հայտնված Հռիփսիմեի Խաչափայտը նախ պահվեցավ Վերին Վարագի եկեղեցին, քիչ ետքը շինվեցան Ներքին Վարագի մեծ վանքը և Ս. Նշանի եկեղեցին և հոն փոխադրվեցավ Խաչափայտի մասունքը։ Իսկ 1021-ին Սենեքերիմ Արծրունի՝ Վասպուրականի թագավորը միասին Սեբաստիա փոխադրեց, և Ս. Նշան վանք մըն ալ շինեց, բայց 1026-ին, անոր մահվընե ետքը, նորեն Ներքին Վարագի եկեղեցին տարվեցավ։ Իսկ 1651 թվին Խոշապի բռնապետներ Ջոմար և Սուլեյման՝ վանքին կողոպուտին հետ հափշտակեցին, բայց անոնց արագ և չարաչար մահվընե ետքը հաջորդին Իբրահիմ ետ դարձուց 1655-ին, և այս անգամ վանեցիք ապահովության համար քաղաքին Ս. Տիրամայր եկեղեցին գրին, որ այնուհետև սկսավ Ս. Նշան կոչվիլ» («Ազգապատում», Ա, էջ 740)։

Ըստ Թորգոմ պատրիարքի վկայության, «մինչև վերջերս հոն (այսինքն Վան քաղաքի Ս. Նշան եկեղեցում) կպահվեր նվիրական այդ մասունքը» («Սուրբք և տօնք», էջ 323)։

Ա. Հ.

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍԻ 21-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։

Սուրբ պատարագին ներկա էին ԱՄՆ-ից Հայրենիք ժամանած ուխտավորները, որոնք վերջում հաղորդվեցին։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 27-ԻՆ, ՇԱԲԱԹ, Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, բարեշնորհ Խորեն սարկավագ Պալյանի ընկերակցությամբ, մեկնեց Թբիլիսի՝ հին տոմարով Ս. Աստվածածնի տոնին պատարագելու և Բանին կենաց քարոզությամբ մխիթարելու հավատացյալներին։

Օգոստոսի 28-ին, կիրակի, սրբազանը հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Թբիլիսիի հայոց առաջնորդանիստ Ս. Գևորգ եկեղեցում, քարոզում է օրվա տոնի մեծ նշանակության մասին և հավարտ սուրբ պատարագի կատարում է «Կարգ խաղող օրհնելոյ»։

Օգոստոսի 29-ին սրբազանը վերադարձավ Մայր Աթոռ։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 28-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Տօն գիւտի գօտւոյ Ս. Աստուածածնի»։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Հարությունվարդապետ Մատենճյանը։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Տօն ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱնայէ»։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Մաշտոց վարդապետ Թաշիրյանը թեմական գործերով և իր պաշտոնատեղին վերադարձավ ամսի 10-ին, շաբաթ օր։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Խաչվերաց։ Մայր Տաճարում եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Սահակյանը։

Սուրբ պատարագին ներկա էին արտասահմանից Հայրենիք ժամանած ուխտավորներ, ինչպես նաև բազմաթիվ հավատացյալներ։ Երեկոյան, գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի հանդիսադրությամբ, Մայր Տաճարի բակում կատարվեց Խաչվերացի հանդիսավոր թափոր-անդաստան։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Յիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

Հավարտ սուրբ պատարագի, Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Հովհաննիսյանի նախագահությամբ, կատարվեց հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»։

***

ՕԳՈՍՏՈՍ ԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ընթացքում Մայր Աթոռ այցելեցին բազմաթիվ ուխտավորներ, տուրիստներ, էքսկուրսանտներ, որոնք եղան Մայր Տաճարում, եկեղեցական արվեստի թանգարանում և մեկնեցին լավագույն տպավորություններով։



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՅԱՆ

(Առաջնորդական փոխանորդ
Արարատյան թեմի)

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԵՐԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ*

ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ոսկան վարդապետ Երևանցու հրատարակությունից հետո Աստվածաշունչը երկրորդ անգամ հրատարակվել է Կոնստանդնուպոլսում 1705 թվականին։

Այս հրատարակության և հրատարակողի անձնավորության մասին Հ. Հովհաննես Զոհրապյանը 1805 թվականին Վենետիկում իր հրատարակած Աստվածաշնչի հմտալից «Նախաբանութիւն առ վերծանօղս» առաջաբանի 7-րդ էջում գրում է հետևյալ տողերը. «...Նմին իրի և երկրորդ անգամ հարկ եղեալ տպագրութեան ողջոյն Աստուածաշունչ մատենին, աղգական նորին Ոսկանայ՝ Պետրոս ոմն Լատինացի անուանեալ, ունելով առ ձեռն պատրաստ զգործիս տպագրական պիտոյից, յար և նման ամենևին օրինակին իւրումն նախնոյն, մանրագիր և անմաքուր՝ տպագրեաց յամին 1705 ի Կոստանդնուպօլիս ի թաղն Պէկօղլի»։ Պետրոս Լատինացու կյանքի և գործունեության մասին մեզ հայտնի չէ ոչինչ. Զոհրապյանը նրան անվանում է Ոսկանի աղգական և «Լատինացի», բայց հայտնի չէ, թե ինչ աղբյուրից է նա քաղել այդ տեղեկությունը։

Լատինացին տպագրական տառերը վերցնելով Ոսկանի տպարանից, 1704 թվականին հաստատվում է Կոստանդնուպոլսում, այնտեղ հիմնելով իր տպարանը։ Լատինացու տպարանից լույս են տեսնում ապա Ստեփանոս Լեհացու թարգմանությամբ «Բուրաստան աղօթից»-ը, «Գիրք տոմարաց»-ը 1709-ին և «Ատենի ժամագիրք»-ը 1712 թվականին, մանրատառ և պատկերազարդ Աստվածաշունչը, որը, սակայն, «չունի արտաքին գրավչություն (Գ. Լևոնյան, «Հայ գիրքը և տպագրության արվեստը», էջ 141)։

Լատինացու հրատարակած Աստվածաշունչը, բաղկացած Հին և Նոր Կտակարաններից, ունի մոտավորապես 1157 էջ։ Տիտղոսաթերթում գրված է.

«ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ Հնոց և Նորոց Կտակարանաց ներ պարունակօղ շարակարգութեամբ նախնեացն մերոց և նշմարտասիրաց թարգմանչաց։ Ի հայրապետութեան Տեառն Նահապետի Կաթողիկոսի Ամենայն Հայոց, ի թագաւորանիստ մայրաքաղաքն Ստամպօլ, ի թաղն Պէկօղլի կոչեցեալ և թուաբերութեան Հայոց ՌՃՆԴ մայիս ամսոյն Ա. և ի թուին Փրկչին 1705»։

Երևանի Պետական հանրային գրադարանը այս հրատարակությունից ունի մեկ օրինակ, իսկ Մատենադարանը՝ չորս օրինակ։

Պետրոս Լատինացու տպագրած Աստվածաշունչը կրկնությունն է Ոսկանյան Աստվածաշնչի և այդ իսկ պատճառով հանգամանորեն կանգ չենք առնում նրա վրա։

---

* *Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1960 թվականի № Ը-ից։*

ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԵՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեծանուն աբբահայր Մխիթար Սեբաստացին, որն իր անունը անմահացրել է իր հիմնած Մխիթարյան միաբանությամբ և իր գրական գործունեությամբ, 1733 թվականին կատարում է հայերեն Աստվածաշնչի երրորդ հրատարակությունը Վենետիկում։

Այդ տպարանից լույս տեսած հայերեն առաջին գիրքն է «Դաշանց թուղթ»-ը (1695 թ.), ապա «Պարտէզ հոգևոր», «Ծամերգութիւն ննջեցելոյ», «Գիրք քրիստոնէական վարդապետութեան» (Մխիթար Աբբայի), «Աստուածաբանութիւն Ալբերտի», «Խթան զղջման», «Կերակուր քահանայից», «Ակն հոգւոյ», «Քահանայ համբակագոյն», «Նոր կտակարան», «Էֆիմերիդէ» և այլն։



ՊԵՏՐՈՍ ԼԱՏԻՆԱՑՈՒ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

Վենետիկում ԺԷ դարում նշանավոր է եղել Անտոն Բարտոլի տպարանը։ Այս տպարանում հայերեն գրքեր տպագրվել են 1695 թվականից և շարունակվել մինչև 1777 թվականը։ Տպարանը տվյալ ժամանակաշրջանում լույս է ընծայել հայերեն «հարյուրից ավելի գրքեր խնամքոտ տպագրությամբ» (Գ. Լևոնյան, էջ 125)։

Ահա և այս տպարանից 1733 թվականին Մխիթար աբբան հրատարակեց իր Աստվածաշունչը։

Մխիթարի Աստվածաշնչի տիտղոսաթերթը այսպես է.

«ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳԻՐՔ Հնոց և Նորոց Կտակարանաց շարակարգութեամբ նախնեաց մերոց և ճշմարտասիրաց թարգմանեաց, զոր զկնի ամաց բազմաց, յամի Տեառն

1666 և ի թուին Հայոց ՌՃԺԵ, հրամանաւ Տեառն Յակոբայ Հայոց Կաթողիկոսի, գրիչակարգեալ և տնատեալ ըստ կատիճացւոց, նաև զնամանայնութիւն հանուրց Գրոց Աստուածաշնչից իրերաց առընթեր՝ կարգեալ



ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀՈՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

Տեառն Ոսկանայ վարդապետի Երևանեցւոյ, և առաջնով տպագրութեամբ ի լոյս ածեալ: Իսկ այժմ նոյնն լաւագոյն թղթովք, ազնուագոյն պատկերօք, գեղեցկագոյն ծաղկագրօք, զգուշագոյն սրբագրութեամբ, և բազմօք ծախիւք՝ վերստին տպագրութեամբ ի լոյս ածեցեալ, աշխատասիրութեամբ և ջանիւ Տեառն Մխիթարայ վարդապետի Սեբաստացւոյ՝ Աբբայ Հայր կոչեցեալոյ: Ի փառս մեծագոյնս Աստուծոյ: Եւ ի յօգուտ մանկանց եկեղեցւոյ: Յամի Տեառն 1733 և ի թուին Հայոց ՌՃՁԲ յունիսի 15: Ի Հայրապետութեան Տեառն Աբրահամու Հայոց Կաթուղիկոսի: Ի Վենետիկ քաղաքի, ի տպարանի Անտոնի Պոմբալի: Հրամանաւ մեծատրաց»:

Մխիթար Սեբաստացու սրտի ցանկութիւնն է եղել, ըստ նրա վկայության, «ի

բազմաց ամաց հետէ տալ տպագրել զԱստուածաշունչ մեր ի փառս Տեառն, և ի յօգուտ ազգին մերոյ. բայց զանց առնէի ձեռնամուխ լինել առ այս գործ, որովհետև ո՛չ էի առբերեալ ի ձեռն իմ զարքայական զԱստուածաշունչն զայն եօթնալեզուեան» (տե՛ս «Բան առ ընթերցօղս և յիշատակարան մատենիս», նույն Աստվածաշնչի 1273 էջում)։

Մխիթար Սեբաստացու առաջ կային մատենագրական և տպագրական բազմաթիվ դժվարություններ։ Հաղթահարելով որոշ մասը այդ դժվարությունների, նա 1732 թվականին ձեռնամուխ է լինում Աստվածաշնչի տպագրության և այն վերջացնում 1735 թվականին. «շնորհիւ և ողորմութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և բարեխօսութեամբ Սրբուհւոյ Աստուածածնին, յամի Տեառն 1735, յամսեանն նոյեմբերի, յանկ ելեալ աւարտեցաւ տպագրումն Աստուածաշունչ մատենիս, ըստ օրինակի տպագրեցելոյ Աստուածաշնչի Ոսկանայ վարդապետի» («Բան առ ընթերցօղս...», էջ 1271)։

Մխիթար Սեբաստացին, Աստվածաշնչի իր տպագրության առթիվ, գրում է. «Զերկուս առաջադրեմ բարեմիտ ընթերցողացդ. որոց առաջինն է զգլխակարգութենէ մերոյս Աստուածաշնչի, զոր արար Ոսկան վարդապետն հրամանաւ Տեառն Յակոբայ Հայոց Կաթուղիկոսի. և զբանից նորին՝ որ առ ընթերցօղս։ Երկրորդն է զսակաւուց մերոց աշխատութեանց՝ զորս ի գործ արկաք առ սրբագրութիւնն, և առ բարւոք տպագրումն սորին» («Բան առ ընթերցօղս...», էջ 1271)։

Մխիթար Սեբաստացին պահում է Աստվածաշնչի Ոսկանյան գլխակարգությունը. «որպէս եդեալ էր նա. նոյնպէս և մեք թողաք» (էջ 1271)։

«... Մերս Աստուածաշունչ,— գրում է Մխիթար Սեբաստացին նույն տեղում,— ըստ գլխոց և ըստ տանցն ի յոմանս գիրս՝ գլխակարգութեանց և տնատմանց Աստուածաշնչին լատինացւոց ո՛չ համաձայնէր. և մինչ զցանկն և զհամաձայնութիւնսն, այսինքն զվկայութիւնս որք են ի լուսանցսն, ի նոցանէ առեալ էր, որքան առ այնս գիրս՝ կամ զցանկն նոցա խախտել պարտ էր, և կամ զկարգ թուոց գլխոց այնց գրոց. մինչ զկարգ բանիցն որք էին ի մեզ ի յայնս գիրս՝ խախտել ո՛չ լինէր։ Վասն որոյ զկարգս գլխոց և բանից, որք էին ի յայնս գիրս՝ անխախտ պահելով՝ միայն զթիւս գլխոց յետ և յառաջ եդ. նաև ոմանց գլխոց զթիւսն երկիցս համանշանեաց. որպէս զի ցանկին լատինականի համաձայնիցին. և աստուստ է, զի ի յայնս գիրս թիւք ոմանց գլխոց յետ և յառաջ են. այսպէս ի գիրս առակացն Սաղոմոնի. ի գիրս Եսթերայ, և Դանիէլի։ Արդ՝ որպէս եդեալ էր նա, նոյնպէս և մեք թողաք և թէպէտ ո՛չ էր մեզ դժուարին զցանկն լատինական համաձայնեցուցանել կարգաց գլխոցն՝ որք ի մեզ են ի յայնս երիս գիրս. և այնու զթիւս գլխոց դնել կարգաւ, բայց ո՛չ արարաք՝ զի մի՛ տարաձայնիցիմք»։

Այնուամենայնիվ Սեբաստացին կատարում է սրբագրություններ Աստվածաշնչի իր տպագրության մեջ, «գոնէ ի լուսանցսն դնելով» ցույց տալով, թե «զիա՛րդ և որո՛վք միջոցիւք ի ծանօթութիւն մեր եկին որոշակի՝ այնք որք ի գրչաց խանգարեցան, և այնք որք պատճառաւ թարգմանութեան մոայլ երևին» (էջ 1273)։

Սեբաստացին վկայում է, որ ինքն իր աշակերտների հետ ենթարկվել է «ծանրագունելի աշխատութեան», շատ է շարշարվել սրբագրության վրա. «թէ զորքանս աշխատանս յանձին կալաք ի սրբագրութենէ ցանկին... թէ զորքանս զգուշութիւնս ի գործ արկաք առ սրբագրութիւն տպագրութեան» (էջ 1273)։ Սրբագրության ժամանակ Սեբաստացու դպրատան աշակերտները կարդում էին Աստվածաշունչը «զիւրաքանչիւրոց լեզուաց և մանաւանդ զյունաց՝ և զասորւոց թարգմանութիւնն տուն առ տուն. և ես ունկն եղեալ այնց՝ հայէի ի յԱստուածաշունչն մեր. և համեմատեալ ենթադրէաք զիւրաքանչիւրոցն. և այսպէս ընթացեալ, ուր ոչ էր ըստ ինքեան ի բնաբանսն մեր պատճառաւ թարգմանութեան դժուարութիւն, և կամ սխալանք ինչ ներսպրդեալ ի գրչաց՝ ամենեին ընթանային բանք Աստուածաշնչին մերոյ համաձայնք, և բառ առ բառ համեմատք լինաց և կամ ասորւոց. իսկ այլոց թարգմանութեանց էին համեմատք՝ միայն որքան առ միտս բանին, և ո՛չ բառ առ բառ, որովհետև յայնց ո՛չ են թարգմանեցեալք։ Եւ որքան այսպէս համաձայն ընթանային՝ հրճուէին սիրտք մեր ի վերայ այնց. և մեծագոյն զարմանք կալնոյր զմեզ ի վերայ ուշիմագունեղի և գովելագունեղի թարգմանութեան մերոց թարգմանչաց, որք յայնպիսում ժամանակի, յորում գրաբառ լեզուն մեր գոլով նորածին և տակաւին ի յօրորոցի, ի հելլէն բարբառոյ ի մերս բարբառ այնպիսեաւ յարմարագունեղիւ ոճիւ անդրաբերին զայնս։ Իսկ ուր ուրեք ոչ համաձայնէին ոմանք բանք, ո՛չ յունաց, և ո՛չ յասորւոց. նաև ո՛չ այլոց թարգմանութեանց. ո՛չ ի բառս, և ո՛չ առ միտս բանին, զայնս տանէաք գոլ ի սխալմանց գրչաց. որք նաև ի ձեռն զօրութեանց բանիցն բացայայտաբար երևէին։ Քան զի ի նոցունց՝ այնք որք իբրու թէ զիմն բացայայտէին՝ զընդդէմն այլոց բանից Աստուածաշնչին նշանակելով բացայայտէին. և այնու երևէին գոլ սխալանք գրչաց։ Իսկ այնք որք զոչ

իմն բան նշանակէին, ըստ ինքեանց ի սխալմանց գրչաց գոլ երևէին» (էջ 1273)։

Սեբաստացին իր Աստվածաշնչի տպագրության վրա կատարում է «զանխնայ ծախս, առ բարւոք գոլն թղթոյն, պատկերաց, և տպագրութեան մերոյս Աստուածաշնչի» (էջ 1273)։

Մխիթար Սեբաստացու հրատարակած Աստվածաշունչը 1280 էջանոց մեծադիր քառածալ հրատարակություն է։ Հ. Հովհաննես Զոհրապյանը 1805 թվականին Վենետիկում իր հրատարակած Աստվածաշնչի առաջաբանում գրում է հետևյալը Սեբաստացու Աստվածաշնչի հրատարակության մասին. «Իսկ յետ ժամանակաց մերս բազմարդիւն Մխիթար աբբահայր տեսեալ զնուազութիւն երկուց այսոցիկ տպագրութեանց (Ոսկանի և Պետրոս Լատինացու—Վ. Վ. Տ.) յազգի մերում, որով դժուարագիտ և մեծագին եւ [illegible] անկարանայր և ինքն ի

ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀՈՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՁՈՐՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉՆԵՐԸ

ՀԱՅԿ Մ. Ա. Ի. Ա. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

պէտս աշակերտացն իւրումն դպրատան շափաւոր ծախիւք ստանալ, խորհեցաւ միւս անգամ տպագրութեամբ այնմ դարման մատուցանել։ Եւ զի պակասէին առ նմա հայկական գրչագիր օրինակք առ ուղղագրութիւն Փարիզու (որ դեռևս ի յարգի էր ի ժամանակին) և ինչ ինչ որ անտանելի թուեցաւ նմա՝ ի բնաբանին մուծեալ այսպիսի իմն դուզնաքեայ այլայլութեամբ՝ ըստ այնմ Ոսկանեան օրինակի՝ վայելչագոյն և յաւէտ պայծառ

ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀՈՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԷՋԸ

վրիպանացն՝ զորս ծանեաւ յՈսկանեան օրինակի անդ. վասն այնորիկ առ ժամն ըստ մարթելոյ հայթհայթեալ զուղղագրութիւն նոցին ի լուսանցս, առեալ ի լատին թարգմանութենէ անտի եւթնալեզուեան մատենի յօրինուածով զարդուց, գործակցութեամբ ձեռնասուն աշակերտաց իւրոց՝ երրորդն անգամ ի լոյս ընծայեաց զԱստուածաշունչ մատեանն՝ ի Վենէտիկ յամին 1733։ Այլ քանզի հիմն Մխիթարեանս այսորիկ տպագրութեան

եղև Ոսկանեանն, ապաքէն ոչինչ աւելի քան զնորայն գերազանցութիւն մարթ էր ունել սմա ըստ հարազատութեանն, այլ տակաւին մնային նոյն թերութիւնք որ ինչ ի յաղբիւրն անդ» (էջ 7—8)։

Այնուհետև Հ. Զոհրապյանը իրավացիորեն քննադատում է Ոսկանյան Աստվածաշնչի մի քանի գրքերի լեզուն, հայկաբանությունը, այն է՝ «ողջոյն գիրս Սիրաքայ՝ և Զորրորդ Եզրասայ՝ հանդերձ թղթով ինչ Երեմիայ մարգարէի, իբրև ամբողջական մասունս թարգմանեալ ի լատինականէն՝ իւրովն իսկ թերուսումն հմտութեամբ բարբառոյն այնորիկ, յաւել ի մերս խուժադուժ հայկաբանութեամբ, օրինակ իմն իբրև կապերտ քրձոյ առ կերպասիս ագուցեալ» (էջ 8)։

Հ. Զոհրապյանի այս արդար քննադատությունը վերաբերում է նաև Մխիթար Սեբաստացուն, որի Աստվածաշնչի տպագրության հիմք է ծառայել, ինչպես տեսանք, Ոսկանյան օրինակը։ Այնուամենայնիվ Աստվածաշնչի 1733 թվականի Մխիթարյան հրատարակությունը իր մաքուր տպագրությամբ, սրբագրություններով, նկարներով, ընտիր թղթով իր մասնավոր տեղն է գրավում Աստվածաշնչի հայերեն տպագրության պատմության մեջ, որպես «ի փառս Տեառն, և ի յօգուտ ազգին մերոյ» եղած հրատարակություն։

Պատմաբան Լեոն հետևյալն է գրում Մխիթար Սեբաստացու հրատարակած Աստվածաշնչի մասին. «...Իբրև տպարանական գործ՝ նա ներկայացնում էր մի աննախընթաց հոյակապություն, գեղեցիկ թուղթ, մաքուր տպագրություն, խնամքով սրբագրություն... Բայց այս գործի մի մեծ թերությունն այն էր, որ Ս. Ղազարի աբբահայրը դարձյալ վախեցել էր լատինամոլ կղերականությունից։ Ձեռքի տակ չունենալով գերշագիրներ, նա արտատպեց Ոսկան վարդապետի տպագրած Աստվածաշունչը։ Իսկ մենք արդեն գիտենք, որ Ոսկանը մեկն էր այն լուսավորչական հոգևորականներից, որոնք յուրացրել էին լատինամոլների հայերենը, և այնքան չափազանցության էր հասել, որ հայոց հին գրքերը սրբագրում էր լատինացրած հայերենի ձևերի համաձայն։ Այսպես էր և նրա Աստվածաշունչը։ Մխիթարը շատ քիչ բան ուղղեց Ոսկանի նորմուծություններից, ավելին անելու համարձակություն չունեցավ» («Հայոց պատմություն», Գ, էջ 1004)։

Լեոնյանը, տալով իր գնահատականը Ոսկանի և Մխիթար Սեբաստացու Աստվածաշունչներին, գրում է. «Երբ համեմատության առնենք Ոսկանի և Մխիթար աբբայի հրատարակությունները, անկասկած, առավելությունը տալու ենք երկրորդին՝ գեղարվեստական ձևավորմամբ, պղնձափոր պատկերների ընտիր տպագրությամբ և սպիտակ բարակ թղթով» (էջ 126)։

Մխիթար աբբայի հրատարակած Աստվածաշնչի մեջ կան շատ նկարներ, որոնցից 81 հատը Հին Կտակարանում՝ բիբլիական թեմաներով, իսկ 73-ը Նոր Կտակարանում՝ Քրիստոսի և առաքյալների կյանքի դրվագներից։

Ոսկան վարդապետ Երևանցու, Պետրոս Լատինացու և Մխիթար Սեբաստացու հրատարակած Աստվածաշունչները, այնուամենայնիվ, հրապարակի վրա մնացին մինչև 1805 թվականը, երբ Վենետիկում լույս տեսավ Հ. Հովհաննես Զոհրապյանի հրատարակած Աստվածաշունչը։

Երևանի հանրային գրադարանը Ոսկանի հրատարակած Աստվածաշնչից ունի 5 հատ, իսկ Մատենադարանը՝ 12 հատ։ Մխիթար Սեբաստացու հրատարակած Աստվածաշնչից Հանրային գրադարանը ունի 7 հատ, Մատենադարանը՝ 5 հատ, մեկ օրինակ էլ կա Ս. Էջմիածնի գրադարանում, էլ չենք ասում այն ընտանիքների մոտ եղած օրինակները, որոնք մենք տեսել ենք։

ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՉՈՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1805 թվականին, դարձյալ Վենետիկում, կատարվեց հայերեն Աստվածաշնչի չորրորդ հրատարակությունը, որը, չնայած չորրորդ տեղն է գրավում Աստվածաշնչի հրատարակության հերթականության մեջ, սակայն, հրատարակության գիտական պատրաստության տեսանկյունից՝ իբր ակադեմիական հրատարակություն, առաջինն է իր տեսակի մեջ, համեմատած Աստվածաշնչի նախորդ և հետագա հրատարակությունների հետ։

Այդ լուրջ, գիտական գործը կատարել է Մխիթարյան միաբան, լեզվագետ և պատմաբան Հ. Հովհաննես Զոհրապյանը, որի անունով Աստվածաշնչի չորրորդ հրատարակությունը կոչվեց Զոհրապյան։

Հ. Հովհաննես Զոհրապյանը, որպես հմուտ բանասեր, նախքան հայերեն Աստվածաշնչի չորրորդ հրատարակությունը, ձեռագրերի համեմատությամբ և բնագիրը լուսաբանող քննական ծանոթագրություններով հրատարակել էր Ղազար Փարպեցու պատմությունը, Մովսես Խորենացուն վերագրված «Գիրք պիտոյից»-ը և ուրիշ գործեր։ Նա բնիկ կոստանդնուպոլսեցի էր, «առաջին հայ բանասերը և հայագիտության ասպարեզում աշխատող հայ ռահվիրան» (Լեո, «Հայոց պատմություն», Գ, էջ 1011)։

Զոհրապյան Աստվածաշունչը, որպես գիտական հրատարակություն, մինչև այժմ

լավագույններից մեկն է համարվում իր տեսակի մեջ, Աստվածաշնչի հայերեն հրատարակությունների շարքում:

Զոհրապյան Աստվածաշնչի անվանաթերթն է.

«ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ Հին եւ Նոր Կտակարանաց, ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց, ի հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ: Նորոգապէս ի լոյս ընծայեալ յրենարելագոյն գրչագիր գաղափարէ՝ համեմատութեամբ այլ և այլ օրինակաց, հանդերձ կարեւոր ծանօթութեամբք բնաբանին:

Շարժատասիրութեամբ Տ. Յովհաննու Զոհրապեան Վարդապետի, ի միաբանութենէ Մեծին Մխիթարայ Բարձրագոյն Դպրոցի:

Տպագրեալ հրամանաւ Տ. Տ. Սարգիսի Աղոց Աթոռակալ Արքեպիսկոպոսի, և Առաջնորդի Ուխտի Սրբոյ Ղազարու:

1805 Ի Վենետիկ. ՌՄԴ.

Ի Պատրիարքարանի Սրբոյ Ղազարու:

ԶՈՀՐԱՊՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

Մեծին Մխիթարայ բարձրագոյն դպրոցի եւ առաջին Սրբոյն: Տպագրեալ հրամանաւ Տեառն Տեառն Սարգիսի Աղոց աստուածապատիւ արքեպիսկոպոսի, եւ առաջնորդի ուխտին Սրբոյն Ղազարու: 1805, ի Վենետիկ, ՌՄԴ, ի գործարանի Սրբոյն Ղազարու»:

Զոհրապյան Աստվածաշունչը ունի հետևյալ բովանդակությունը. առաջին էջը՝ տիտղոսաթերթ, 3—11 էջերը՝ «Նախաբանութիւն առ վերծանողս», որպես առաջաբան, 12-րդ էջը Հին և Նոր Կտարականների գրքերի բովանդակությունն է՝ «Ցուցակ գրոց Աստուածաշունչ մատենիս». ապա էջ 1—646՝ Հին Կտակարան, 647—836՝ Նոր Կտակարան. վերջում 1—29 էջերը՝ հավելված. 30-րդ էջը՝

«Ցուցակ-վրիպակաց առաջիկայ տպագրութեան մատենիս»։

Հ. Հովհաննես Զոհրապյանի արժեքավոր, կուռ «Նախաբանութիւն առ վերծանողս» առաջաբանը բաղկացած է երեք մասից, որտեղ հանգամանորեն և պատմական ստույգ տվյալներով խոսվում է՝

ա. Աստվածաշնչի եբրայական բնագրի, կազմության, Յոթանասնից թարգմանության, Օրիգենեսյան վեցիջյանի («այս վեցիջեանս օրինակ Եթանասնից քան զամենեսին նախամեծար համարեալ, որպէս գլխովին անթերի և հաւատարմագոյն գաղափար սուրբ մատենից ընկալեալ եղև յամենեցունց»), ապա Սահակ-Մեսրոպյան թարգմանության մասին, երբ «ի խնամոց բարգաւաճեալ ուսման իմաստից ի մերումս Հայաստան աշխարհի, սատարութեամբ ճառագայթաւէտ լուսաւորաց Ազգիս՝ սրբոցն Սահակայ և Մեսրոպայ, առաջին փոյթ եղև նոցա բազմաշխատ հայթհայթանօք յօրինուած գրոց հայկականս բարբառոյ, առ ի թարգմանութիւն աստուածային մատենից անսայթաք կատարելոց... ընտիր հայկաբանութեամբ» (էջ 3—5)։

բ. «Հանգամանք գրչագիր օրինակաց և Ոսկանեան տպագրութեան»։

Առաջաբանի այս երկրորդ մասում (էջ 5—8) նախ խոսում է հանգամանորեն Աստվածաշնչի իր հրատարակության առթիվ ընտրած գրչագիր օրինակի հարազատության և ճշգրտության մասին՝ «նախ ծանօթս տալ վասն գրչագիր օրինակաց մերոց, և զորպիսութենէ տպագրութեանն Ոսկանայ և ապա զեղանակէ մերումս առաջիկայիս» (էջ 5)։

Զոհրապյանը իր հրատարակության համար որպես «տիպ գաղափարի» ընտրել է ԺԴ դարի «առաջինն ի գրչագիրս» մի ձեռագիր, «երկիջեան, բոլորագիր, ամբողջ ծայրէ ի ծայր առանց ինչ պակասութեան թերթից՝ ի մագաղաթէ», գործ «հմուտ և արուեստաւոր գրչի, որով և գերազանց էր գրեթէ քան զամենայն գրչագիր մատեան։ յածեալս առ մեօք» (էջ 5)։

Զոհրապյանի ընտրած այս ձեռագիրը, որը Կիլիկյան էր, գրիչը՝ Գևորգ վարդապետ, դառնում է «բուն գաղափար... մերումս առաջիկայ տպագրութեան» (էջ 6)։

Զոհրապյանն իր ընտրած այս ընտիր ձեռագրի «գաղափարը» համեմատում է 8 այլ ընտիր ձեռագրերի և Ոսկանյան Աստվածաշնչի տպագրված օրինակի հետ, իսկ չորս Ավետարանների համար օգտագործել է 30 այլ ձեռագիր և հին Ճաշոցներ։ Զոհրապյանը մանրամասն նկարագրել է այդ ձեռագրերը (էջ 6—7)։

Զոհրապյանը խոսում է Ոսկանյան Աստվածաշնչի տպագրության և Ոսկան վարդապետի կատարած մեծ գործի մասին, որով «անուն Ոսկանայ պատուեալ ծաւալեցաւ յազգիս որպէս բազմերախտ աշխատաւորի և մեծիմաստ վարդապետի» (էջ 7)։ Բայց, արդարորեն, ինչպես նշեցինք վերև, Զոհրապյանը քննադատում է Ոսկանի «զիւրն կարծեցեալ ուղղաբանութիւնս... որով Աստուածաշունչ իւր ըստ իմաստիցն ձևացաւ խառնարան այլ և այլ թարգմանութեանց՝ հելլենականին և լատինականին, իսկ ըստ բերթողական արուեստին՝ խառնաձայնութիւն նախնի հայկական վայելչաբանութեան՝ ընդ նորահնար օտարալուր բարբառոյ» (էջ 8)։

գ. «Եղանակ կազմութեան առաջիկայ տպագրութեանս» (էջ 8—11)։

Այս ենթավերնագրի տակ Զոհրապյանը խոսում է, որ «զտարադէպ հանգամանաց տպագրութեան Ոսկանայ յայտ յանդիման երևեալ անհրաժեշտ կարևորութիւն նորակերտ տպագրութեանս» (էջ 8), ապա շարադրում է իր հրատարակության պատմությունը. «մնաց մեզ արդ ծանօթս տալ բարենախանձ վերծանողաց մերումս զեղանակէ սորին ձեռնարկութենէ, զոր ըստ ճշգրիտ կանոնաց հաւատարմութեան գուն գործեցաք կատարել յազնուագոյն գրչագիր գաղափարէ»։

Զոհրապյանը պահում է իր ընտրած ձեռագրի «զնոյն թիւ և զկարգ գրոցն» և դուրս է թողնում առանց խղճահարության՝ «ոչ խղճեցաք», «զգիրսն Սիրաքայ», որը մուծել էր Ոսկանը հետևելով Վուլգատային, մինչ հնագույն հայերեն ձեռագրերում չկար, և Զոհրապյանը եզրակացնում է՝ «կամեցեալ մեր հետազօտել զհանգամանաց այնր գրոց՝ զոր այսօր ունիմք ի հայկականս, բայց ի հատընտիր իմն եղանակաւ թարգմանութենէ նորա՝ բաղդատեալ ընդ յունականին, նա և կարի զանազանութիւն տեսանեմք ոճոյ շարադրութեանն յայլոց նմանատիպ գրոց անտի՝ զոր արարին նախնի թարգմանիչք մեր. մինչ զի և ո՛չ նոցին կրտսերագոյն աշակերտաց համարձակելի է մեզ ընծայել»։

Ինչպես ծանոթ է, Սիրաքը մաս չի կազմել մեր կանոնին։ Սիոն կաթողիկոսը երբ Ը դարում գումարում է Պարտավի ժողովը՝ որոշելու համար Ս. Գրոց կանոնը, ժողովը կանոնից դուրս է գցում Սիրաքը, որպես Սողոմոնյան առակների մի տարբերակը։ Սիրաքը առաջին անգամ մտնում է Ոսկանի հրատարակության մեջ։

Ապա Զոհրապյանը նշում է, որ ինքը հարմար է դատել՝ «շահաւէտ վարկաք՝ դնել Հին ու Նոր Կտակարանների յուրա-

քանչյուր գրքից առաջ «զյառաջաբանս կամ զնախադրութիւնս և զցանկս գլխոց», «հանդերձ նոցին համեմատեալ թուագրովք որ ի լուսանցս անդ բնաբանին, ըստ որում ունէին կարգեալ առ հասարակ ամենայն գրչագիր օրինակք», ինչ որ զանց էր առել Ոսկեռագրեր, «զյաճախութիւն գրչագիր օրինակաց», ստանալու համար «կատարելագոյն» օրինակը որպես տեքստ հրատարակության, այլ նաև «ուղղագրել» է «նոքօք զառաջի եդեալս օրինակ ի վրիպանաց գրչին՝... այլ և բաց ի ճշգրիտ ծանօթութեանց

ԶՈՀՐԱՊՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԷՋԸ

կանը իր հրատարակության մեջ, «իբր աւելորդս և անպիտանս»։

Զոհրապյանը մտադրել է «ի լոյս ածել զհարազատ հայկականս թարգմանութիւն Աստուածաշունչ մատենիս՝ ըստ ընտրելագոյն օրինակի»։ Դրա համար, նա ոչ միայն բաղդատել է իր ձեռքի տակ գտնվող ընտիր զեղանակէ գրչութեան նորին» և հարմար է դատել «նա ևս զտարբերութիւնս այլոց օրինակաց առ նմին մերձ դնել ի պէտս մերոյ ուսումնասիրաց»։

Այս բոլոր հանգամանքները, որոնք նշվում են Զոհրապյանի առաջաբանում, իրավունք են տալիս եզրակացնելու, որ արդարև

Զոհրապյանի հրատարակած Աստվածաշունչը գիտական լուրջ հրատարակություն է, հայկական հարազատ թարգմանություն։

Զոհրապյան Աստվածաշնչի հրատարակությամբ և նրա օգտագործած ձեռագրերի բաղդատական ուսումնասիրությամբ զբաղվել է Մայր Աթոռի միաբան Մեսրոպ վարդապետ Մագիստրոսը իր «Պատմություն Սուրբ Գրոց հայկական թարգմանության» դիսերտացիոն ռուսերեն աշխատության մեջ։ Մեսրոպ Մագիստրոսը, շատ բարձր գնահատելով հանդերձ Զոհրապյանի կատարած աշխատանքի գիտական արժեքը, անում է հետևյալ դիտողությունները. «Նրա աչքում ամենակարևորն է հանդիսանում հիմնական ձեռագիրը՝ այն է SK³, նա նրան տալիս է նախապատվությունը, իսկ մյուս ձեռագրերի տարընթերցվածքները նա տալիս է ծանոթագրությունների մեջ։ Նրա մոտ ձեռագրերը հարկ եղածին պես չեն խմբավորված, անուններ չունեն, այլ համարվում են հետևյալ կերպ. SK³ ձեռագիրը անվանված է «օրինակ». Նրա ակնհայտնի սխալները ուղղվում են բացառապես այն դեպքերում, երբ մյուս բոլոր ձեռագրերը նույն ընթերցվածքն ունեն։ Իսկ եթե ձեռագրերի կեսը, կամ թեկուզ երկուսը օրինակից տարբեր ընթերցվածք ունեն, ապա այդ ծանոթագրության մեջ նշվում է հետևյալ կերպ. «Ոմանք այսպէս, կամ այնպէս», իսկ եթե «օրինակ»-ի հետ չեն համաձայնում կեսից ավելի ձեռագրերը, այդ նշվում է. «բազումք այսպէս կամ այնպէս»։ Այսպիսի խմբավորումը ոչ մի հնարավորություն չի տալիս իմանալ, թե այդ որ ձեռագրերը միասին վերցրած կազմում են «ոմանք» կամ «բազումք» խմբերը։

Այսպիսով մենք ունենք այդ ութը ձեռագրերի և Ոսկանի հրատարակության բոլոր տարընթերցվածքները, բայց Զոհրապյանի նշումների տարօրինակ եղանակի պատճառով մենք չենք կարող իմանալ, թե որ ձեռագիրը ինչպիսի տարընթերցվածք ունի։ Եվ եթե նրա հրատարակության մեջ կան թերություններ, ապա այս գլխավոր թերություններից մեկն է։ Նա ձգտել է վերականգնել հին տեքստը, որի համար հիմք է հանդիսացել ձեռագրի մի «օրինակ, գրված ստոյգ սեպհական ձեռամբն Գէորգայ», և թեև Զոհրապյան չգիտե, թե ո՞վ է այդ Գևորգը, բայց ճիշտ է կռահել, որ ձեռագիրը կիլիկյան ծագում ունի և հենց այդ պատճառով է այն համարում կատարյալ։ Նա չգիտեր և չէր էլ կարող իմանալ, որ հենց այդ ծագումը պիտի նրան զգուշություն և կասկածամտություն ներշնչէր, այդ դեպքում նա չէր ասի, թե իր ձեռքի տակ ունի «հունարեն ամենաստույգ օրինակի ճշգրիտ թարգմանությունը և լավագույն ձեռագիրը»։ Ճիշտ այսպես էլ առաջաբանում առաջ բաշված նրա դրույթներից շատերը քննադատության չեն դիմանում։ Նրանցից են՝ նրա կարծիքը Աստվածաշնչի երկրորդ թարգմանության մասին հունարենից, նրա այն հայացքը, թե կիլիկյան շրջանի ձեռագրերը կատարյալ են, թե Հին Կտակարանի ցանկը և նախաբանները թարգմանված են ուրիշ լեզվից, հետևապես և այն, թե հայերեն թարգմանությունը կատարելություն է։ Զոհրապյանի մտքերի մեջ այս հիմնական դրույթները շատ բանով փոփոխված են կամ մերժված, էլ չենք խոսում Աստվածաշնչի բուն բնագրի մասին ունեցած նրա հայացքի մասին։ Բայց Զոհրապյանի երախտիքը հայերեն Աստվածաշնչի բնագիրը կազմելու պատմության մեջ անժխտելի է։ Նա առաջինն էր, որ տվեց (ես ինձ թույլ եմ տալիս օգտագործել այսպիսի մի տերմին) Կիլիկյան Աստվածաշնչի տեքստը, այնպես, ինչպես որ այն կարդում էին հայերը 13-րդ դարից սկսած» (Մեսրոպ վրդ. Տեր-Մովսիսյան, հիշված աշխատությունը, էջ 38)։

Մենք հատկապես կանգ առանք Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանի բացատրությունների վրա, որովհետև նա ձեռագրերի հմուտ մասնագետ է։ Զոհրապյանի Աստվածաշունչը իր բովանդակությամբ և գրքերի հերթականությամբ տարբերվում է իր նախորդ երեք հրատարակություններից։ Զոհրապյանի Աստվածաշունչը 12-րդ էջում ունի «Ցուցակ գրոց Աստուածաշունչ մատենիս ըստ կարգի առաջիկայ կազմութեանս»։ Ապա բերվում են Հին Կտարականի գրքերը հետևյալ դասավորմամբ. «Ծնունդք, Ելք, Ղևտական, Թիւք, Երկրորդումն օրինաց, Գիրք Յեսուայ որդւոյ Նաւեայ, Դատաւորք, Հռութ, Թագաւորութեանց առաջին, Թագաւորութեանց երկրորդ, Թագաւորութեանց երրորդ, Թագաւորութեանց չորրորդ, Մնացորդաց առաջին, Մնացորդաց երկրորդ, Գիրք Եզրի առաջին, Եզրայ երկրորդ, Բանք Նեեմայ որդւոյ Աքազիայ, Եսթեր, Յուդիթ, Տոբիթ, Գիրք առաջին Մակաբայեցւոց, Գիրք երկրորդ Մակաբայեցւոց, Գիրք երրորդ Մակաբայեցւոց, Գիրք Սաղմոսաց Դաւթի, Առակք Սողոմոնի, Բանք Ժողովողին, Երգ երգոց, Իմաստութիւն Սողոմոնի, Գիրք Յոբայ, Մարգարէութիւն Եսայեայ, Մարգարէութիւն Ովսեայ, Մարգարէութիւն Ամովսայ, Մարգարէութիւն Միքիայ, Մարգարէութիւն Յովելայ, Մարգարէութիւն Աբդիու, Մարգարէութիւն Յովնանու, Մարգարէութիւն Նաւումայ, Մարգարէութիւն Ամբակումայ, Մարգարէութիւն Սոփոնիայ, Մարգարէութիւն Անդեայ, Մար-

գարէութիւն Զաքարիայ, Մարգարէութիւն Մաղաքիայ, Գիրք Երեմիայ մարգարէի, Թուղթ Բարուքայ, Ողբք Սրբոյն Երեմիայ մարգարէի, Մարգարէութիւն Դանիէլի, Մարգարէութիւն Եզեկիէլի»։ Նոր Կտակարանի գրքերը տրվում են հետևյալ դասավորությամբ. «Աւետարան ըստ Մատթէոսի, Աւետարան ըստ Մարկոսի, Աւետարան ըստ Ղուկասու, Աւետարան ըստ Յովհաննու, Գործք Առաքելոց, Թուղթ Յակոբայ կաթուղիկէ, Թուղթ Պետրոսի առաջին, Թուղթ Պետրոսի երկրորդ, Թուղթ Յովհաննու առաջին, Թուղթ Յովհաննու երկրորդ, Թուղթ Յովհաննու երրորդ, Թուղթ Յուդայի կաթուղիկէ, Պաւղոսի առաքելոյ առ Հռովմայեցիս Թուղթ, Առ Կորնթացիս առաջին, Առ Կորնթացիս երկրորդ, Առ Գաղատացիս, Առ Եփեսացիս, Առ Փիլիպեցիս, Առ Կողոսացիս, Առ Թեսաղոնիկեցիս առաջին, Առ Թեսաղոնիկեցիս երկրորդ, Առ Եբրայեցիս, Առ Տիմոթէոս առաջին, Առ Տիմոթէոս երկրորդ, Առ Տիտոս, Առ Փիլիմոն, Յայտնութիւն Սրբոյն Յովհաննու առաքելոյ»։ Վերջում իբրև «յաւելուած» բերվում են «Սի-



ՋՈՀՐԱՊՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀՈՎՀԱՆՆՈՒ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՆԿԱՐՆԵՐԻՑ

տարան ըստ Մարկոսի, Աւետարան ըստ Ղուկասու, Աւետարան ըստ Յովհաննու, Գործք Առաքելոց, Թուղթ Յակոբայ կաթուղիկէ, Թուղթ Պետրոսի առաջին, Թուղթ Պետրոսի երկրորդ, Թուղթ Յովհաննու առաջին, Թուղթ Յովհաննու երկրորդ, Թուղթ Յովհաննու երրորդ, Թուղթ Յուդայի կաթուղիկէ, Պաւղոսի առաքելոյ առ Հռովմայեցիս Թուղթ, Առ Կորնթացիս առաջին, Առ Կորնթացիս երկրորդ, Առ Գաղատացիս, Առ Եփեսացիս, Առ Փիլիպեցիս, Առ Կողոսացիս, Առ Թեսաղոնիկեցիս առաջին, Առ Թեսաղոնիկեցիս երկրորդ, Առ Եբրայեցիս, Առ Տիմոթէոս առաջին, Առ Տիմոթէոս երկրորդ, Առ Տիտոս, Առ Փիլիմոն, Յայտնութիւն Սրբոյն Յովհաննու առաքելոյ»։ Վերջում իբրև «յաւելուած» բերվում են «Սիրաք, Խօսք Սիրաքայ, Եզր երրորդ, Աղօթք Մանասէի, Թուղթ Կորնթացւոց առ Պաւղոս, Հանգիստ Յովհաննու, Աղերս Եփթաղի»։

Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանը այս դասավորումը բնորոշում է հետևյալ ձևով. «Այս... Կիլիկյան շրջանի հայկական Աստվածաշնչի կանոնի ճշգրիտ վերարտադրությունն է, այն տարբերությամբ միայն, որ Զոհրապյանի մոտ հավելվածում դրված

գրքերը ձեռագրերում գտնվում են բուն տեքստի մեջ, թեև հանդիպում են նաև ձեռագրեր, որոնց մեջ բացակայում է այս կամ այն պարականոնը։ Նա առանձին տպագրեց միայն հայերեն ձեռագրերում եղած Հին Կտակարանի յուրաքանչյուր գրքի վերնագիրն ու նախաբանը, մի բան, որ չէին արել ո՛չ Ոսկանը, ո՛չ էլ մյուսները» (Մեսրոպ վրդ. Տեր-Մովսիսյան, էջ 35)։

Իրոք որ շատ մեծ է Զոհրապյանի երախտիքը հայերեն Աստվածաշնչի հրատարակության գործում, որպես Աստվածաշնչի գրական հրատարակություն՝ հնագույն ընտիր ձեռագրերի համեմատությամբ և քննական ծանոթագրություններով։

Մեսրոպ վարդապետ Մագիստրոսը, իր վերոհիշյալ աշխատության մեջ, եզրակացնում է. «Աստվածաշնչի քննական տեքստի ապագա հրատարակիչը կարող է վստահել նրա հավաքած տարընթերցվածքների հարուստ նյութերին և նրա, թեև համառոտ, բայց օգտակար ծանոթություններին։ Նա հնարավորություն տվեց եվրոպական բոլոր գիտնականներին ավելի ճիշտ աչքերով նայել Աստվածաշնչի հայերեն տեքստի վրա։ Ինչպես մենք տեսանք, նրա առաջաբանը շոշափում է Աստվածաշնչի ընդհանուր հարցերը՝ հայերեն օրինակի հարցը լուսաբանելու նպատակով։ Այդ հարցի առթիվ հետագայում ավելի մանրամասն գրեց Զարբհանալյանը, բայց նա իր դատողությունների մեջ Զոհրապյանից դենը չգնաց» (Մեսրոպ վրդ. Տեր-Մովսիսյան, էջ 38)։

Հ. Հովհաննես Զոհրապյանի հրատարակությունը արժեքավոր է վերոհիշյալ արժանիքներով և բովանդակալից, կուռ առաջաբանով՝ «Նախաբանութիւն առ վերծանողս», որն ինքնին առանձին մի հմտալից, արժեքավոր ուսումնասիրություն է Աստվածաշնչի հայերեն գրականության մեջ։

ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածաշնչի հայերեն հինգերորդ տպագրությունը կատարվել է 1817 թվականին, Սանկտպետերբուրգում։

Այս հրատարակության տիտղոսաթերթն է. «ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳԻՐՔ Հնոց եւ Նորոց Կտակարանաց շարակարգութեամբ նախնեացն մերոց եւ ճշմարտասիրաց թարգմանչաց։ Ի հայրապետութեան Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տեառն Եփրեմայ Սրբազնասուրբ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց։ Եւ յառաջնորդութեան Ռուսաց երկրի ամենայն ազգիս Հայոց Տեառն Յովհաննու առաքելաշափիւ Սրբազան Արեի Եպիսկոպոսի, որոյ վերահսկութեամբ իսկ տպեցաւ Աստուածային Մատեանս, ի յօգուտ մանկանց Եկեղեցւոյ։ Ջանիւք եւ արդեամբք Ռուսաց Բիբլիական ժողովոյն։ Յամի Տեառն 1817. ի սեպտեմբերի 1։ Իսկ ի թուին Հայոց՝ ՌՄԿԶ։ Կայսերական հրամանաւ հաստատեալ տպարանի, սարկաւագ Յովսէփ Յոհաննիսեանի՝ որ ի Սանկտպետերբուրգ»։

Բարգեն կաթողիկոսն այս հրատարակության մասին ունի հետևյալ շատ սեղմ բնորոշումը. «Այս հրատարակությունը արտատպությունն է Ոսկանի օրինակին։ Զարմանալի է, որ Զոհրապի հրատարակության չեն հետևած» («Հուշարձան Աստվածաշնչի հայերեն թարգմանության հազար հինգ հարյուրամյակին», Երուսաղեմ, 1938 թ., էջ 416)։

Այնուամենայնիվ կան Ոսկանի և Սանկտպետերբուրգյան այս հրատարակությունների միջև Հին և Նոր Կտակարանների գրքերի դասավորման որոշ տարբերություններ, մի շարք գրքերի ետևառաջությունները։ Ոսկանյան Աստվածաշնչի և այս հրատարակության «Կարգ Գրոց Հնոյ Կտակարանի» և «Կարգ և թիւ Նորոց Կտակարանաց, հանդերձ գլխովք» բաղդատությունը պարզ կերպով ցույց է տալիս այդ տարբերությունը։

1817 թվականի հրատարակության մեջ, առաջին էջում, Հին Կտակարանի գրքերի ցանկի վերջավորության, նշվում է, որ «Հնոյ Կտակարանի բովանդակ գիրքն են 48. որոց 45 են կանոնականք, իսկ երեքն, այսինքն 1 և 4 Եզրասն և 3 Մակաբայեցւոց են արտաքոյ կանոնականաց»։

Ըստ 1817 թվականի Աստվածաշնչի՝ «Կարգ Գրոց Հնոյ Կտակարանի հանդերձ գլխովք» հետևյալներն են. «Ծննդոց, Ելից, Ղևտացւոց, Թուոց, Երկրորդ Օրէն, Յեսուայ, Դատաւորաց, Հռութ, Թագաւորաց Ա, Թագաւորաց Բ, Թագաւորաց Գ, Թագաւորաց Դ, Մնացորդաց Ա, Մնացորդաց Բ, Եզրաս Ա, Եզրաս Բ, Եզրաս Գ, Տօբիթ, Յուդիթ, Եսթեր, Մակաբայեցւոց Ա, Մակաբայեցւոց Բ, Մակաբայեցւոց Գ, Յոբ, Գիրք Սաղմոսաց, Առակք Սողոմոնի, Ժողովող, Երգ երգոց, Գիրք իմաստութեան, Էկղէսիաստիկոս, որ է Սիրաք, Եսայեայ մարգարէի, Երեմիայի, Եւ ողբքն իւր, Բարուքայ, Եզեկիէղի, Դանիէղի, Ովսեայ, Յովելեայ, Ամովսայ, Աբդիու, Յոնանու, Միքիայ, Նաւումայ, Ամբակումայ, Սոփոնիայ, Անգեայ, Զաքարիայի, Մաղաքիայի, Եզրաս Դ»։

Նոր Կտակարանի գրքերն են. «Աւետարան Մատթէոսի, Աւետարան Մարկոսի, Աւետարան Ղուկասու, Աւետարան Յոհաննու, Գործք առաքելոց, Թուղթք երանելւոյն Պողոսի առաքելոյ՝ Առ Հռոմայեցիսն, Առ

Կորնթացիսն առաջներորդ, Առ Կորնթացիսն երկրորդ, Առ Գաղատացիսն, Առ Եփեսացիսն, Առ Փիլիպպեցիսն, Առ Կողոսացիսն, Առ Թեսաղոնիկեցիսն առաջներորդ, Առ Թեսաղոնիկեցիսն երկրորդ, Առ Տիմոթէոս առաջներորդ, Առ Տիմոթէոս երկրորդ, Առ Տիտոս, առ Փիլիմոն, Առ Եբրայեցիսն. Թուղթք Կաթուղիկեայց՝ Պետրոսի առաքելոյ առաջներորդ, Պետրոսի առաքելոյ երկրորդ, Յոհաննու առաքելոյ առաջներորդ, Յոհաննու առաքելոյ երկրորդ, Յոհաննու առաքելոյ երրորդ, Յուդայի առաքելոյ, Յայտնութիւն երանելւոյն Յոհաննու առաքելոյ, Աղօթք Մանասէի արքայի Յուդայի, Գիրք Եզրասայ չորրորդ»։

Սանկտպետերբուրգյան Աստվածաշունչը մի մեծածավալ հրատարակություն է, Հին և Նոր Կտակարաններով բաղկացած 1126 էջից։ Մեսրոպ արքեպիսկոպոս Մագիստրոսը իր «Պատմություն Սուրբ Գրոց հայկական թարգմանության» ռուսերեն աշխատության մեջ, խոսելով Պետերբուրգյան այս հրատարակության մասին, գրում է. «Պետերբուրգյան Աստվածաշունչը, որը հրատարակված է Ռուսաց Բիբլիական ժողովի կողմից, ո-



ՊԵՏԵՐԲՈՒՐԳՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

րակով ցածր է և չի դիմանա ոչ մի տեսակի քննադատության։ Նրանում կան կոպիտ սխալներ, չնայած այն հանգամանքին, որ այդ հրատարակությունն իր էժանության պատճառով շատ էր տարածված։ Նրանում պակասում են շատ գրքեր հայկական կանոնից» (էջ 39)։

(Շարունակելի)



Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

(Մենդյան 80-ամյակին առթիվ)

Ա. ՄՏՔԻ ԵՎ ԳՐՉԻ ՄԱՐԴԸ

1. ՎԱՍՏԱԿԻՆ ԱՌՋԵՎ

Պոլսո Գարեգին պատրիարքը իր ութսուն տարին կլրացնե շուտով։ Առիթ մըն է, որ հայ ժողովուրդը մեծարանքի իր տուրքը բերե մեկու մը, որ իր հոգևոր առաքելության կոչքին՝ մտքի վաստակավոր մը ևս եղավ և իր կրոնական պարտականությունները կատարելով մեկտեղ այլապես ալ գիտցավ ծառայել իր ժողովուրդին։

Հոգևորական մը չէ, միայն, որ մեր առջև կեցած է իր ութսուն տարիներու բեռը ուսին։ Ուղևոր մըն է ան, որ քալած է ամբողջ կյանք մը՝ հետք մը ձգելով իր կոխած տեղը, և որ թեև արդեն ծեր ու պարտասած՝ դեռ կքալե իր ճամբան։

Պահ մը վարանեցա սակայն, երբ ինձ ալ հրավեր եղավ քանի մը խոսք ըսելու վաստակին վրա, զոր բեռցած կուգա կորաքամակ, բայց հոգվով միշտ երիտասարդ ծերունին։

Ոչ թե անոր համար, որ դժվար է մեկու մը մասին խոսիլ իր կենդանությանը և որ շատ մը նկատումներ պիտի կաշկանդեն քեզ և որքան ալ ուզես անկեղծ ըլլալ՝ բաներ պիտի ըլլան, զորս պիտի վարանիս թուղթին հանձնել։ Ոչ ալ անոր համար, որ դժվար է վերջին խոսքդ ըսել մարդու մը մասին, որ դեռ կշարունակե իր աշխատանքը։

Տատամսելուս պատճառը ինքը չէր։ Ես ինքս ի վիճակի չէի զգար զիս՝ մասնակցելու մեծարանքի այս ցույցին։

Արդարև, ոչ իր կենսագրությունը գիտեմ լրիվ, ոչ ալ հուշեր ունիմ ես իրմե։ Հեռվեն միայն հետևած եմ իր գործունեության, և իմ ամբողջ գիտցածս տպավորություններու միայն կհենու։ Այսքանով կարելի՞ էր դիմագծությունը տալ մարդու մը, որ մեզ կուգա խոնջ՝ բայց մախաղը լեփ-լեցուն, կնճռոտ՝ սակայն միշտ բարձր ճակատով։ Մարդու մը մասին, որ խոնարհ ապրեցավ, որովհետև ուզեց միշտ մեծ մնալ, և համեստ՝ որովհետև բեղմնավոր եղավ իր կյանքը։

Եվ սակայն կարելի ալ չէր քանի մը խոսք չըսել մեկու մը մասին, որ հայ գրականության տուրք մը տված է։ Որքան ալ համեստ եղած ըլլար այդ տուրքը՝ ան տրված էր սիրով ու ջերմությամբ, և չէր կրնար անտարբեր թողուլ հայ գիրն ու գրականությունը սիրող որևէ մեկը։

Եվ հետո, մարդիկ կան, որոնց մասին կըրնաս խոսիլ ուզած վայրկյանիդ։ Իրենց կյանքին մեջ պահեր ունեցած են անոնք ու գործեր, որոնք անջատ էջեր են իրենց կյանքի գիրքին մեջ։ Գարեգին պատրիարք այդ էջերեն շատ ունի վաթսուն տարիներու իր բեղմնավոր կյանքին մեջ, ու հնարավորություն կստեղծե ըսելու խոսք մը գտնել։

Պայմաններուն մեջ, ուր կգտնվի մեզմե ամեն մեկը, դժվար է իրմե պահանջել, որ կարդացած ըլլա լրիվ այս կամ այն հեղինակը՝ կազմելու համար անոր մասին իր դատաստանը։ Կենսագրին գործն է քայլ առ քայլ հետևիլ իր հերոսին, գիտնալ անոր կյանքին բոլոր փուլերը իրենց մանրամասնություններուն մեջ։ Պատմագիրը, իր կարգին, ստիպված է լրիվ ճանչնալ դեմքերը, որոնց կյանքի պատմությունը պիտի հորինե և դեպքերը, որոնց խառնված են այդ դեմքերը։

Պարագան նույնը չէ սակայն հիմա։

Գրող մը ուրվագծելու համար պետք չունիս տեսած ըլլալ անոր գրչեն ելած ամեն մեկ տողը։ Մենք մեր աչքերուն առջև չունինք, օրինակ, ինչ որ արտադրած է Գարեգին Պատրիարք իր գրչի կյանքին վաթսուն տարիներուն մեջ։ Մանավանդ մեզ անծանոթ է վերջին տասնամյակը իր գրական գործունեության։

Ինչ որ տեսած ենք սակայն մենք իրմե, հատորով լույս ընծայածներն ըլլան, թե տարիներու ընթացքին իր ցանցնումները պարբերականներու մեջ, բավական են մեզ համար իր գրական վաստակը ճանչնալու դոնե.

ԳԱՐԵԳԻՆ ՍԱՏՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ
(Առաջնորդ Գոնիայի)

ընդհանուր գիծերով։ «Էջմիածին» ամսագրի մյուս աշխատակիցներուն ձգելով հետևաբար ներկայացնել Գարեգին պատրիարքը իր այնքան բեղմնավոր կյանքին և գործունեության զանազան երեսներուն մեջ, հանդգնությունը պիտի տայի ինքս ինձ քանի մը խոսք ըսել մտքի աշխատավորին վրա։

Էջերը, որ կհետևին, համեստ մեկ ուրվագիծն են գրչի տուրքին, զոր մեր գրականության բերավ Գարեգին Տրապիզոնցին, ինչպես որ պիտի սիրեի կոչել ես Կոստանդնուպոլսո այժմու պատրիարքը և ինչպես հավանարար պատմության մեջ անցնի օր մը, երբ ինքը այլևս չըլլա։

2. ԼՈՒՅՍԻՆ ԵՏԵՎԵՆ

Կրնա՞ս ինձ ըսել, ո՞վ մարդ, որ այս տողերը կկարդաս, թե ո՛վ կդնե հանկարծ լույսի ծարավը գավառացի հայ տղուն ներսը։ Կիսթորկե մեկեն անոր հոգին, զայն կշարչըրկե գիշեր ու ցերեկ, անհնարին երազներով կբռնկցնե զայն։ Հետո կմղե զայն հեռուները, արկածե արկած, խութե խութ, ու կդրդե զայն, որ անգոսնե խոչընդոտները, որպեսզի կարենա բարձունքը հասնիլ օր մը։

Հայ գավառը երբեմն իրավ լեցուն էր լույսի համար տոչորող այդ մանուկներով։

Եվ արդարև, մեր սերունդն ու անկե առաջինները իրենց աչքերովը տեսան լույսի ծարավով բռնված տղոց այդ հորդաշեղ հոսանքը, որ գավառեն կխուժեր Կոնստանդնուպոլիս, ու անկե ալ ավելի հեռուները՝ մինչև որ փարոս մը գտներ։ Շատերը, ճիշտ է, չքացան ճամբան, ուրիշներ խամրեցան շուտ մը, բայց եղան և բարձունք հասնողները։

Ո՞ւր մնացած կըլլային դեռ հայ միտքն ու արվեստը, եթե գավառեն եկող այդ տղաքը չըլլային։ Գավառներեն տրեխով ու ձորձով քաղաք վազող այդ մանուկներն էին, որ մեր անցյալ դարը պճնեցին փառքով։ Անոնցմե որքա՞ն գրչի և արվեստի մարդիկ եկան հայ ժողովուրդին, ու որքա՞ն կարկառուն դեմքեր բոլոր ասպարեզներու վրա։

Լույսի ծարավն էր մղած նաև Խաչիկ պատանին, որ Տրապիզոնեն շունչը գար Կոստանդնուպոլիս առներ։ Չեմ գիտեր տասը տարեկան կա՞ր թե չկար, բայց կզգար, արդեն, թե կվազե աստղի մը, որ ո՛վ գիտե ո՛ւր էր...

***

Հայ կյանքը ինքն իսկ մրրիկի մեջ էր, որպեսզի կարենար ճամբա բանալ գավառացի տղեկին։ Այդ օրերուն ալեկոծության մեջ էր Կոստանդնուպոլիսը։ Ցնորքներու և հիասթափման, հույսերու և հուսախաբության դժբախտ շրջանն էր։ Երկու տարվա մեջ երկու կոտորած տեսեր էր Կոստանդնուպոլիսը, ու հիմա կգալարվեր անստուգության մեջ։

Գավառացի մանուկին համար խորթ աշխարհ էր այդ օրերու Կոստանդնուպոլիսը, ու Խաչիկ ավելի հեռուն հառեց աչքերը։

Ան գնաց Մուրատ-Ռափայելյան՝ հուսալով, որ լույսը կգտնե հոն։ Արդարև Մուրատ-Ռափայելյանը եղեր էր լույսի օջախ մը, ուրկե սերունդներ եկեր էին հայ ժողովուրդին, շունչ մը բերելով իրենց հետ, և փորձելով կամուրջ մը դառնալ մրրկավ բաժնված եղբայրներու միջև։

Մուրատ-Ռափայելյանը այն ատեն ևս դեռ կհամառեր մնալ առաջին տարիներու իր խանդավառության մեջ։

Մխիթարի ոգին էր, որ կհամենար այդ ափերուն վրա։ Ու միշտ այդ օրերուն, Ս. Ղազարի մեջ, դեռ կպլպլար մեծ ծերունին՝ Ալիշանը, անսպառ փարոսը գիտության և հայրենասիրության։ Ինչպես գրեր էր Իսահակյան՝ «Հայաստանը ոչ ոք այնպես չգիտե, ինչպես նա, ոչ ոք այնքան չի սիրել, որքան նա, այս մեծ հայրենասերը»։ Մուրատ-Ռափայելյանի տղաքը այդ մեծ ջահը ունեին իրենց մոտիկ։

Խաչիկ պատանին գավառեն կայծ մը ինք ալ կբերեր հետը Վենետիկ, ինչպես բերած էին ու կբերեին այնքան մանուկներ Հայաստանի բոլոր կողմերեն, ավիշ ու թարմություն տալով միշտ դարավոր ծառին։ Դժբախտ բան պիտի ըլլար, եթե անընդհատ իր ծոցը հոսող այդ ավիշը չըլլար։ Մխիթարի տունը, խորթ երկնքի տակ, պիտի ուժանար, պիտի կտրվեր հայ ժողովուրդեն, պիտի չքանար։ Մայր Հողեն եկող համեստ այդ պատվաստն էր, որ Մխիթարի տունը գիմացուց։

Այդ օրերը վերհիշելով պիտի գրեր օր մը ինքն իսկ.

«Մուրատ-Ռափայելյան զուրկ չէր ազգային ոգի ներշնչող մթնոլորտե, հակառակ կրոնական այն դրոշմին՝ որ հատուկ է կաթոլիկ դաստիարակության։ Տրապիզոնեն և այլ գավառներե փոխադրված Վենետիկ՝ մասամբ ուսանողներն ալ կտանեին այդ ոգին իրենց հետ, մանավանդ անոնք՝ որոնց հոգիները Մայրենի Եկեղեցիի ներշնչումներովն էին իրենց օծումն ընդուներ։ Այդ օծումը վարակիչ էր։ Մխիթարի շունչը, Մխիթարյան ուխտին կտակված ամենաթանկագին ավանդն ու ժառանգությունը, այդ օծության կուտար բնորոշ կնիք մը՝ էությամբ հայրենի»։

***

Վենետիկը նեղ եկավ սակայն իրեն։ Հոն միշտ բան մը կպակսեր։ Իսկ ինք կարոտ էր ուրիշ ջերմության մը, տարբեր թալիսմանի մը, իր հոգին ի սպաս դնելե առաջ իր ժողո-

վուրդին։ Կուզեր հայ ժողովուրդին ծոցը դառնալ, անոր անմիջական տրոփումներուն։

Եվ արդարև ան աչքերը հառեր էր Արմաշ, որ երկունքի մեջ էր այդ օրերուն։ Իր առաջին հունձքը տված՝ լույսի ծարավ տղոց կերևար փարոսի մը պես։

Մոգական անուն մը մանավանդ զինք կքաշեր հոն։ Դուրյանն էր։

3. ԱՐՄԱՇԻ ԸՆԾԱՆ

Արմաշը նոր էր ձև առեր։

1889-ին էր, որ Օրմանյան ոտք էր դրեր հոն, իսկ տարի մը հետո իրեն միացեր էր Դուրյան։

Վեց տարի չանցած, 1895-ին, Արմաշ ազգին կընծայեր արդեն իր առաջին յոթը աբեղաները։

Դեպք մըն էր աս Հայ Եկեղեցվո կյանքին մեջ։ Առաջին անգամ էր, որ խումբ մը երիտասարդներ սքեմ կառնեին լուրջ պատրաստութենե մը հետո։

Վերջ կգտներ շրջան մը, ուր եպիսկոպոսներու փոքրավորները եպիսկոպոս կդառնային իրենք ալ օր մը, կամ պարզ տիրացուներ մեծ Աթոռներու կհառեին իրենց աչքերը։

Ժառանգավորաց վարժարաններ առաջ ալ եղեր էին Թուրքիո զանազան հայ վանքերուն մեջ, ու վարդապետ հասցուցեր էին։ Երուսաղեմ, այդ տեսակետով, վաղուց ճիգեր էր ըրած։ Արմաշ՝ փորձեր էր ըրած ատենին ինքն ալ իր կարգին։

Բայց առաջին անգամ էր, որ փորձ կըլլար հիմա հիմնական դաստիարակությամբ մը օժտել Հայ Եկեղեցվո վաղվան սպասավորները։

Օրմանյանի հմտությունն ու Դուրյանի բարի շունչը հրաշք մը կատարեր էին Զարխափան Ս. Աստվածածնի հովանիին տակ։

Զոպանյան իրավունք ուներ գրելու.

«Արմաշ այս օրերուն ազգին նվիրեց իր առաջին վարդապետները։ Մեզի համար այս դեպքը կարևոր է, և շատ տարբեր կրոնական ձեռնադրություններե, անո՛վ որ միայն կրոնքի մարդիկ չէին մեզի ընծայվածները, այլ մանավանդ ուսումնասիրության մարդիկ։ Եղիշե վարդապետ Դուրյանի աշակերտները իրենց վարպետին գործը շարունակողներ, ճյուղավորողներ և ընդլայնողներ պիտի ըլլան։ Ուրախ պիտի ըլլայինք, եթե իրենց թեզերը, որոնց մեջ հայ հին մատենագրության մեծագույն դեմքերը ուսումնասիրված են, հրատարակվեին փութով։ Մեր սրտագին շնորհավորությունները այդ վեղարով գրագետներուն» («Մաղիկ», 1895, հուլիս, էջ 375)։

Սույն առաջին հունձքին հաջորդեր էին երկու դասարաններ ալ, 13-ի հասցնելով թիվը նորընծաներուն, որոնք հավասարապես ձեռնասուններն էին երկու մեծ դաստիարակներուն՝ Օրմանյանին ու Դուրյանին։

Օրմանյան երբ Արմաշը կթողուր Կոստանդնուպոլսո պատրիարք դառնալու համար, Դուրյան ինքն էր ստանձներ Արմաշի ամբողջ հոգը։

Ճիշտ այդ օրերուն էր, որ Խաչիկ Խաչատուրյան տրապիզոնցի պատանին, հազիվ 18 տարու, ոտքը կդներ Արմաշ։

Հուսախաբություն մը կսպասեր սակայն իրեն։ Այնտեղ չէր, իր հասած պահուն, մոգական շունչը, որ ծծելու կուգար ինքը հեռավոր Վենետիկեն։ Դուրյան էջմիածին էր գացած եպիսկոպոս ձեռնադրվելու։

Դուրյանի վերադարձը էջմիածնեն՝ տոնական օր մը կըլլար Արմաշի համար։

«1898 հոկտեմբեր։ Մեծ խանդավառություն և ոգևորություն մենաստանին մեջ և գյուղը։ Եկեղեցվո զույգ զանգակներու ղողանջները կուտան ավետավոր ազդանշանը անոր դարձին ու երևումին»։

Այսպես կոգեկոչեր այդ օրերը քառասուն տարի հետո Գարեգին եպիսկոպոս, Դուրյանի հոբելյանին առթիվ։ Հետո կպատմեր Դուրյանի առաջին դասը իրենց.

«Առաջին այցը դասարանին։ Անհամբեր են աշակերտները... Կքակվի կայծե ծրարը իր հայրենաշունչ հուշերուն և խոհերուն։ Օշականի տեսիլը, Մեծ Սուրբին լուսապսակվը ծիածանված իր հոգվոյն լուսակունքին մեջ, շնորհալի պատկերի մը պես կնկարվի աշակերտներուն ալ սրտին խորը։ Մեծ ուխտավորը Մեծ Սուրբի անշուք գերեզմանին պարզ շիրմեն իր քաղած ջերմիկ ներշնչումներով կվառեր յուրակերտ պատրույգները իր որդվոց սրտերուն։ Մեղրածորան շրթներեն կախ էին տրված կանթեղակիր սրտերն իր սաներուն, որոնց հետ թևախառնվեր էր նաև լուսակարոտ սիրտը նորեկին» («Մշակն ու իր վարքը», էջ 58)։

Կախարդանքը կսկսեր առաջին իսկ դասեն.

«Ինչ որ սակայն այդ իրիկունը անակընկալորեն ամենեն ավելի մագնիսեց հոգիները անանուն սարսուռներով՝ խիճերն էին այն խատուտիկ ու սրբազան՝ զոր սրբազան մոգ-իմաստունը իր բարամունքովն էր հավաքեր Սևանա լճափունքեն։ Համբուրված ու սրբատաշված՝ ալիքներովը հայրենի անուշ ջուրերուն, որոնցմով ինքն ալ էր արբեցած, այդ խճաքարերը՝ ականջալուր սրտալի մրմունջներու՝ ինք կբաժներ ամենուն կուց-կուց, գուրգուրանքով մը, զոր

սիրտը միայն կըմբռնե։ Որպես թե կայծի ձուլլեր եղած ըլլային անոնք, կամ արցունքի բյուրեղներ, որոնք կարենային բոց մ՚ավելի տալ կոչումի բոլոր գեղեցիկ այլ տարտամ ներշնչումներուն։ Անկումն այդ անմրմունջ խիճերուն սրտի խաղաղ ծովերուն մեջ՝ պիտի չփթթեցնե՞ր շուրջծավալ վետվետումները Հայրենիքի և անոր սրբավայրերու սիրովը շարժած հույզերուն և անուրջներուն։ Առաջին պերճ դասը այս անլեզու տարերքով...»։

Ամեն մեկ հիշատակ, որ զինք կկապե այդ օրերուն, զգլխիչ բան մը ունի տանջակ տարիներ ետքն՝ալ, երբ մանավանդ կհիշե պաշտամունքը, զոր Դուրյան կարծարծեր իրենց հոգիներուն մեջ դեպի հին սրբությունները.

«Ազգային անցյալ մեծ արժեքներու հանդեպ իր սերը ուներ չափը խոր պաշտամունքի։ Վարդանանց տոնին, ինք հանդիսապետը, քահանայական սաղավարտով պատարագիչն ու քարոզիչը, ան գիտեր խոսուն շարժապատկերի մը պես ոգեկոչել ու բեմադրել Ե դարու հայկական այդ աննման դրվագը, վերացնելով ու մագնիսացնելով մեծերն ու պզտիկները առհասարակ, նախահայրերու դյուցազնական մեծությանց ներշնչումներով։ Ո՞վ պիտի չտեսներ այդ օրը սուրբ բեմին վերև սավառնող լուսեղեն պարը մեր նահատակներուն իր աչքերուն և խոսքերուն ինքնաբուխ պերճությանը մեջ։ Վերացած հոգի մը ինքն ալ հոն։ Մարգարե մը՝ որ կուտա իր պատգամը։ Ե դարու Եղիշեն է, որ կվերհառնե Ի դարու այս Եղիշեին մեջ ավելի բարձր թռիչներով ու ավելի խոր թափանցումներով, միտքն ըլլալով ավելի հստակատես՝ ինչպես արծիվ մը, և լեզուն ավելի նկարչագեղ՝ ինչպես հյուսիսայգ մը»։

Պատանեկան իր անուշ օրերը կապրի անգամ մըն ալ, երբոր կհիշե խարույկի տոնը.

«Ի՞նչպես մոռնալ հապա զույգ խարույկները Սահակ-Մեսրոպին, անոնց տոնին առիթով։ Ինքն էր հաստատեր և իրեններուն ավանդեր այս գերազանցապես թելադրական սովորությունը, որ առանցքը կկազմեր նույն օրվան գիշերային դաշտահանդեսին։ Անոնք խորհրդանշաններն էին այն ջուխտակ ջահերուն, որոնցմով Գիրն ու Գիրքը ստացան իրենց հայրենի փայլն ու շնորհը։ Ճարհատող բոցերուն հանդեպ դարձյալ իր ժպիտը, մերթ հասկանալի մելամաղձությամբ մը թեթևակի վարագուրված, ուշադիր դիտողին սրտին մեջ կփոխանցեր քաղցրությունն ու դառնությունը միանգամայն իր հոգիին քնարական ալեծփումներուն։ Դժվար թե որևէ աշակերտ այդ խարույկներեն և զանոնք հղացող հոգիեն կայծ մը առած չըլլա՝ կերտելու համար իր իսկ հոգին»։

Առաջին օրեն այդ կայծը ինկավ Խաչիկ պատանիին մեջ։

Գարեգին պատրիարքը Արմաշի ընծան է հայ ժողովուրդին։ Շնչած այն մթնոլորտին մեջ, ուր Օրմանյանի ավանդությունները դեռ կհամենային, ան իր մեջ կխտացնե ձիրքեր երկու վարպետներեն ալ,— որոնելու, տըքնելու, ստեղծելու ունակությունը, ուսուցանելու հաճույքն ու գրելու կիրքը, ավանդություններ, որոնց հավատարիմ մնաց ան վաթսուն տարվան իր հոգևոր կյանքին մեջ։

Գարեգին պատրիարք մեկն է Դուրյանի ամենեն հարազատ ձեռնասուններեն։ Այն դասարանեն է, որ ուղղակի Դուրյանի ձեռքերուն մեջ հասունցավ։ Իրմե առաջ երեք դասարաններու 13 վարդապետները աճեր էին Օրմանյանի և Դուրյանի շունչին տակ հավասարապես։ Գարեգին և իր 9 օծակիցները Դուրյանի խնամած առաջին բերքն էին։

Կզգաս արդարև, որ Դուրյանի ոգին է, որ միշտ կշնչե Գարեգին պատրիարքի մեջ իր կյանքի ամբողջ ընթացքին։

4. ՈՒԽՏԱՎՈՐՆ ՈՒ ԻՐ ՈՒԽՏԸ

Հոգևորականներ կան, որ վանքը կմնան, կամ եթե երբեք քաղաք գան, չեն բաժնվիր ժամուն խուցեն։ Կզգուշանան ժողովուրդին խառնվիլ։ Բայց կան ալ, որ վանքերեն կփախչին և չեն կծկտիր ժամերուն խուցը։ Կապրին ժողովուրդին հետ, անոր անմիջական հոգերով և հույզումներով։ Գարեգին Տրապիզոնցին ադոնցմե եղավ։ Ան երբեք չուզեց փղոսկրե աշտարակը քաշվիլ ու շփում չունենալ լայն խավերուն հետ։

Դուրյան իր հոգին շարունակեց իր սաներեն երկու ընտրելագույններուն մեջ՝ Թորգոմին ու Գարեգինին։ Իր զույգ սաներուն հետ մեկտեղ երրորդություն մը կկազմե ան, տեսակ մը դպրոց։ Վերեն նայիլ քարացած վարդապետությանց վրա ու չխրտչիլ գիտության լույսեն. Հայ Եկեղեցիին մեջ տեսնել հայ հոգին, հայ քրիստոնեությունը։

Դուրյան մատչելի եղավ լոկ իր սաներուն ու լեռան բարձունքեն միայն իր հովվական սրինգը լսցուց իր հոտին։ Թորգոմ իր հոգին բացավ մտավոր ընտրանիի մը և իր քարոզներու թովչությամբ միայն խոսեցավ հավատացյալներուն։ Գարեգին Տրապիզոնցին իջավ խավերուն, ականջը դրավ անոնց սրտի զարկին ու անոնց հետ խոսեցավ։

Գարեգին Տրապիզոնցին ապրեցավ ինքն ալ հայ ժողովուրդի հույզումներուն ամենեն խռովյալ կես դարը։ Աչքերը բացած Համիդի մռայլ օրերուն ու հետո ճաշակած Հուրրիեթի

մեղրն ու լեզին, պիտի ապրեր շուտով հայ ժողովուրդի մեծ գողգոթան ալ, նախ Գոնիայի մեջ, ուր առաջնորդ էր և ուր կհասնեին Կոստարգրության առաջին քարավանները Կոստանդնուպոլսո հարևան շրջաններեն, ապա ավելի հեռուները՝ հայաջինջ սարսափներու մոտիկը։ Տարագիր մնաց և ինքը քանի մը տարի, եղավ Երուսաղեմ և Դամասկոս, ու երբ հնչեց զինադադարի ժամը, չթափառեցավ ան դյուրին ասպարեզներու մեջ, այլ շունչը առավ Տրապիզոն՝ սարսափներեն ճողոպրածներն հովվելու, ու ջանադիր, միևնույն ատեն, կանխելու նոր աղետներ։

Ու դարձյալ պանդուխտի ցուպը, այս անգամ արդեն հեռավոր ափերու վրա։ Աշխարհի չորս հովերուն ցրված հայ ժողովուրդի մնացորդը հովվել պետք էր, ու հովիվներ չկային։ Գարեգին Տրապիզոնցին այն քիչերեն մեկն եղավ, որոնք նույնացան հայ ժողովուրդի նոր խռովքին հետ և անոր հետ թափառեցան ամենուր, որպեսզի ամուր պահեն անոր մեջ տևելու կամքը։ Հայ Եկեղեցին կկոչվեր նոր առաքելության մը՝ դառնալու համար փրկության լաստ մը ալեկոծության մեջ ծփացող հայ բեկորներուն համար, հոսանքի դեմ՝ ամբարտակ, դառնալու համար «անառիկ բերդն հայ հոգվույն»։ Քիչեր միայն կային սակայն այդ առաքելության համար, ու Գարեգին Տրապիզոնցին այդ քիչերեն մեկն եղավ։ Կալիֆոռնիա, Մարսիլիա, հետո Արժանտինա վկաներն եղան անոր տքնության։

Եվ ահա տասը տարի է, ան. կհովվե Կոստանդնուպոլիսը, և այն քանի մը շրջանները, ուր դեռ հայեր կշնչեն։ Լրիվ ծանոթ չենք իր գործունեության բոլոր փուլերուն. կըրնանք սակայն ըսել, ավելի քան վստահ, թե ան հավատարիմ է միշտ իր ուխտին՝ ծառայել իր ժողովուրդին։ Ո՞վ չի գիտեր, թե կյանքն իր հարկադրանքներն ունի, և ամեն միջավայր՝ իր պահանջները. ո՞վ չի գիտեր, թե մարդ ստիպված է հաճախ հաշտվիլ իր շուրջի պայմաններուն հետ, երբեմն ենթարկվիլ. ո՞վ չի գիտեր վերջապես, թե տարիքին հետ կորովը կնվազի մարդուն, խանդավառությունը կմեղմանա, զգացումները կփխրին, հին կապերը կթուլանան։ Բավական է, որ մարդ իր ուխտին մեջ չդեղևի։

Գարեգին Տրապիզոնցին կրնա հպարտ նայիլ ետև։ Ան չդավաճանեց իր ուխտին։

***

Գարեգին Տրապիզոնցին աղմուկը երբեք չսիրեց. ան սիրով գնաց հոն, ուր աշխատանք մը զինք կանչեց. և ուր որ գնաց, հոգեկան զբաղում մը միշտ ճարեց իրեն։

Ժխորին մեջ, որ ամբողջ կես դար և դեռ ավելի հայ կյանքը հուզումով և շփոթությամբ լեցուց, շատ քիչ անգամ լսեցինք անոր անունը։ Մեր նոր պատմության բացառիկ մեկ շրջանն էր, երբ ասպարեզ իջած էին հայ ժողովուրդի բոլոր կենսունակ ուժերը և անոնց հետ նաև բոլոր աղմկարարները։ Քիչ չեղան հոգևորականներ ալ, որոնք դեր խաղացին վաթսուն տարվան այդ թոհուբոհին մեջ։ Ոմանք նույնացան հայ ժողովուրդի հուզումներուն հետ և մաս առին անոր ճիգերուն մեջ։ Բայց պակաս չեղան և աղմկողները։ Սքեմի տակ, թե առանց սքեմի, սայթաքումը տխուր բան է։

Գարեգին Տրապիզոնցին շուքի մեջ պահեց ինքզինքը։ Զբսենք, թե ան մաս չառավ առօրյա հոգերուն ու ճիգերուն մեջ։ Բայց ոչ ոք չգիտցավ իր բերած նպաստը ահավոր այն տքնության մեջ, զոր ստիպված էր հանձն առնել ժողովուրդը լավագույն օրերու հասցնելու համար։ Հայ ժողովուրդի բոլոր ընտիր զավակներու քրտինքին ինքն ալ խառնած է իրը։

***

Դժբախտ բան պիտի ըլլար, եթե մարդիկ գոհանային դպրոցին մեջ իրենց սորվածով։ Այդպիսիները շատ են, ավա՜ղ։ Շատեր կան, որ դպրոցեն ասդին բան մը սորված չեն. կյանքը կսուրա, բայց իրենք կեցած են անշարժ. շատ-շատ կքալեն իրենց կեցած տեղը, որպեսզի ցույց տան, թե իրենք ևս կշարժին։ Ոչ մեկ նորություն, որ զիրենք խանդավառեր։

Կզգաս, որ Գարեգին Տրապիզոնցին շատ է թղթատած դպրոցեն ետքն ալ։ Ջնված է հավանաբար գրքեր, զորս ուրիշներ նույնպես պիտի վարանեին բանալ, և անձնատուր է եղած որոնումներու, որոնց պիտի չհանդգնեին ուրիշներ։ Իր այս այլազան ընթերցումները պատճառ եղած են սակայն, որ չքարանա իր հոգին, կառչած չմնա տարին, ու կարենա ճշմարտությունը զատել առասպելեն։ Ուրիշներ, իր տեղը, պիտի շվարեին։ Ինք բան մը չէ փոխած հիմքեն։ Ընդհակառակը, ընդլայնած է զայն։ Առասպելներուն մեջ որոնած է ճշմարտության հետքերը, ու ճշմարտության մեջ՝ առասպելներու բաժինը։

Ուր ալ գնաց, ուր ալ գործեց, Դուրյանի կախարդանքին տակ էր միշտ։ Եվ ամենուրեք ան իր հետը տարավ սրբազան պատգամը, զոր Դուրյան էր կտակեր իրեն՝ ուսանիլ և ուսուցանել։

Գարեգին ուսուցչությամբ սկսավ արդարև իր հոգևոր ասպարեզը, և իր հոգևոր գործունեության վաթսուն տարիներու ընթացքին ան ուսուցիչ մնաց միշտ՝ ինչպես եղեր էր իր վարպետը՝ Դուրյան։

Գարեգին Տրապիզոնցին ուսուցիչ մնաց ամբողջ կյանքին մեջ, ժողովուրդին համար նախ, որ միշտ խոսք մը կուզեր, ու նաև իր իսկ սաներուն համար, որոնք լույսի կարիք ունեին հոգևոր ասպարեզ մտնելե առաջ։

Արմաշեն սկսավ ուսուցչական իր առաքելությունը։ Երիտասարդ վարդապետ մըն էր դեռ, երբ Դուրյան 1903-ին դասարան մը հանձնեց անոր։ Իր մեծ ուսուցչին հովանիին տակ, ու իր ավագ եղբայրակցին՝ Թորգոմի կողքին, ան փորձեց ուսուցանել ինչ որ ուսած էր, և միևնույն ատեն ուսանիլ՝ ուսուցանելով։

Կարճ եղավ իր՝ուսուցչությունը Արմաշի մեջ, ուր պիտի գար նաև ավելի հետո, 1904-ին, Մեսրոպ Նարոյանի տեսչության օրով։

Արմաշեն Սիս տարին զինքը ուսուցանելու։ Կիլիկիո նոր կաթողիկոսը լավագույն տարը մը չէր կրնար գտնել իր հիմնած դպրանոցը անոր հանձնելու համար 1906 թվականին։ Գարեգին Արմաշի ավանդությունները էր, որ կտաներ Սիս, փորձելով զանոնք պատվաստել հոն ալ։

Կարճ եղավ իր ուսուցչությունը Սիսի մեջ ալ։ Հայ կյանքը մարդիկը կխառներ իր առօրյա հոգեանքին, ու Գարեգին չէր կըրնար բացառություն կազմել։ Բայց ուր ալ գնաց, ինչ աշխատանքի ալ լծեց զայն կյանքը, ան երբեք չհեռացավ իր հիմնական կոչումեն. ուսուցանելու կիրքը միշտ վառ մնաց իր ներսը։

Կիրակնօրյա դպրոցներու տրված զարկը Ամերիկայի մեջ շատ բան կպարտի իրեն. ուսուցանելու նույն կիրքն է, որ զրգիռ կըլլա իրեն առիթ ստեղծելու նոր սերունդին՝ որպեսզի մայրենի բարբառն իմանա շաբաթը գոնե օր մը։

«Աշխարհի լույսն ի Հայս» երկի երկու հատորները ուրիշ բան չեն, բայց եթե տարբեր մեկ փուլը իր ուսուցչական առաքելության։ Այդ հատորները լայն խավերու հետ մեկտեղ նկատի ունին նաև Կիրակնօրյա դպրոցներու աշակերտները։ Հոն, ուր իրեն պակսած է ուսուցչական բեմը, ուղած է գրքերով խոսիլ նոր սերունդին։

Եվ հիմա, իր ծերությանը, ան դարձյալ կուսուցանե, այս անգամ իր իսկ հիմնած դպրեվանքին մեջ։ Իմաստ պիտի չունենար Բուենոս-Այրեսեն ելլել Կոստանդնուպոլիս գալ՝ միայն պատրիարքություն ընելու համար, առաքելություն, որ պարզ հոգևոր հովիվի մը դերեն շատ չի հեռանար ներկայիս։ Հոծ հայության մը ծոցին մեջ, որ վերջին տարիներուն խռովված էր ներսեն բյուզանդական վեճերով, կուգար խաղաղություն և միևնույն ատեն լույս բերելու։ Բավական չէր պարբերականը, զոր հիմնեց. լայն խավերու համար էր ան. անհրաժեշտ էր լույսի վառարան մը ևս՝ իրենց կոչման արժանի հոգևորականներ հասցնելու համար այդ հոծ հայության ծոցին մեջ։

Չենք կրնար գիտնալ հեռվեն բերքը, զոր Ս. Խաչ դպրեվանքը հասցնելու մոտ է, վեց տարվան երկունքե մը ետքը, ոչ ալ գուշակել կրնանք, թե ինչ պիտի ըլլա այդ բերքը հետո, երբոր կյանք մտնե։ Լսած ենք միայն ճիգը, զոր Կոստանդնուպոլսո այժմու պատրիարքը թափեց՝ ստեղծելու համար ի՛ր դպրեվանքը, կանգուն պահելու համար զայն, և հասցնելու համար անոր ծոցեն իր իսկ առաջին լրիվ բերքը։

Էջմիածնեն, Երուսաղեմեն և Անթիլիասեն հետո, Սկյուտարի Ս. Խաչն ալ կանցնի շուտով վանքերուն կարգը, ուրկե հոգևոր սերունդ կհասնի։ Նվիրապետական չո՛րս Աթոռներն ալ իրենց հոգևոր ճեմարանը կունենան այս կերպով։

Հայ Եկեղեցին, կկարծենք, անձկությամբ կսպասե Ս. Խաչի առաջին հունձքին։

Գևորգ Զ 1951 մարտ 12-ի օրհնության կոնդակին մեջ, զոր կուղղեր Գարեգին պատրիարքին անոր ընտրության առթիվ, կոգեկոչեր իր առաջին հանդիպումը անոր հետ Թբիլիսիի մեջ, շուրջ 30 տարի առաջ, 1922-ին, երբ էջմիածին կերթար ան եպիսկոպոս ձեռնադրվելու, հանդիպում, ուր Գևորգ Զ, այն ատեն առաջնորդ Վրաստանի հայոց թեմին, հնարավորությունը կունենար համոզվելու, թե իր «առաջ կանգնած է մի երիտասարդ վարդապետ, ընդհանուր զարգացում ունեցող, լայն աշխարհայացքի տեր, գիտակ ազգային ու եկեղեցական պատմության, գիտակ Ս. Գրքին և մեր ազգային մատենագրության, ժողովրդասեր, հայրենասեր և եկեղեցասեր, ուստի և ըստ ամենայնի պատրաստ՝ օգտակար լինելու հայ ժողովրդին և Եկեղեցուն վարչական, գրական, դաստիարակչական և այլ ասպարեզներում, որ կարոտում է միայն կյանքի փորձառության»։

Կյանքի փորձառությունը ավելի ևս պիտի շեշտեր անոր մեջ բոլոր ձիրքերը, և ավելի ևս պիտի կապեր զայն իր առաքելության։

Ուխտավորը հավատարիմ պիտի մնար միշտ իր ուխտին։

5. ԻՐ ՄՏՔԻ ՎԱՍՏԱԿԸ

Զննելե առաջ մտքի և գրչի մարդը Գարեգին Տրապիզոնցիի մեջ, անհրաժեշտ էր ակնարկ մը նետել մտավոր վաստակին վրա. զոր ան արտադրեց, որքան թույլ տվին իրեն իր հարակից զբաղումները։

ա. «Տարոնաշունչ».— Գրական իր երկերեն գլխավորը «Տարոնաշունչ»-ն է, լույս տեսած Կոստանդնուպոլսո մեջ։ Ինչպես բովանդակութենեն կերևա, Գարեգին Տրապիզոնցիի այս երկը կբաղկանա արձակ էջերե, որոնք ուղևորի տպավորություններ են, գրի առնված ուխտագնացության մը առթիվ, զոր հեղինակը կատարած է 1913-ին, դեպի Տարոնի աշխարհը և իր սրբավայրերը։

1925-ին լույս ընծայած «Շողակաթումներ»-ուն առթիվ, ծանոթություններ տալով իր անտիպ երկերուն վրա, ինքն իսկ կգրեր «Տարոնաշունչ»-ի մասին.

«537 փոքրադիր էջերե և 36 կտորներե բաղկացած զանազան ներշնչումներ ու խորհրդածություններ Տարոն աշխարհեն, 1913-ին»։

Նկարագրական հաջող էջեր կան «Տարոնաշունչ»-ին մեջ, իսկապես շունչով գրված։

Իր վարպետը՝ Դուրյան, 1898-ին, եպիսկոպոս ձեռնադրվելու առթիվ էջմիածնի մեջ, ուխտի էր գացած Օշական, Ս. Մեսրոպի գերեզմանին, ու հոնկե դարձին իր հուզումներն էր պատմած գրական այն պզտիկ գոհարին մեջ, որ «Ա Բ Գ-ի դասը» խորագիրը կկրեր։

Տասնհինգ տարի հետո իր սանը ուխտի կերթար մտքի մյուս տիտանին՝ Ս. Սահակի աճյուններուն.

«... Ընդհողյա մութ գավիթեն ներս տաճարն է Սուրբին՝ որ կհանգչի բեմին տակ, նկուղաձև խորշի մ'աջակողմը, դիմացը՝ իր ձախ կողքին՝ ոմենալով՝ ըստ ավանդության՝ իր ծոռիկը Շուշանիկ, կամ՝ ըստ ոմանց՝ իր դուստրը Սահականույշը։ Հավատավոր շրթներու և ճակատներու բյուրաբյուր հպումներով հինցած ու գունաթափված ծածկոցներ ձգվեր են անոնց կխսգալանաձև գերեզմաններուն վրա։ Հոդ, այդ հնաբույր սրբավայրին մեջ պահ մը կխզվին կըսես նոր ժամանակներու բոլոր իմաստուն կապերը։ Գիտության նախազգուշացումներուն դեմ ունկնախից՝ այս գրիչն ալ խառնեց իր ուխտավորի համբույրը ցեղին ըղձածարավ բոլոր համբույրներուն, և իր պապերուն բարեպաշտությամբը պաշարված՝ երկու զույգ մոմեր բոցեց անոնց սնարքին և անոտքին զետեղված ժանգոտ աշտանակներուն վրա։ Լույսի միստիկ շարժունություն մը կենդանացուց նկուղի խավարը։ Արձանացած պահ մը այդ խորհրդաշունչ մենության մեջ՝ կզգայի, թե բոցեղեն լեզվակի անձայն թրթռումներուն հետ սիրտս ալ կշարժեր անանուն զեղումներով»։

բ. «Կրոնաբարոյական և ընկերային շողակաթումներ (սրտի խորհրեն մարդկության հետ խոսք)»։

1925-ին Կոստանդնուպոլիս տպագրված այս գրքույկին իբր նպատակ հեղինակը կառաջադրե.

«Ներկա գրքույկը իր մեջ կամփոփե, կարդ մը վերհպումներով և հավելումներով, ինչ որ 1923-ին «Առավոտ» շաբաթաթերթին մեջ հրատարակված է «Կրոնաբարոյական շողակաթումներ» անունին տակ։ Եթե մեծ լուսաբերբուրեն քաղված այս փոքր շողերը քանի մը «խոնարհ» հոգիներու կամ նույնիսկ միակ «մաքուր» սրտի մը մեջ ունենան իրենց բարերար կաթկթումները՝ աղբերացնելու համար հոն տիեզերական ճշմարիտ կրոնի և ընկերային առողջ բարոյականի կենդանի ներշնչումներ, ձեռնարկը հասած պիտի ըլլա իր առաջադրած համեստ նպատակին»։

«Շողակաթումներ»-ը 1923—1925 տարիներուն Կոստանդնուպոլսո զանազան եկեղեցիներուն մեջ խոսված և ապա մշակված քարոզներ են, հետևաբար գրի առնված առույգ տարիքի մը։

Քաղվածքները, ուրկե քաղվածքներ կընենք հետագա հատվածի մը մեջ, գաղափար մը կուտան մտածումներուն մասին հոգևորականի մը, որ փորձված է չկառչիլ տառին, և լեզվին մասին, որով ան շարադրած է իր մտածումները։

գ. «Նարեկ», ողբերգություն Ս. Գրիգոր Նարեկացիի, աշխարհաբարի վերածեց Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնի, Կոստանդնուպոլիս, 1926։

դ. «Աշխարհի լույսն ի Հայս կամ Ավետարանին լույսը Հայաստանյայց եկեղեցվո պրիսմակեն»։

Աստվածաշունչի հայերեն թարգմանության 1500-ամյակին առթիվ պատրաստված և լույս ընծայված զույգ հատորներն են, առաջինը 1936-ին տպագրված Փարիզ, և երկրորդը 1939-ին, Բուենոս-Այրես։

Առաջին հատորին մեջ ներկայացված «դրվագները,— ինչպես կըսե հեղինակը իր հառաջաբանին մեջ,— կընդգրկեն առաջին դարեն մինչև 510 թվականն երկարաձգվող պատմական ժամանակաշրջան մը։ Յուրաքանչյուր դրվագի կցված են աստվածաշնչական պատշաճ, և մեծ մասամբ Տոնացույցին համապատասխանող հատվածներ՝ մեր կողմե կատարված աշխարհաբար թարգմանությամբ՝ բացատրություններով ու խորհրդածություններով, աշխարհագրական և այլ ծանոթություններ, նյութերուն վերաբերյալ եկեղեցվո շարականներ՝ աշխարհաբարի վերածված մեր ձեռքով, արձակ և ոտանավոր հին ու նոր էջեր։ Գործին վերջը դրված են ընթերցողներուն համար խորհրդածելի, և աշակերտներուն համար շարադրելի նյութեր կամ թելադրություններ։

Ներկա համեստ ձեռնարկը նպատակ ունեցած է քրիստոնեական կրոնի ազգայնացած կամ հայացած, բայց ո՛չ համամարդկային իր կենդանի շունչեն դատարկացած ոգին ցոլացնել մեր ազգային-եկեղեցական պատմութենեն քաղված ուշագրավ դեմքերու և դեպքերու նկարագրությամբ, և ասոնց վրա լույս արձակող աստվածաշնչական հատվածներու վերլուծմամբ։ Փորձ է եղած տալ հայ-քրիստոնյա տիպար նկարագիրը՝ իր անհատական ու ընկերային բազմաբարդ դիմագծով՝ որ մարդկային հոգեկան արժեքներու ներդաշնակ միության դրոշմն ու կնիքն ունենա իր վրա։ Եվ այս բոլորը՝ ապրված կյանքերու և փորձառություններու մեջ...։

Ինչպես պիտի տեսնեն ընթերցողները, այս երկրորդ հատորը կբովանդակե չորս դրվագներ միայն։ Բայց անոնք կպատկերացնեն մեր պատմության ամենեն մեծարժեք և լեցուն մեկ շրջանի կյանքը։ Մեր ազգային գոյության «Լինե՞լ թե չլինել»-ու թվականը, խտացումովն իր բոլոր հուզիչ և թելադրական մանրամասնություններուն։ Մեր ջանքն է եղած տալ այդ պատկերը՝ իր իսկական արժեքովն ու հարազատ գեղեցկությամբ»։

ե. «Քնար Արևագալի».— Բանաստեղծությանց անտիպ ժողովածու մըն է աս,— «269 էջերե և 57 կտորներե բաղկացած զանազան մեծ ու փոքր քերթվածներ»,— ինչպես կնշե հեղինակը ինքն իսկ «Շողակաթումներ»-ու մեջ, իր անտիպ երկերու կարգին։

Դժբախտաբար ծանոթ չենք «Քնար Արևագալի»-ի ամբողջական բովանդակության։ Բացառապես ոտանավորներե բաղկացած է գիրքը և հավանաբար հաջողած կտորներ ունի, ինչպես կերևա քանի մը նմուշեն որ կան։

Գարեգին Տրապիզոնցիի անտիպ երկերն են.

զ. «Ճաշակ հայ ինքնուրույն բաղաքակրթության».— Շուրջ 200 էջերե բաղկացած այս փոքրիկ փորձը մաս առ մաս հրատարակված է Եգիպտոսի «Արև» թերթին մեջ։

է. «Իսրայելի պատմությունը».— Շուրջ 300 էջերե բաղկացած այս ձեռնարկը պատրաստված է քննական ոգիով, հիմնված նորագույն ուսումնասիրությանց տվյալներուն վրա։ Ան իբրև դասագիրք ծառայած է նախ Արմաշու դպրեվանքին մեջ 1903—1904-ին և ապա Սսո դպրանոցին մեջ 1906—1909-ին։

ը. «Ճաշու գիրք»՝ կիրակի և տոն օրերու, աշխարհաբարի վերածված։

թ. «Նարեկ»՝ տաղաչափված աշխարհաբարով։

ժ. «Խորվիրապի լույսը»՝ թատերգ։

ժա. Պարբերականներու մեջ.— Զգոհացավ իր հոտին խոսիլ գրքերով ու քարոզներով։ Ուզեց խառնվիլ ժողովուրդի առօրյա կյանքին, և օրը-օրին հաղորդակից ընել զայն իր մտածումներուն։ Ադկե՝ իր մտահոգությունը խոսելու նաև թերթերու բեմեն։ Հազվադեպ չեն իր հոդվածները պարբերական մամուլին մեջ՝ ըլլա ատենին Թուրքիա գտնված ժամանակը, ըլլա տարագրի ցուպը առնելե հետո դեպի հեռավոր ափեր։

Բայց պատահական հոդվածները գոհացում չէին կրնար տալ ժողովուրդին հետ խոսելու իր հարաճուն մարմաջին։ Փորձեց սեփական բեմ ունենալ ամեն տեղ։

«Փարոս Հայաստանի»-ն և «Հայ կեդրոն»-ը, որոնք երբեմն լույս կտեսնեին Կալիֆոռնիո և Բուենոս-Այրեսի մեջ, և «Շողակաթ»-ը, որ այս պահուս կհրատարակվի Կոստանդնուպոլսո մեջ իր իսկ խմբագրությամբ, հնարավորություն տվին ու կուտան, որպեսզի Գարեգին Տրապիզոնցին միշտ կյանքին հետ ընթանա և միշտ շփման մեջ ըլլա ընթերցողին հետ։

Մշակույթի հանդեսին մեջ, զոր 1937-ին լույս ընծայեց Մարսիլիո մեջ «Սահակ-Մեսրոպ» անվան տակ և զոր չկրցավ, ավա՜ղ, երկարատև ընել, Գարեգին Տրապիզոնցին կըսեր, ի միջի այլոց, իբր առաջադրություն.

«Սփյուռքի հայության ոգին ավելի մտահոգիչ սպառնալիքներու դիմաց կգտնվի այսօր՝ քան հինգերորդ դարու հայությունը։ Սահակ և Մեսրոպ իրենց հոգիեն ծնած ջահակիրներու փաղանգով մը, կերտեցին Մշակույթի թագավորություն մը։ Թագավորություն մը՝ որուն կպարտի հայը իր տասնհինգ դարերու գոյությունը՝ իր մարդկայնական և ազգայնական բոլոր վայելուչ ստորոգելիներով։ Մեզի կմնա այսօր վերանորոգել ու զորացնել այդ թագավորության հիմքերը՝ զորս խարխլելու համար բարձրացած բրիշներ չեն պակսիր դժբախտաբար ներսեն ու դրսեն։ Հարկ է պայքարիլ, լույսի զենքերով, բոլոր այն չարիքներուն դեմ՝ որոնք կձգտին ստվերած բերել և ի գին արյունի և կրակի կառուցված այդ փառավոր թագավորության հեղինակության և վարկին վրա, Մայր Հայրենիքեն դուրս ցիրուցան եղած և ամեն հովերե տարուբերվող մեր ազգակիցներուն մեջ գլխավորաբար։ Ծանր այլ քաղցր աշխատանք մըն է այս, որուն լծվիլ կուզենք մենք ալ, բոլոր անոնց հետ, որոնք զանազան ուղղություններով, բայց ուղղամտությամբ կծառայեն միևնույն նպատակին»։

(Շարունակելի)

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների թեկնածու, ճնագետ)

ՀԱՂԲԱՏԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՂԲԱՏ ԳՅՈՒՂԻ ՄՅՈՒՍ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Ա. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Հաղբատի վանքը գտնվում է այժմյան Ալավերդու շրջանի Հաղբատ գյուղում, պատմական Հայաստանի Գուգարք նահանգի Տաշիրք գավառի այն մասում, որը հայտնի է Սևորդյաց երկիր անունով։ Բագրատունիները ժառանգելով Տաշիրք գավառը, այնտեղ կառուցեցին Լոռի քաղաքը, որից հետո Տաշիրք գավառը կոչվեց նաև Լոռի։

Հաղբատ գյուղը տեղավորված է մի ընդարձակ սարահարթի հարավ-արևելյան եզրին, անտառապատ լեռների արևմտահայաց ստորոտներում։ Սարահարթը հարավային կողմից եզերվում է Սեղեկի ձոր, հյուսիսային կողմից՝ Խրամա ձոր, արևմտյան կողմից՝ Դեբեդա ձոր և Կայենո ձոր անդընդախոր ձորերով, իրենց բարձր ու անմատչելի քարափներով, իսկ արևելյան կողմից բարձրանում են Ս. Լուսո և Տերունական անտառապատ լեռները։ Այդ սարահարթը գարնան և ամռան ամիսներին զարդարվում է փարթամորեն աճած հացահատիկի արտերով, ալպյան դալար բուսականությամբ և անթիվ ու անհամար երփներանգ, անուշաբույր ծաղիկներով, կազմելով անցորդի համար մի հիասքանչ տեսարան։

Հաղբատ գյուղի մասին պատմական աղբյուրներում եղած ամենահին տեղեկությունը վերաբերում է Թ դարին, մինչդեռ գյուղատնտեսական և շինարարական աշխատանքների ժամանակ պատահաբար հայտնաբերված, ինչպես և հնագիտական ուսումնասիրությունների ընթացքում ստացված նյութական մշակույթի մնացորդները հաստատում են, որ այնտեղ բնակություն է եղել Թ դարից դեռ շատ հարյուրամյակներ առաջ։

Ինչ վերաբերում է Հաղբատի վանքի հիմնադրմանը, ապա պատմական աղբյուրներում, սովորաբար, այն վերագրվում է Ժ դարին՝ Աշոտ Գ Ողորմած կոչվող Շահնշահի թագավորության ժամանակ։ Այդ մասին Ժ դարի պատմիչ Ստեփանոս Տարոնացի—Ասողիկը գրում է. «Եւ զկնի Աբասայ թագաւորեաց Աշոտ՝ 25... Յաւուրս սորա շինեցան կրօնաւորանոցք՝ ճգնաւորականաց տեղիք Սեաւորդեաց աշխարհին՝ հաւասարակեացք, միաբանականք, ընդ յառաջասացեալ կանոնին սահմանադրութեան Սրբոյն Բարսղի, որոց երկոցունց տեղեացն անուանք Հաղբատ և Սանահին հանդէպ միմեանց, միակրօնք ի տան Աստուծոյ՝ արանց Շ-ից»[1]։

ԺԲ դարի մատենագիր Սամվել քահանա Անեցին Հաղբատի վանքի կառուցումը վերագրում է նույն Աշոտ թագավորի կին Խոսրովանույշ թագուհուն, ասելով. «Ի ՆԺԶ (967) թվին շինեցաւ Հաղբատ, և Սանահինն՝ Ժ ամաւ առաջ քան զՀաղբատ շինե-

1 Ստեփանոս վարդապետի Տարօնեցւոյ, «Պատմութիւն տիեզերական», Փարիզ, 1859 թ., էջ 166—167։

ցաւ ի Խոսրովանուշ թագուհոյն՝ ի կնոջէ Աշոտոյ Շահնշահի»[2]։

Վարդան աշխարհագիրը նույնպես Հաղբատի վանքի կառուցումը վերագրում է Խոսրովանուշ թագուհուն. «...Եւ են ի վերայ Սաւորդեաց ձորոյ գետին շինեալ հոյակապ և հռչակաւոր սուրբ ուխտն Հաղբատ, Սանահին զոր շինեաց Խոսրովանուշ թագուհին՝ կինն Ողորմած Աշոտին»[3]։

Հետագա դարերի պատմիչները՝ Կիրակոս վարդապետ Գանձակեցին, Վարդան վարդապետ Բարձրբերդցին և ուրիշները նույնպես, ըստ երևույթին փոխ առնելով Ստեփանոս Տարոնացուց, Հաղբատի վանքի հիմնադրումը վերագրում են Խոսրովանուշ թագուհուն, այսինքն Ժ դարի երկրորդ կեսին։ Սակայն վանքի գլխավոր եկեղեցու հարավային կողմում պահպանված քարուկիր շարվածքների մնացորդները, ինչպես և կատարված հնագիտական հետազոտությունները հավաստի են դարձնում, որ մինչև Խոսրովանուշ թագուհու կողմից վերը նշված եկեղեցու կառուցումը, այնտեղ գոյություն են ունեցել այլ կառուցվածքներ, որն իր հերթին վկայում է, որ վանքը գոյություն է ունեցել մինչ այդ։ Բայց և այնպես Հաղբատի վանքի զարգացման և բուռն վերելքի շրջանը սկսվում է Բագրատունիների տիրապետության հենց այդ շրջանից, մանավանդ Կյուրիկյան հարստության ժամանակաշրջանում։

Հաղբատի վանքը, ինչպես այդ մասին ևս տեղեկացնում են պատմական աղբյուրները, ԺԱ դարից դառնում է եպիսկոպոսանիստ կենտրոն, ուր 1063 թվականին եպիսկոպոս է ձեռնադրվում արքունի տան երեց Սարգիսը. «... և զՍարգիս ոմն դրան երէց Կիւրիկէի ձեռնադրեն եպիսկոպոս Հաղբատայ. և յայնմհետէ եղև Աթոռ եպիսկոպոսի», պատմում է նույն Գանձակեցին[4]։

Այդ մասին ավելի հետաքրքիր ու արժեքավոր են Վարդան Բարձրբերդցի պատմչի հաղորդած տեղեկությունները. «... Եւ Սարգիս աւագ երէցն արքունի դրան արքեպիսկոպոս ձեռնադրեցին երկոքին կաթողիկոսքն (Տեր Բարսեղ՝ Հայոց և Տեր Ստեփանոս՝ Աղվանից—Հ. Ե.) սուրբ ուխտին Հաղբատայ՝ տալով վիճակս յերկունց կողմանց»[5]։

Այս հանգամանքը մեծ չափով նպաստում է Հաղբատի վանքի՝ որպես կրոնական նշանավոր կենտրոնի, տնտեսական և եկեղեցական ազդեցության բարձրացմանը։ Դրանով պետք է բացատրել այն փաստը, որ Կյուրիկե արքան հայոց Գրիգորիս Վկայասեր կաթողիկոսի փոխարեն, որը վարքագրություններ հավաքելու, թարգմանելու և գրելու համար թողնում է Հայրապետական Աթոռը և գնում Եգիպտոս, Բյուզանդիոն, Հաղբատ է հրավիրում Աղվանից Հովսեփ կաթողիկոսին՝ իր բազմաթիվ եպիսկոպոսներով և հայոց կաթողիկոս է ձեռնադրել տալիս Անի քաղաքի եպիսկոպոս և ողջ Շիրակի առաջնորդ Տեր Բարսեղին, ինչպես պատմում է նույն Գանձակեցին[6]։

Այս դեպքի մասին ավելի հանգամանորեն պատմում է նաև ԺԲ դարի մատենագիր Մատթեոս Ուռհայեցին[7]։

ԺԲ դարում Արևելյան Հայաստանում Հաղբատը, Բջնիի, Տաթևի և Արտազի մեծ վանքերի և կամ եպիսկոպոսական Աթոռների հետ ձեռք է բերում մեծ ազդեցություն ու հեղինակություն և խոշոր դեր է խաղում ոչ միայն կրոնա-եկեղեցական գործերում, այլև երկրի քաղաքական կյանքում։

Կյուրիկյան Բագրատունիների տիրապետության շրջանում, Հաղբատի վանքը, իր տնտեսական և քաղաքական զարգացմանը զուգընթաց, ավելի ընդլայնվում և ընդարձակվում է նորանոր կառուցվածքներով։ Այդ ժամանակաշրջանում են կառուցված, բացի Կաթուղիկե եկեղեցուց, ճարտարապետական այնպիսի հոյակապ կոթողներ, որպիսիք են մեծ գավիթը, Ս. Գրիգոր եկեղեցին և ուրիշներ։ Միաժամանակ Կյուրիկյանները Հաղբատի վանքը դարձնում են իրենց երկրորդ դամբարան պանթեոնը՝ Սանահնից հետո։

Սակայն Հաղբատի վանքի այդ զարգացած վիճակը երկարատև չի լինում. վրա հասնող սելջուկների արշավանքները մեծ ավերածություն և վնաս են պատճառում նաև Հաղբատի վանքին։ Սամվել Անեցին տեղեկացնում է, որ Սելջուկյան Խզըլ ամիրան 1105 թվականին գրավում է Լոռի քաղաքը և այրում Հաղբատ ու Սանահին վանքերը. «ՇԾԴ. Խզըլն էառ զլոռէ և զուխտն սուրբ Հաղբատ և Սանահինն այրեաց»[8]։

Թշնամու ավերածությունը լրացվում է բնական արհավիրքով. ինչպես տեղեկացնում է նույն Անեցին, 1139 թվականի երկրաշարժից քանդվում է Հաղբատի Կաթու-

2 Սամուէլի Քահանայի Անեցւոյ, «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893 թ., էջ 100։

3 «Աշխարհացոյց Վարդանայ», Կ. Պոլիս, 1728 թ., էջ 511։

4 Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1909 թ., էջ 91։

5 Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ, «Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861 թ., էջ 139։

6 Կիրակոս Գանձակեցի, էջ 91։

7 Մատթէոս Ուռհայեցի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898 թ., էջ 221։

8 Սամուէլ Անեցի, էջ 121։

ղիկե եկեղեցին. «Ի ՇՁԸ թվին՝ ի ժէ արեգ ամսոյ շարժմամբ կործանեցաւ Գանձակ քաղաք... և եկեղեցին Հաղբատայ փլուզանի...»[9]։

Սելջուկյան արշավանքները ոչ միայն քայքայման հասցրին Հաղբատի վանքը, Զաքարեն, որն ուներ սպասալարության պաշտոն, հայոց և վրաց միացյալ բանակի գլուխ անցած, սելջուկներին քշում է Վրաստանից և Հյուսիսային Հայաստանից, որի հետևանքով վրաց արքունիքից որպես ժառանգություն ստանում է Հայաստանի՝ սել-



ՀԱՂԲԱՏԻ ՎԱՆՔԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

այլև պատճառ դարձան Կյուրիկյան թագավորության անկմանը, ուստի ԺԲ դարի ութսունական թվականներից վերանում է Կյուրիկյանների տիրապետությունը Տաշիրք—Լոռիում։ Վերջինիս կարճատև ժամանակով իշխում են Օրբելյանները։

Այդ ժամանակ վրաց արքունիքում մեծ դիրք ունեին Զաքարե և Իվանե եղբայրները։

ջուկներից գրավված մասը, այդ թվում Տաշիրք—Լոռի գավառը։

Զաքարյանների տիրապետության շրջանում, շնորհիվ երկրի խաղաղ դրության, Հաղբատի վանքը մի նոր, առավել զարգացման ժամանակաշրջան է ապրում։ Ոչ միայն վերականգնվում են Սելջուկյան արշավանքների հետևանքով քանդված շենքերը, այլև կառուցվում են նոր հոյակապ

9 Սամվել Անեցի, էջ 139։

շենքեր, որպիսիք են Համազասպ ժամատունը, զանգակատունը, գրատունը, սեղանատունը, Ս. Աստվածածին եկեղեցին, պարիսպը, աղբյուրի շենքը և շատ ուրիշներ, որոնց մեծ մասը պատկանում են հայ արվեստի ու ճարտարապետական առաջնակարգ կոթողների թվին։ Երկրի զանազան շրջաններում վանքը ձեռք է բերում բազմաթիվ կալվածներ, ինչպես այդ երևում է հուշարձանների վրա այդ մասին փորագրված բազմաթիվ արձանագրություններից, դառնալով Հայաստանի ամենախոշոր և տնտեսապես ամենազորեղ կրոնական կենտրոններից մեկը։

Բացի Զաքարյաններից, Հաղբատի վանքը մեծ աջակցություն էր վայելում այնպիսի խոշոր հայ իշխանական տներից, որպիսիք էին Վաչուտյանները, Պռոշյանները, Օրբելյանները, Դեսումյանները և ուրիշները։ Նույնիսկ հայոց Լևոն Բ թագավորը մեծ գովեստով էր խոսում Հաղբատի վանքի մասին և ցույց տալիս անհրաժեշտ հովանավորություն։

Ուստի բոլորովին պատահական չէ, որ ժամանակի գրական աղբյուրներում մեծահռչակ անուններով է կոչվում այն, ինչպես, օրինակ, Ներսես Լամբրոնացու «Մեկնութիւն Սաղմոսի» գրքի հիշատակարանում կարդում ենք. «...զմեծ և զհռչակաւոր երկնահաւասար սուրբ ուխտն զմայրավանքն զՀաղբատ», «Մարգարէութիւն Եսայեայ» գրքի հիշատակարանում ասվում է. «... զոր սուրբ վարդապետին Յովսէփայ գտեալ թարգմանչացն գրած ի մայրաքաղաքն Հաղբատ». «Գրութիւնք Դիոնիսեայ Արիսպագացւոյ» գրքի հիշատակարանում՝ «... ի հռչակաւոր ուխտէն Հաղբատայ». Հովհաննես կաթողիկոսն այն անվանում է «Հայրապետանոց», իսկ արևելյան վարդապետները Գրիգոր Տղա կաթողիկոսին գրած թղթում Հաղբատի վանքն անվանում են «մայրաքաղաք»։

Հաղբատի վանքի մեծ հռչակի մասին է վկայում նաև այն փաստը, որ երբ Պետրոս Գետադարձ կաթողիկոսը հույների Մոնոմախ կայսեր հրավերով Կոստանդնուպոլիս էր ուղևորվում, նրա շքախմբի մեջ էր նաև Հաղբատի վանքի ներկայացուցիչը, հանձին Մատթեոս վարդապետի, ինչպես այդ մասին տեղեկացնում է Մատթեոս Ուռհայեցի պատմիչը[10]։ Ապա՝ Հաղբատի վանքի մի այլ առաջնորդ՝ Գևորգ եպիսկոպոսը նամակագրական կապեր է ունեցել Ներսես Շնորհալի կաթողիկոսի հետ՝ ստանալով նրանից իր գրած թղթերի պատասխանները։

Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, Զաքարե սպասալարի կողմից 1205 թվականներին Լոռի քաղաքում հրավիրված ժողովին մասնակցում էր նաև Հաղբատի վանքի առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսը[11]։

Հաղբատի վանքը, շնորհիվ իր ունեցած այդ մեծ հռչակի և բարձր կոչման, դեպի իրեն է ձգել բազմաթիվ նշանավոր անձնավորություններ, որոնք մեծ պատիվ են համարել Հաղբատի վանքում թաղվելը։ Մեծանուն հոգևորականներ, նույնպես թողնելով ոչ պակաս հռչակ ունեցող իրենց մենաստանները, եկել են Հաղբատի վանքը և իրենց կյանքի վերջին տարիներն այնտեղ անցկացրել, ինչպես, օրինակ, Հաղարծնի վանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոս Արմանեցին, Դավիթ վարդապետ Քոբայրեցին, Հովհաննես վարդապետ Հոռոմայրեցին, ժամանակի նշանավոր գիտնական Մխիթար Գոշի արժանավոր աշակերտ Թորոս Միլտենացին, բազմաթիվ իշխաններ և նրանց ընտանիքի անդամներ, նույնիսկ Աղվանից կաթողիկոսներ, որոնք թաղված են Հաղբատի վանքում։

Հաղբատի վանքի այդ բարգավաճ վիճակը մեծ չափով պայմանավորված էր նաև այդ ժամանակաշրջանի նրա այնպիսի ուսյալ, բանիմաց և գործունյա առաջնորդներով, որպիսիք էին Հովհաննես Խաչենացին, Հովհաննես-Համազասպը, Գրիգոր Տուտեորդին, Տեր Գրիգորիսը, և ուսումնասեր միաբանությամբ։

Հաղբատի վանքը առավել հռչակված է եղել իր դպրոցով։ Գոյություն ունեցող գրատան և դպրոցի շենքերը վկայում են այն մասին, որ վանքի դպրոցն ունեցել է ձեռագրերի հարուստ գրադարան և մեծ թիվ կազմող ունկնդիրներ։ Մի ձեռագրի, որ կոչվում է «Մարգարէութիւն Եսայեայ», հիշատակարանից իմացվում է, որ Հաղբատի վանքի դպրոցի գրադարանում պահվելիս են եղել հայ առաջին թարգմանիչների աշխատությունների որոշ օրինակներ. «Աստանոր յանգ եղեալ կատարեցաւ տառս աստուածաշունչ բարձրաքարոզ սուրբ մարգարէին Եսայեայ, ի գաւառիս Խաղտեաց, ի հռչակաւոր սուրբ մենաստանս, որ կոչի Բերդակն, ընդ հովանեաւ հրաշազարդ և գեղեցկաշէն տաճարի, որ յանուն Սրբուհոյ Աստուածածնին և Սուրբ Լուսաւորչին Գրիգորի Հայաստանեայց, ի ստոյգ և ընտիր աւրինակէ, որ կոչի Բագնայրեցի, զոր Սուրբ վարդապետին Յովսէփայ գտեալ թարգմանչացն՝ գրած ի մայրաքաղաքն Հաղբատ, ձեռամբ յոգնամեղ և թարմատար գրչի Յոհ[ան]ու...։ Գրեցաւ ի թվականիս Հայոց] ՉԾԴ (1305), ձեռամբ

10 Մատթէոս Ուռհայեցի, էջ 104։

11 Կիրակոս Գանձակեցի, էջ 161։

Յոհան աբեղայի և մեղապարտ գրչի. յիշեսջիք աղաչեմ ի Տէր Յիսուս»[12]։

Ինչպես տեսնում ենք, այդ հիշատակարանում նույնպես Հաղբատի վանքն անվանվում է «մայրաքաղաք», իսկ որ կարևորն է, հիշատակարանում ընդգծվում է, որ նա ընդօրինակվել է «ի ստոյգ և ընտիր աւրինակէ»։ Որ Հաղբատի վանքի դպրոցի գրադարանի ձեռագրերը եղել են ամենաստույգ և ընտիր օրինակներ, այդ մասին նշվում է նաև «Գրութիւնք Դիոնիսեայ Արիսպագացւոյ» վերտառությունը կրող ձեռագրի հիշատակարանում. «... Այս տառս սրբազան մեծին Դիոնիսիոսի Աթենացւոյ եպիսկոպոսի գրեցաւ ի ստոյգ և յընտիր աւրինակէ, ի հռչակաւոր ուխտէն Հաղբատայ, հրամանաւ և արդեամբք եռամեծ և անյաղթ վարժապետի և ժրաջան հռետորի Եսայեայ։ Արդ, որք աւգտիք ինչ յաստուածաղարդ տառէս և կամ աւրինակ առնոյք, յիշեսջիք զսրբազան բարունապետն իմ զԵսայի, հանդերձ ծնողաւք և վարդապետաւք։ Ընդ սմին և զիս՝ զամենաթշվառ գրիչս Յովանէս Հոռոմայրեցի, աղաչեմ յիշել ի Տէր, և յիշողքն յիշեալ լիցին, ամէն»[13]։

ԺԱ դարի հռչակավոր գիտնական Գրիգոր Մագիստրոս Պահլավունին մեծ գովեստով է խոսում Հաղբատի վանքի դպրոցի ուսուցիչների և աշակերտների ժրաջան աշխատանքի, մի շարք գիտությունների ուղղությամբ նրանց բազմաբովանդակ և խոր ուսումնասիրությունների, ինչպես և համեստ կենցաղավարության մասին։ Դրանից արդեն իսկ պարզ է դառնում, որ ԺԱ դարում Հաղբատի վանքի դպրոցը հասել էր զարգացման բարձր աստիճանին։



ՀԱՂԲԱՏԻ ՎԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՔԸ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՈՒՏՔԻՑ

Հաղբատի վանքի դպրոցում, բացի աստվածաբանական կամ կրոնական առարկաներից, ուսուցվում և ուսումնասիրվում էին բազմաթիվ գիտական այլ դիսցիպլիններ՝ աստղաբաշխություն, տոմարագիտություն, քերականություն, մաթեմատիկա, պատմություն, կենսաբանություն, երաժշտություն և այլն։

Հաղբատի վանքի դպրոցն իր գոյության ընթացքում տվել է բազմաթիվ ուսյալ և բա-

12 Լ. Ս. Խաչիկյան, «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950 թ., էջ 34—35։

13 Նույն տեղում, էջ 301։

նիմաց մարդիկ, որոնք ոչ միայն զբաղվել են գրչագրության արվեստով, այլև եղել են նշանավոր ուսուցիչ-դաստիարակներ։ Դրանցից առանձնապես հիշատակելի են Հովհաննես Սարկավագը, Իգնատիոսը, Վարդանը, Եսային («անյաղթ վարժապետ և ժրաջան հռետոր»), Դավիթ Քոբայրեցին, Հովհաննես Հոռոմայրեցին, Պետրոսը, Սարգիսը, Գրիգոր Սանահնեցին, Սամվել Անեցին, Խաչատուրը, Դավիթ Ալավկա որդին և շատ ուրիշներ։

Հատկապես մեծ հռչակ է վայելել Հովհաննես Սարկավագը՝ իր բազմակողմանի զարգացման շնորհիվ. նա երկար տարիներ ուսուցանել է Հաղբատի դպրոցում։ Ժամանակի պատմիչ Կիրակոս Գանձակեցին, թվելով այդ շրջանի գիտուն վարդապետների անուններն ու նրանց գործունեությունը, Սարկավագի մասին գրում է. «Սոյնպէս և մեծիմաստն գիտութեամբ քան զյոլովս և հանճարեղն յամենայնի՝ մտահարուստն Յոհանէս, Սարկաւագն կոչեցեալ, ի Հաղբատ. սա բաղում ինչս աշխատասիրեաց ի գիրս, յիշատակ բարի թողեալ. սա զբազմաց փափաքելին, և ոչ ձեռնհաս, զհաստատ և զանշարժ տոմարն կարգեաց Հայոց փոխանակ շարժականին և անհաստատնոյն. արար և միաբանութիւն ամենայն ազգաց տոմարի ընդ Հայոց. վասն զի յոյժ իմաստուն էր այրն և աստուածային շնորհօք զարդարեալ. սորա բանքն ամենայն իմաստասիրական ոճով, որպէս զԳրիգորի Աստուածաբանին և ոչ գեղջուկ...»[14]։

Այնուհետև Գանձակեցին թվում է Սարկավագի մյուս աշխատությունները։ Բնորոշ է այն, ինչպես այդ պարզ նկատվում է Գանձակեցուց վերը մեջ բերված վկայությունից, որ Հովհաննես Սարկավագը մյուսների նման չի գնացել Արևմուտք՝ Հռոմ, Հունաստան կամ այլուր ուսում ստանալու. նա մեծ կրթություն է ձեռք բերել ինքնուս ձևով՝ իր եռանդուն ջանքերի և բնածին խելքի և ընդունակությունների շնորհիվ։

Հաղբատի վանքի դպրոցի հռչակի մասին է վկայում նաև այն փաստը, ըստ որի ԺԴ դարի հայ մատենագիր Վարդան Բարձրբերդցին իր դպրոցը հիմնում է Հաղբատին շատ մոտիկ և վանքի իրավասության տակ գտնվող Կայան բերդում։ Մատենագրական որոշ տեղեկություններից հասկանալի է դառնում, որ Բարձրբերդցին մոտիկ հարաբերությունների մեջ է եղել Հաղբատի վանքի դպրոցի հետ։

Հաղբատի վանքի այդ բարգավաճ վիճակը, սակայն, երկարատև չի լինում, վրա հասնող մոնղոլական արշավանքների հետևանքով։ Մոնղոլական հսկա բանակը, Ջարմաղան զորավարի ընդհանուր հրամանատարությամբ, հյուսիսից, երեք ուղղություններով հարձակվում է Հայաստանի վրա։ Այդ բանակի մի զորախումբը, Ջաղատա Նուկինի գլխավորությամբ, 1235 թվականին գրավում է ամբողջ Լոռին, ավերում Լոռի քաղաքը և ասպատակում Հաղբատի ու Սանահնի վանքերը։ Հաղբատի վանքը մեծ չափով տուժում է Լանկթամուրի 1387 թվականի արշավանքի հետևանքով։

Չնայած մոնղոլական արշավանքների հետևանքով կրած մեծ ավերածություններին, Հաղբատի վանքը, ինչպես ցույց են տալիս մատենագրական տեղեկությունները, չի դադարում գոյություն ունենալուց ու գործելուց։ 1417 թվականին Հաղբատում գրված մի հիշատակարանում ասվում է. «ի սուրբ ուխտս Հաղբատայ, ընդ հովանեաւ Սուրբ Նշանիս և Սուրբ Կաթուղիկէիս և սուրբ գերեզմանիս Սարկաւագ վարդապետիս»[15]։

Ղրիմի Կաֆա քաղաքում 1423 թվականին գրված մի այլ Շարակնոցի հիշատակարանում հիշվում է «զՏէր Յակոբ վանահայր մեծահռչակ ուխտին Հաղբատայ...»[16]։ Մարտիրոս գրիչը Հաղբատի վանքում 1437 թվականին գրում է մի այլ Շարակնոց[17]։

Հաղբատի վանքի մասին առանձնապես հետաքրքիր տեղեկություններ կան մի Ճաշոցի հիշատակարանում, գրված 1438 թվականին։ Գրքի պատվիրատուն սրտի խորին կսկիծով ու դառնությամբ մանրամասն նկարագրում է Թավրիզ քաղաքի վրա Թամուրի որդի Շահրուխի չորս արշավանքների ժամանակ տեղի ունեցած ավերածությունները, կոտորածը, թալան-կողոպուտը և դրան հետևող ծայրահեղ աղքատությունը, սովը, համաճարակ հիվանդությունները և մարդկանց բնաջնջումը։ Այդ բոլորի պատճառով կենդանի մնացածները թողնում են իրենց հայրենի օջախը և փախչում օտար երկրներ, գլխավորապես Վրաստան։ Հիշատակարանի վերջում Հաղբատի մասին գրված է. «Յայս դառն և կսկծալի ժամանակիս, կարի աղքատութեամբ և չքաւորութեամբ ետու գրել զգիրքս ի յօտար երկիրս Վրաց, ի ձեռս Յոհանէս քահանայի, ի վանքս Հաղբատայ, առ դրան Սուրբ Նշանիս, և սուրբ մայրաքաղաք խմբարանիս... ի յառաջնորդութեան Տէր Զաքարիա արհեպիսկոպոսիս, և ի թագաւորութեան Վրաց Ալեքսանդրի, և ի պարոնութեան տեղւոյս և նահանգիս Լոռոյ՝ մե-

14 Լ. Ս. Խաչիկյան, «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 104—105։

15 Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», առաջին մաս (1401—1450 թ. թ.), էջ 201։

16 Նույն տեղում, էջ 312։

17 Նույն տեղում, էջ 475։

ծափառ և աստուածասէր իշխանիս՝ պարոն Բէշքէնին յազգէն Օրբելեանց թոռին մեծ պարոնին Բիւրթելին, ի թուականիս Հայկազեան տումարիս ՊՁԷ (1438) ամին»[18]։

Ինչպես տեսնում ենք, ձեռագրի հիշատակարանում Հաղբատի վանքն անվանվում է իր նախկին մեծիմաստ կոչումով «մայրաքաղաք խմբարան», ուր առաջնորդ է նույնիսկ արքեպիսկոպոս։ Իսկ դրանից հետևում է, որ Հաղբատի վանքը դեռ որոշ չափով պահպանում էր իր նախկին փառքն ու հռչակը և, որ կարևորն է, գործում էր նաև վանքին կից դպրոցը։

Հաղբատի վանքի այդ «արտոնյալ», եթե կարելի է այդպես անվանել, դրությունը, մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ ողջ հայ ժողովուրդը տնքում էր մոնղոլական ծանր լծի տակ՝ իրավազուրկ, տնտեսապես քայքայվում, ընչազուրկ էին դառնում ծանր հարկերի հետևանքով, երբ հայ իշխանական տներին և Հայ Եկեղեցուն պատկանող կալվածների մի մասը սեփականացրել էին թաթար խաները, անկասկած հետևանք էր այն բանի, որ Հաղբատի վանքը, ինչպես և ողջ Լոռին գտնվում էր Օրբելյան իշխանների տիրապետության տակ, որոնք համերաշխ հարաբերությունների մեջ էին մոնղոլների հետ։

Ինչպես հայտնի է, Օրբելյանների բուն Հայրենիքը՝ նրանց տիրապետության երկրորդ շրջանում, Սյունյաց նահանգի Վայոց ձոր գավառն էր։ Դեռ 1235 թվականին, մոնղոլների՝ դեպի Հայաստան կատարած առաջին արշավանքի ժամանակ, նրանց երրորդ զորախումբը, Ասլան Նուինի գլխավորությամբ, արշավում է Սյունիքի վրա և մտնում Վայոց ձոր։ Այդ ժամանակ Վայոց ձորին իշխում էր Լիպարիտի որդի Ելիկումը, որն ամրացել էր Հարսնաքար լեռան գագաթին գտնվող Հրասեկա անառիկ ամրոցում։ Մոնղոլները, տեսնելով Օրբելյանների անվեհեր քաջությունը և անձնազոհ դիմադրությունը, ինչպես և երկրի անառիկ դիրքը, բարվոք են համարում գործն ավարտել հաշտությամբ։ Ասլան Նուինը բանակցություններ մեջ է մտնում Ելիկումի հետ, առաջարկելով ընդունել մոնղոլների գերիշխանությունը՝ միայն հարկատու լինել նրանց, երկրի ներքին կառավարումը թողնելով Օրբելյաններին, որպիսի պայմանին համաձայնվում է Ելիկումը։

Ելիկումին հաջորդող նրա եղբայր Սմբատը երկու անգամ (1251 և 1256 թ. թ.) մեկնում է Կարակորում՝ մոնղոլական Մանգու մեծ խանի մոտ՝ իրենց տիրապետության տակ գտնվող երկրամասի բնակչության հարկերը թեթևացնելու և Օրբելյան իշխաններից ու Եկեղեցուց գրաված կալվածները վերադարձնելու խնդրանքով։ Մանգու խանը ընդառաջում է Սմբատին, բավարարելով նրա խնդրանքը, միաժամանակ հատկացնելով նոր երկրամասեր՝ որպես ժառանգական սեփականություն, այդ բոլորը հաստատելով պետական հրամանագրերով։

Բացի դրանից, Վրաց արքունիքը դեռ Թամար թագուհու ժամանակվանից մեծ հոգատարությամբ ու հովանավորությամբ էր վերաբերվում Օրբելյանների տոհմին։ Եվ որովհետև Հյուսիսային Հայաստանը նշված ժամանակաշրջանում գտնվում էր Վրաստանի գերիշխանության ներքո, իսկ Հաղբատի վանքը գտնվում էր Հայաստանի այդ մասում, որը, ինչպես տեսանք վերը մեջ բերած հիշատակարանից՝ գտնվում էր Օրբելյանների տիրապետության տակ։ Ահա այդ հանգամանքների բերումով էլ, Հաղբատի վանքը դեռ շարունակում էր իր գոյությունը՝ որպես կրոնական նշանավոր կենտրոն։

Սակայն Օրբելյաններին չհաջողվեց, ինչպես իրենց բուն երկրում, այնպես էլ իրենց տիրապետության տակ գտնվող մյուս երկրամասերում նկատելի չափով թեթևացնել ժողովրդի ճնշված ու հալածական վիճակը։ Այդ դրության մեջ էր նաև Հաղբատի վանքը, որի մասին որոշակի կերպով իմացվում է 1441 թվականին գրված մի Ավետարանի հետևյալ հիշատակարանից. «Արդ, յանկ ելեալ աւարտեցաւ հոգեւաբուխ քառավտակ աստուածաշունչ մատենիս... ի մեծահռչակ և աստուածաբնակ և հրեշտակաճեմ յաթոռս Հաղբատայ... ի թվականութեանս Հայկազեան տումարի Պ-երորդի և ինսունեերորդի (1441), ի դառն և յանբարի ժամանակի, յորում սաստկացեալ էր սուրն Իսմայելացոց ի վերայ մեր հալածանաւք...»[19]։

Հաղբատի վանքի «նեղ ժամանակներ»-ի մասին խոսվում է նաև մի այլ ձեռագիր Ավետարանի հիշատակարանում, գրված 1455 թվականին, երբ Հաղբատի վանքի առաջնորդն էր Աստվածատուր արքեպիսկոպոսը. «...Արդ, գրեցաւ Սուրբ Աւետարանս... ձեռամբ մեղսաներկ ոգւոյ՝ փցուն և անարհեստ գրչի Գրիգորի աբեղայի, ի սուրբ և ի հռչակաւոր ուխտս ի Հաղբատ... ի թվականութեանս Հայոց ՋԴ (1455), ի կաթուղիկոսութեան Տեառն Գրիգորի և յառաջնորդութեան տեղւոյս Տէր Աստուածատրոյ արքե-

18 Լ. Ս. Խաչիկյան, «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», առաջին մաս, էջ 485—486։

19 Նույն տեղում, էջ 514։

պիսկոպոսի, ի ղանութեան տաճկաց Շիանշահի, ի դառն և ի նեղ ժամանակի[20]։

Հովհաննես անունով գրիչը Հաղբատի վանքում գրում է մի Ճաշոց, որի հիշատակարանից իմացվում է, որ այն ավարտել է 1458 թվականին, նույն Ջհանշահի տիրապետության և նույն Աստվածատուր արքեպիսկոպոսի առաջնորդության ժամանակ[21]։

Թբիլիսի քաղաքում 1462 և 1463 թվականներին գրած երկու Ավետարանների հիշատակարաններում Հաղբատի վանքի առաջնորդ է նշվում Ղուկաս արքեպիսկոպոսը[22]։

Դարանաղյաց գավառի Ավագ վանքում, «Գրութիւնք Դիոնիսեայ Արիսպագացւոյ» վերտառությունը կրող աշխատության 1464 թվականին գրված չափածո հիշատակարանում ի թիվս այլոց հիշատակվում է «Ներսէսն Հաղբատեցին»[23]։

Հաղբատի վանքի մասին ԺԴ և ԺԵ դարերում, բացի վերոհիշյալ ձեռագրերի հիշատակարաններում եղած տեղեկություններից, պահպանվել են նաև մի քանի տապանագրություններ, որոնց մասին հարկ կլինի հիշատակել համապատասխան տեղում։

Պատմական աղբյուրներում Հաղբատի վանքի մասին տեղեկությունները պակասում են դեռ ԺԴ դարի վերջերից, իսկ ԺԵ դարի վերջին քառորդից նրանք բացակայում են նաև մյուս մատենագրական և վիմագրական աղբյուրներում։ Վանքի զանգակատան շուրջը եղած մի քանի գերեզմանների տապանագրությունները, որոնք ունեն 1491, 1502, 1651 և 1629 թվականները և համապատասխան ձևով պատկանում են Պետրոս հայրապետին, Դավիթ վարդապետին, Ղուկաս կուսակրոն քահանային և տեղի Կիրակոս եպիսկոպոսին, ենթադրել են տալիս, որ վանքը իր գոյությունը, որևէ կերպ, շարունակել է նաև ԺԶ դարում։

Մոնղոլական արշավանքները և նրանց անկումից հետո մի շարք թուրք-թաթարական ցեղերի միջև տեղի ունեցող միջցեղային երկարատև ու անընդհատ կրկնվող պատերազմները քայքայման ու ամայության հասցրին երկիրը։ Այդ վիճակն ապրեցին նաև մենաստանները, որոնց թվում նաև Հաղբատի վանքը։ Ուստի նա ԺԵ դարից զրկվել էր իր նախկին փառքից ու հզորությունից։

ԺԶ դարի վերջերից սկիզբ առած թուրք-պարսկական արշավանքները Հայաստանի վրա և նրանց միջև տեղի ունեցած պատերազմները Հայաստանի սահմաններում. ավելի քայքայման ու ամայության հասցրին երկիրը, այդ թվում նաև վանքերը։

Այդ արշավանքներից ավելի զարհուրելին ու կործանարարը պարսից Շահաբաս Ա-ի 1604 թվականի արշավանքն էր, որի ընթացքում Հայաստանի բազմաթիվ նահանգներից ու գավառներից, որոնց թվում նաև Լոռիից, բնակիչներին բռնի կերպով տեղահան արեցին և քշեցին Պարսկաստան։ Ինչպես հայտնի է, ժամանակի պատմագիր Առաքել վարդապետ Դավրիժեցին մեծ զայրույթով և սրտի խորին կսկիծով ու դառնությամբ է նկարագրում այդ անցքերը[24]։

Չնայած պատմագիրը այդ առնչությամբ չի հիշատակում Հաղբատ գյուղի և Հաղբատի վանքի անունները, սակայն կասկածից վեր է, որ նրանց նույնպես վիճակված էր այն, ինչ որ մյուս բոլոր բնակավայրերին ու վանքերին։

Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանի հողի վրա և նրանցից յուրաքանչյուրի արշավանքները դեպի Հայաստան, շարունակվեցին նաև հետագա դարերում։ Այդ պատերազմների ու արշավանքների հետևանքով Հաղբատ գյուղն ու վանքը 1730 թվականից նորից ավերվում ու ամայանում են։ Այդ ամայի ու լքված վիճակում Հաղբատի վրա է հարձակվում պարսից Նադիր շահը (1736 թ.) և հյուսիսային լեռնցիները՝ 1772 թվականին, որոնց ընթացքում ավելի է քայքայվում Հաղբատի վանքը։ Աբրահամ արքեպիսկոպոսը, նշանակվելով Հաղբատի վանքի առաջնորդը, 1776 թվականին վերաբնակեցնում է գյուղը և վերահաստատում վանքը։

ԺԸ դարի վերջին քառորդում Հաղբատի վանքումն էր ապրում ու ստեղծագործում Սայաթ-Նովան։ 1795 թվականին Հաղբատի վրա է հարձակվում պարսից Աղա-Մահմադխան շահը, որի հետևանքով նորից ավերվում ու ամայանում է Հաղբատի վանքը. այդ արշավանքի ժամանակ զոհվում է նաև Սայաթ-Նովան։

Աղա-Մահմադ-խանի 1795 թվականի Հաղբատի արշավանքի և ավերածությունների մասին վկայում է նաև Հովսեփ արքեպիսկոպոս Երկայնաբազուկ—Արղությանի հետևյալ գրությունը. «...ի թվին Հայոց ՌՄԽԴ (1795) հրամանաւ կայսերուհւոյն Ռուսաց Եկատերինէի, ընդ զօրաց նոցին եկի ի հայ-

20 Լ. Ս. Խաչիկյան, «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», երկրորդ մաս (1451—1480), էջ 51։

21 Նույն տեղում, էջ 98։

22 Նույն տեղում, էջ 171 և 195։

23 Նույն տեղում, էջ 208։

24 Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, «Պատմութիւն», Վաղարշապատ, 1884 թ., էջ 38—40։

ռենի աշխարհն իմ սակս օգնականութեան և շրջայ յերկրպագութիւն վանօրէիցն Հաղբատայ և Սանահնի, տեսի զամայութիւնս նոցին, մխկտեցայ ի վերայ նոցին»[25]։

Հովսեփ արքեպիսկոպոս Երկայնաբազուկ—Արղությանցի այդ այցը, որը տեղի էր ունեցել պարսկական բանակի նահանջի և ռուսական բանակի առաջխաղացման ժամանակ 1795 թվականին, մեծ նշանակություն ունեցավ Հաղբատի վանքի հետագա դրության վերաբերյալ։ Արղությանի ջանքերի շնորհիվ վերականգնվում ու վերահաստատվում է Հաղբատի վանքը և որոշ կալվածներ ձեռք բերում։ Վանքին կից հաստատվում է հատուկ դպրոց, ուր 1826—1828 թվականների ժամանակամիջոցում դասավանդում է Խաչատուր Աբովյանը։

ԺԹ դարի սկզբներին, երբ Էջմիածինը դեռ գտնվում էր պարսիկների տիրապետության տակ, վերջինների հետապնդումներից խույս տալու նպատակով ժամանակավորապես Հաղբատի վանքումն է ապաստանում Եփրեմ կաթողիկոսը։

Սակայն Հաղբատի վանքի նախկին փառքն ու հռչակը այլևս չի վերականգնվում։ 1828 թվականին, երբ ռուսական բանակը գրավում է Երևանն ու Էջմիածինը, Եփրեմ կաթողիկոսը թողնում է Հաղբատի վանքը և վերադառնում Էջմիածին։ Իսկ 1836 թվականին Հաղբատի վանքից վերցվում է եպիսկոպոսանիստ կենտրոն լինելու իրավունքը և թողնվում է միայն վանահայրություն։ Դրանից հետո վանքը հետզհետե թուլանում է տնտեսապես և բարոյապես։ ԺԹ դարի վերջերին և Ի դարի սկզբներին նրա վանական միաբանությունը կազմված էր միայն մի վարդապետից և քահանայից։ Վանքի սեղանատան ընդարձակ ու հոյակապ շենքը մասնավոր մարդիկ հափշտակել և վեր էին ածել ձիթհանի, իսկ գրատան շենքը՝ գինու մառանի։ Վանքի բոլոր կառուցվածքները գտնվում էին քայքայված ու անխնամ վիճակում՝ երբ Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր։

Սովետական իշխանության տարիներին մեծ ջանքեր են գործադրվել և հսկայական միջոցներ ծախսվել վանքի բոլոր կառուցվածքների քանդված մասերը վերականգնելու և վանքի ամբողջ շրջապատը բարեկարգելու ուղղությամբ։ Արդեն ամբողջովին վերականգնված են պատերից թափված երեսապատ բոլոր քարերն ու քիվերը, տանիքների սալաքարերը և քայքայված սալահատակները, բարեկարգված է ողջ շրջապատը։

Հուշարձանների անվթար պահպանությունն ապահովելու նպատակով, բացի կառավարական վերադաս մարմինների կողմից այդ ուղղությամբ հրատարակված օրենքներից, իր ժամանակին նշանակված է հատուկ հաստիքային պահակ։

Հաղբատի վանքի մեծ թիվ կազմող հուշարձանները հայ արվեստի ու ճարտարապետության առաջնակարգ կոթողներից են։ Նրանցից մի քանիսի ճարտարապետական նշանակությունն ու արժեքը դուրս են գալիս ռեսպուբլիկայի սահմաններից, ինչպես օրինակ՝ մեծ գավիթը, զանգակատունը և այլն[26]։ Իսկ նրանց հարուստ վիմագրությունը կարևոր նյութ է հայ, և ոչ միայն հայ, պատմագրության համար։

Այդ բոլորի հետևանքով Հաղբատի վանքը, Հայաստանի երբեմնի այդ նշանավոր ու խոշոր կրոնական և լուսավորական կենտրոնը, դարձել է սովետական մարդու սիրած հին, պատմական վայրերից մեկը, ուր յուրաքանչյուր տարի Հայաստանից և Սովետական Միության եղբայրական մյուս ռեսպուբլիկաներից հազարավոր այցելուներ՝ դպրոցականներ, ուսանողներ, ուսուցիչներ, դասախոսներ, գիտության, գրականության, արվեստի, մշակույթի, արդյունաբերության, գյուղատնտեսության և այլ բնագավառների աշխատողներ, պետական հիմնարկների աշխատողներ և արտասահմանից շատ ուխտավորներ ու հյուրեր գալիս են այցելության։

25 Ռոստոմ բեգ Երզնկյանց, «Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ աշխարհահռչակ վանից», Վաղարշապատ, 1886 թ., էջ 11։

26 Հոդվածաշարում տրված լուսանկարները վերցված են Երևանի Պետական պատմական թանգարանի ֆոտոարխիվից, որոնք լուսանկարահանված են մինչև օրինական վերանորոգումները։

(Շարունակելի)

Ա. Ն. ՇԱՀԻՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԱՐՎԵՍՏԸ*

ԺԳ—ԺԴ ԴԱՐԵՐԻ ԽԱՉՔԱՐԵՐԻ ՕՐՆԱՄԵՆՏԱԼ ՄՈՏԻՎՆԵՐԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սովորաբար խաչերի հնագույն ձևը համարում են հավասարաթև խաչը, որը եվրոպական գրականության մեջ կոչվում է «հունական խաչ» (croix grecque) (նկար 51)։

Մեզանում հավասարաթև խաչերը ավելի վաղ ծագում ունեն, քան հռոմայեցիների և բյուզանդացիների մոտ (Տեկոր, Քասախ, Երերույք և այլն)։ Հետևաբար ճիշտ չի լինի այն անվանել հունական խաչ։ Եվրոպացիները Հռոմի և Բյուզանդիայի միջոցով ծանոթանալով քրիստոնեությանը, հավասարաթև խաչին տվել են «հունական խաչ» անունը։ Հավասարաթև խաչը ավելի վաղ է կիրառվել հայկական, քան հունա-հռոմեական միջավայրում։

Սակայն հնագույն խաչերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հավասարաթև և ոչ հավասարաթև, կամ «լատինական խաչ» կոչվածները հանդես են եկել գրեթե միաժամանակ, թեև հնագույն բաղիլիկ շինությունների վրա դրանք քանդակվում էին հավասարաթև (Տեկոր, Քասախ, Երերույք, Եղվարդ և այլն)։

Հնագույն խաչքարերի խաչերը, որպես կանոն, չէին հանդչում կլոր վարդյակ-քանդակների վրա, եթե չհաշվենք մի երկու բացառություն։ Սակայն ավելի ուշ, հատկապես ԺԱ դարից, խաչքարերի խաչերն հանդչում են, որպես կանոն, կլոր վարդյակ-քանդակների կամ արևի սկավառակների վրա, 8—16 թևանի վարդյակների ձևով։

Ա. Շ. Մնացականյանը խաչքարերի վրա հանդես եկող այդ կլոր վարդյակ-քանդակները համարում է «հատիկապատկեր ծաղկեպսակով, որից էլ ծլել է կենաց ծառը՝ խաչի խոշոր տեսքով, վարսանդապտղային սիմվոլներով և պտղաբեր ճյուղերով»[59]։

Ա. Շ. Մնացականյանը օրնամենտալ մոտիվների ծագման հարցը համարում է լուծված. «Ամեն ինչ այնքան ծանոթ է ու հասկանալի, որ այսքանով կարելի է պարզված համարել ոչ միայն այս, այլև ընդհանրապես բոլոր խաչքարերի վրա փորագրված հիմնական զարդերի բովանդակությունը»[60], *իսկ չի ընդունում, որպես զարդարվեստի հիմնական մոտիվ, արևը. «Զարդարվեստի հիմնական մոտիվների մեջ արևը գտել է իր արտահայտությունը հողի, օդի և ջրի հետ միասին ի դեմս չորս էլեմենտներին նվիրված հարուստ ու բազմապիսի մոտիվների։ Արևն առանձին որպես զարդարվեստի հիմնական մոտիվ, ուրիշ արտահայտություն չունի»*[61]։

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Ա. Շ. Մնացականյանի հիշյալ օրնամենտալ մոտիվների ծագման հարցի ուսումնասիրման մեթոդը որոշ տարակուսանք է հարուցում։ Անվիճելի փաստ է, որ, ինչպես այլուր, այնպես էլ հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել արևի պաշտամունքը, որի վերապրուկները, քանդակագործության և ֆոլկլորի ձևով, հասել են մեզ։ Հայ իրականության մեջ Արան արևի աստվածություն էր։ Ստրուվեն հավանական է գտնում, որ Շամիրամն էլ հանդես էր գալիս որպես ջրի աստվածություն, կապված արևի աստվա-

* *Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1960 թվականի № № Ե-ից, Զ-ից, Է-ից և Ը-ից։*

59 Ա. Շ. Մնացականյան. «Հայկական զարդարվեստ», Երևան, 1955 թ., էջ 185։

60 Նույն տեղում, էջ 186։

61 Նույն տեղում էջ 182։

Նկար 51

ծության՝ Արալի հետ[62]։ Հին հայերը պաշտել են և լուսինը[63]։

Հայկական խաչքարերի, հատկապես խաչելության խաչքարերի վրա էլ նկատելի են այդ երկու լուսատուները, արեգակը աջից և լուսինը ձախից։ Նրանց երևույթը քրիստոնեական արվեստի մեջ առնված է ոչ միայն ավետարանական պատմության հետևանքով, այլև հեթանոսական ազդեցությամբ, ասում է Գ. արքեպիսկոպոս Հովսեփյանը[64]։

Խաչելության խաչքարերի վրա, հատկապես ԺԳ դարից սկսած, այդ լուսատուները երևում են, իսկ մյուս խաչքարերի վրա, սովորաբար քանդակվում էր միայն արևը, խաչից ներքև, կլոր ճառագայթաձև վարդյակի պատկերով, որն հետագայում վեր է ածվում մի գեղաքանդակ զարդամոտիվի։ Սովորաբար այնտեղ, որտեղ երկու լուսատուներն են երևում, այնտեղ խաչից ներքև կլոր վարդյակ չի քանդակվում, իսկ այնտեղ որտեղ խաչից ներքև կլոր վարդյակն է դրվում, այդ խաչքարի վրա երկու լուսատուները չեն երևում։

62 Հ. Հ. Պիոտրովսկի, «Ուրարտուի պատմությունը և կուլտուրան», Երևան, 1944 թ., էջ 278 (ռուսերեն)։

63 Հ. Ղ. Մ. Ալիշան, «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց», Վենետիկ, 1910 թ., էջ 173 և 340։

64 Գ. արքեպիսկոպոս Հովսեփյան, «Հավուց թառի Ամենափրկիչը...», էջ 56—57։

Այդպիսի օրինակներ շատ կարելի է բերել։ Այսպես, օրինակ, Ջին-գյոլի 1271 թվականի, Հաղբատի 1273 թվականի, Թումանյանի (Դսեղի) 1281 թվականի, Աշտարակի 1268 թվականի և Մշակավանքի 1291 թվականի խաչելության խաչքարերը դրսից լավագույն նմուշներն են հանդիսանում։ Առհասարակ այդպիսի խաչքարերը կոչվում են «ամենափրկիչ» և ներկայացնում խաչելության տեսարաններ (նկար 52, 53)։

ԽԱՉՔԱՐԵՐԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ոմանք կարծում են, որ խաչքարերը լոկ գերեզմանաքարեր են։ Բայց, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, այդ եզրակացությունը այնքան էլ ճիշտ չէ, նամանավանդ հնագույն խաչքարերի նկատմամբ։ Խաչքարերը հիմնականում գերեզմանաքարերի են վերածվում ԺԳ դարից սկսած։

«Խաչքարը,— գրում է Ս. Մալխասյանցը, — երկայն ու բարակ սալաքար է, քարե տախտակ, որի վրա քանդակված է զարդարուն խաչ և որ գտնվում էր ուխտատեղերում



Նկար 52

կամ նշանավոր մարդկանց գերեզմանների վրա»[65]։

Գրեթե նույնպիսի սահմանում են տալիս Ն. Մ. Տոկարսկին[66], Խալփախչյանը[67] և շատ ուրիշներ։

Խաչքարերը հայ արվեստի հնագույն այն հուշարձաններն են, որոնք, իրենց զարգացման ընթացքում ձեռք բերելով որոշ պրոպորցիոնալ չափեր (2 մ. բարձրություն, 1 մ. լայնք և 0,25 մ. հաստություն) և խաչը ունենալով իրենց արևմուտք նայող գլխավոր ճակատի վրա, կանգնեցվում էին տարբեր առիթներով և բազմապիսի ֆունկցիոնալ նշանակությամբ։ Նրանք հայ քանդակագործական արվեստի յուրահատուկ հուշարձաններ են։

Խաչքարերի արվեստի ավելի բազմակողմանի ուսումնասիրությունը մեծապես կնպաստի հայ ժողովրդի մշակույթի և պատմության ուսումնասիրության գործին։



Նկար 53



Նկար 54

Խաչերը (թևավոր քարե խաչաքանդակները), իսկ հետագայում խաչքարերը, որոնք կանգնեցված են եղել Հայաստանի տարբեր բնակավայրերում, ունեցել են պաշտամունքային և այլ ֆունկցիոնալ նշանակություն։

Ագաթանգեղոսի վկայությամբ՝ խաչքարերը կանգնեցվել են ճանապարհների, փողոցների, հրապարակների ելքի ու մուտքի վրա. «Եւ յամենայն քաղաքս հայոց և ի գեօղս և յաւանս և յագարակս երևեցուցանէր զտեղիս տան Աստուծոյ։ Բայց ոչ առնէր յայտ զհիմնարկութեան զհետ, և ոչ սեղան ուրեք ուղղեալ յանուն Աստուծոյ, զի չունէր զպատիւ քահանայութեան. այլ լոկ պարսպէր քաղաքորմով զտեղիսն, և կանգնէր զնշան տէրունական խաչին։ Նոյնպէս և յելս և ի

65 Ս. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», Բ, Երևան, 1944 թ., էջ 244։

66 Ն. Մ. Տոկարևի, «Հին Հայաստանի ճարտարապետությունը», Երևան, 1946 թ., էջ 309 (ռուսերեն)։

67 Խալփախչյան, «Ճարտարապետության ընդհանուր պատմություն», Ա, Մոսկվա, 1958 թ., էջ 668 (ռուսերեն)։

մուտս ճանապարհաց և ի փողոցս և ի հրապարակս և ի ճանապարհակիցս պահ և ապաւէն զերկրպագելն յամենեցունց զնոյն նշան կանգնէր»[68]։

Մեր պատմիչների ակնարկությունները՝ «նշան խաչին տէրունական», վերաբերում են խաչերին և խաչքարերին։

Խաչերի ու խաչքարերի այդպիսի տեղադրությունները հնում նշում էին ճանապարհների, փողոցների, հրապարակների ելքն ու մուտքը, նրանց սահմաններն ու բաժանումները։

3. ճանապարհացույց և սահմանաքարեր.
4. արձանագրություն-կոթողներ, թագավորական, իշխանական և կրոնական օրենքներն հրապարակող, ինչպես նաև որպես նվիրատվական արձանագրություն-հուշարձաններ.
5. հաղթանակների, ազատագրության և կամ նշանավոր դեպքերի առթիվ կանգնեցված հուշարձաններ.
6. արվեստի կոթողներ։
7. կոթող-մահարձաններ, բնակչության գրեթե բոլոր խավերի՝ իշխանի թե հասարակ քաղաքացու, հոգևորի թե աշխարհիկի համար։



Նկար 55

Բացի այդ, խաչքարերի վրա հանդես եկող օրնամենտալ զարդամոտիվներով հայ ժողովուրդը արտահայտել է երբեմնի իր հավատալիքներն ու պատկերացումները, զբաղմունքն ու կենցաղը։

Խաչքարերը կանգնեցվել են որպես՝

1. պաշտամունքային կոթողներ, հավանաբար նաև որպես ցասման քարեր[69].
2. հիշատակարաններ, զանազան շինությունների, վանքերի, եկեղեցիների, կամուրջների, աղբյուրների, գյուղերի ու քաղաքների կառուցման առթիվ.

Բերենք մի քանի օրինակներ խաչքարերի այդ ֆունկցիաներն ապացուցող.

ա. Մարտիրոս գյուղի (Ազիզբեկովի շրջան) աղբյուրի գլխին դրված խոշոր բազալտե խաչքարը (նկար 54), որն ունի 1283 թվակիր հետևյալ արձանագրությունը.

«Ես Մխիթար, որդի Դեղկայ, հրամանաւ իշխանաց իշխանին Պռոշոյ եւ որդւոյ իւրոյ Հասանայ, շինեցի զգիտս Մարտիրոս եւ կանգնեցի զխաչս ի դուռն սբ վկայարանիս ի բարեխաւսութիւն ինձ եւ ամուսնոյն իմոյ Մամիրին և որդւոյ իմոյ Խարիբշանին եւ

68 Ագաթանգեղոս, «Պատմութիւն Հայոց», էջ 397։
69 Մ. Սրեղյան, «Վիշապներ...», էջ 39։

դստեր իմոյ Ռուզուքանին: Կազմեցաւ ձեռամբ Շնորհատրին:

Ի թվին ՉԼԲ: Որք ընթեռնուք յիշեցէք»:

Ուշագրավ է, որ հաճախ խաչքարերը կանգնեցվում էին աղբյուրների վրա, ջուր բերելու կապակցությամբ և կամ կամուրջների կառուցման առթիվ։ Դրանցից հիշատակության արժանի են հետևյալները.

1190-ական թվականներին Զաքարեի որդի իշխանաց իշխան Սարգսի դուստր և Աբաս թագավորի կին Վանենին կառուցել է Սանահնի նշանավոր կամուրջը։ Այդ առթիվ կամրջի գլխին նա կանգնեցնում է մի համեստ խաչքար (նկար 55), որը ջարդվել է 1796 թվականին, Աղա-Մահմադ-խանի արշավանքի ժամանակ։ Արձանագրությունը հետևյալն է.

«...[ա]զգին բագրատունեաց: Ես՝ Վանենի. դուստր իշխանաց իշխան Սարգսի, որդո Զաքարէի, կին Աբասա թագաւորի, որ կիսաւարեայ վախճանեալ խաւարեցոյց զմեզ, շինեցի զկամուրջս եւ կանգնեցի զխաչս յիշատակ նմա եւ մխիթար ինձ եւ ի կեանս ծնողաց եւ եղբարց իմոց: Յիշեցէք ի Քս Յս»[70]։

բ. Հաղթանակների և երկրի ազատագրության առթիվ կանգնեցված խաչքարերից մեզ հայտնի են Զաքարե ամիրսպասալարի 1 200 թվականին կանգնեցրած խաչքարը Ամբերդում (նկար 35) և Կոշ գյուղի ճանապարհին ԺԲ դարի վերջում Պետրոս «ականատես» վարդապետի կանգնեցրած խաչքար-կոթողը (նկար 34)։

Այդպիսին է նաև Դսեղի (Թումանյանի) «Սիրուն խաչ» խաչքարը 1251 թվականին քանդակված, որի կառուցողն է Հայրադեղը, «որդի Թերին» (նկար 42)։ Նման տիպի խաչքարեր շատ կան, որոնց մի մասն էլ առանց արձանագրությունների։

գ. Բազմաթիվ են նաև զանազան սրբերին նվիրված խաչքարերը, որոնց հանդիպում ենք հաճախ։ Դրանցից է, օրինակ, Ալավերդուց քիչ հեռու Աթոռիկ կոչվող գյուղատեղի 1279 թվակիր խաչքարը մենավոր ծառի տակ, որն ունի հետևյալ արձանագրությունը (նկար 56).

«Կամաւրն Այ ի տրութեն պարոն Սադունին եւ ի հայրապետութեան Տր Յովանիսի անյախք գիտնականի, մեք ծառայ սբ



Նկար 56

նշանիս Մանուէլ ամուս... էս ես Գրիգորէս Յովհանէս կանգնեցաք զխաչս յանուն Սրբոյն Սարգսի զաւրավարի եւ տվաք գեղիս տեղի գերեզմանի մեր հէրեն հողէ յիշատակ մեզ եւ որք երկրպագէք սրբո նշանիս յիշեցէք զմեզ եւ ծնողսն մեր, զհոգեւոր զաւակսն մեր զՊետրոս, զՊաւղոս, զՄանուէլ: Ի թվիս ՉԻԸ»[71]։

դ. Որպես գերեզմանաքարեր խաչքարերը հիմնականում հանդես են գալիս ԺԲ—ԺԳ դարերից և որոնց թիվը հազարների է հասնում։

ե. Խաչքարերի մի զգալի մասն էլ կանգնեցված են «հոգու փրկության» և կամ «արեշատության» համար։ Դրանցից են Դսեղի վանքի, Սանահնի, Հաղբատի վանքերի շատ այլ խաչքարեր։

Վերև բերված օրինակներով և նշված կիրառական նպատակներով կանգնեցված

70 Կ. Ղաֆադարյան, «Սանահնի վանքը...», էջ 185—187։ Տե՛ս նաև Գ. արքեպիսկոպոս Հովսեփյան, «Խաղբակեանք կամ Պռոշեանք», Ա մաս, էջ 15, որտեղ «Վանենի»-ն կարդացված է «Անանե»։ Այս խաչքարն այժմ վերականգնվում է Հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից։

71 Այս խաչքարը բազալտից է, նույնպիսի բազալտե պատվանդանի վրա։ Արձանագրությունը գտնվում է խաչքարի և պատվանդանի վրա։ Խաչքարն այժմ վայր է ընկել իր պատվանդանի վրայից։

խաչքարերի թիվը չի սահմանափակվում։ Հետագա ուսումնասիրությունները նորանոր լրացուցիչ տեղեկություններ մեզ կտան խաչքարերի արվեստի մասին։

Անվիճելի է, որ վանքերի, եկեղեցիների, իշխանատների և այլ հուշարձանների վրա եղած վիմական արձանագրությունները, նրանց քանդակները և այդ հուշարձանների ոճական առանձնահատկությունները շատ արժեքավոր են հայ ժողովրդի պատմության և մշակույթի ուսումնասիրության համար։

Հայ հնագույն շատ գործիչների անունները և նրանց մասին որոշ տեղեկություններ մենք իմանում ենք խաչքարերի վիմական արձանագրություններից։ Զլինեին Վեցիկի, Պողոսի, Շնորհավորի, Երեմիա երաժշտի, Քիրամի, Մխիթար հորինողի, Մոմիկի, Գալձակի և այլոց կերտած ու կանգնեցրած խաչքարերը, ապա մենք գրեթե ոչ մի տեղեկություն ու գաղափար չէինք ունենա նրանց գործունեության մասին։



Նկար 57

Խաչքարերը հաճախ ծառայում են որպես սկզբնաղբյուր մեր ժողովրդի պատմության ուսումնասիրության համար։ Նրանք մեր մի շարք հուշարձանների, այդ թվում Աղջոց Ս. Ստեփանոս, Կուքի, Օծոպի և այլ շատ վանքերի մասին մեզ որոշ տեղեկություններ են տալիս և լրացնում մատենագրական տեղեկությունները։ Օրինակ, այդ հուշարձաններում մնացած խաչքարերը և նրանց արձանագրությունները գրեթե միակ կենդանի հիշատակարաններն են հանդիսանում։ Խաչքարերը մեզ մատնացույց են անում նաև Հայաստանի երբեմնի հնագույն բնակավայրերն ու գյուղերը, նրանց պատմական անունները։

Միջնադարյան Հայաստանի խաչքարեր քանդակող վարպետները խաչքարերի արձանագրությունները քանդակել են հիմնականում երկու ձևով՝ խորաքանդակ (փորագիր) և բարձրաքանդակ (ելնդավոր) գրերով։

Նրանցից ոմանք խաչքարերի վրա փորագրվելիք նախադասությունը ճիշտ և համաչափ տեղադրելու համար նախապես խաչքարի վրա թեթև գծեր են փորագրել և ապա գրել արձանագրությունը։ Օրինակ՝ Սամվել կազմողը Էջմիածնի Ս. Հռիփսիմեի տաճարի բակում գտնվող խաչքարի վրա յուրաքանչյուր տառը քանդակել է 5 ուղղահայաց գծերի միջև, ընդ որում 6 գիծը կազմում է 4 սմ.։ Խաչքարն այժմ երկու մասի է

ջարդված և գտնվում է Ս. Հռիփսիմեի բակում (նկար 57):

Միջնադարում խաչքարերի երեսը երբեմն ներկել են կարմիր օխրայով։

Խաչքարերը հիմնականում պատրաստվում էին միակտոր տափակ, բարակ քարից։ Պատվանդանները քանդակվում և պատրաստվում էին առանձին քարերից, սրբատաշ, երբեմն էլ անտաշ քարերից։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բուն խաչքարերը քանդակվում էին նաև երկու առանձին քարերից (բացի պատվանդանից)։ Օրինակ, բուն խաչքարը քանդակվում էր միակտոր քարից, իսկ գառնիզային մասը առանձին, որը խաչքարի գլխին ագուցվում էր երկու ձևով։ Այսպես, օրինակ, Հաղբատի երկու քարից քանդակված որոշ խաչքարերի վրա հանված են քարե ելուստներ 5—15 սմ. բարձրությամբ, որի վրա էլ ագուցվում է խաչքարի գառնիզային մասը։ Երբեմն էլ խաչքարի գառնիզային մասը բուն խաչքարի վրա ագուցվում էր երկաթե երկու կեռերի և կամ գամերի միջոցով։

Սովորաբար խաչքարերի պատվանդանները պատրաստվում են միակտոր և կամ մի քանի կտոր քարերից, քանդակված և ոճավորված բարձրադիր հարթակների վրա, որոնց մեջ ագուցված են խաչքարերը։

Պատվանդանները իրենց հերթին ունենում են պարզ և քանդակազարդ գառնիզներ, հիմնականում ուղղանկյուն հատակագծերով. դրանք լինում են նաև աստիճանաձև, խարսխաձև և երբեմն էլ խաչքարերին պատվանդան են ծառայում ուղղակի բնական բարձրադիր ժայռերը։

Նկար 58

Միջնադարյան հայ վարպետները ԺԲ—ԺԳ և հետագա դարերում խաչքարեր քանդակում են նաև ժայռերի մեջ։ Դրանցից լավագույններն են Գեղարդի և Քարագլխի (Եղեգնաձորի շրջան) խաչքարերը (նկար 58):

Խաչքարերի արվեստի ուսումնասիրությունը կարող է որոշ նորություններ ու լրացուցիչ վկայություններ հաղորդել հայ ժողովրդի մշակույթի և պատմության ավելի խոր ուսումնասիրության ուղղությամբ։

ՊՐՈՖ. ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ



Օգոստոսի վերջերին Մոսկվայում կայացած արևելագետների համաշխարհային 25-րդ կոնֆերանսին մասնակցելուց հետո, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրավերով Մայր Հայրենիք այցելեց Հարվորդի համալսարանի դասախոս պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսեսյանը։

Հարգելի դիտնականը հայկական մանրանկարչության վերաբերյալ մի շարք դասախոսություններ կարդաց Մատենադարանում և Գիտությունների ակադեմիայում։

Սեպտեմբերի 15-ին, հինգշաբթի օրը, պրոֆ. Տեր-Ներսեսյանը ուխտի եկավ Ս. Էջմիածին և նույն օրը հյուրը եղավ Մայր Աթոռի միաբանության։

Երբ Վեհափառ Հայրապետը հովվապետական այցելությամբ գտնվում էր Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում, պրոֆեսորին պարգևատրել է Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի աղամանդակուռ ոսկյա շքանշանով, որպես բարձր գնահատություն արվեստագետի գիտական արժեքավոր վաստակի՝ հայ մանրանկարչության բնագավառում նրա մատուցած անգնահատելի ծառայությունների համար։

Ի պատիվ հարգելի հյուրին Վեհարանում կազմակերպվեց մրգասեղան, որին ներկա եղան Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Տիրամայրը, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմը և վանքի պաշտոնեությունը։

Հարգելի պրոֆեսորին առաջինը ողջունեց Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, ապա գիտնականի համառոտ կենսագրությունը ներկայացրեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը։ Գերաշնորհ Տ. Եզնիկ սրբազանը խոսեց ընդհանրապես հայ կնոջ դերի մասին հայ մշակույթի զարգացման բնագավառում, իսկ հոգեշնորհ Հարությունվարդապետ Մատենջյանը պատմեց իր հուշերը Օրմանյանի մասին, որի քրոջ աղջիկն է հարգելի պրոֆեսորը։ «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը խոսեց պրոֆեսորի գիտական, մեծարժեք վաստակի և միաժամանակ օտարներին հայ արվեստը ծանոթացնելու և պրոպագանդելու բնագավառում նրա մատուցած անգնահատելի ծառայության մասին։

Բարեշնորհ Խորեն և Հակոբ սարկավագները երգեցին հայրենասիրական երգեր։

Ընդունելության վերջում հարգելի հյուրը շատ հետաքրքիր, համառոտ դասախոսություն կարդաց հայ մանրանկարչության առանձնահատկությունների և մանրանկարչական դպրոցների դերի և նշանակության մասին հայ մշակույթի պատմության բնագա-

վառում։ Դասախոսությունը լսվեց մեծ հետաքրքրությամբ և գոհունակությամբ։

***

Պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսեսյանը ծնվել է 1896 թվականի սեպտեմբերի 5-ին Կոստանդնուպոլսում, Նախնական կրթությունն ստացել է Եսայան վարժարանում, իսկ 1908—1915 թվականներին հաճախել է Կոստանդնուպոլսի անգլիական վարժարանը։

Համաշխարհային առաջին պատերազմին Ս. Տեր-Ներսեսյանը հեռանում է Կոստանդնուպոլսից և գնում Զվիցերիա ու սովորում ժընևի համալսարանում 1916—1918 թվականներին։ 1919 թվականին նա մտնում է Փարիզի Սորբոնի համալսարանը և ստանում հետևյալ դիպլոմները. լիցենցիատ դպրության (1920 թ.), դիպլոմ պատմության բարձրագույն ուսմանց (1921 թ.), դիպլոմ բարձրագույն ուսմանց դպրոցի (1925 թ.) և դոկտ. դպրության (1936 թ.)։ Հարգելի պրոֆեսորը 1927—1929 թվականներին դասախոսություններ է կարդացել Սորբոնի համալսարանում բյուզանդական արվեստի մասին։

Պրոֆ. Ս. Տեր-Ներսեսյանը 1930 թվականին հաստատվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում։ 1930—1946 թվականներին նա դասախոսել է Վեսլեյ կոլեջում, որտեղ 1938—1946 թվականներին միաժամանակ եղել է Գեղարվեստի պատմության բաժնի դիրեկտոր։ 1946 թվականից Վաշինգտոնի Հարվորդի համալսարանի բյուզանդական արվեստի պրոֆեսորն է։

Պրոֆ. Ս. Տեր-Ներսեսյանի գրչին են պատկանում հայ արվեստի և հայ մանրանկարչության վերաբերյալ մի շարք ուսումնասիրություններ, որոնցից են հետևյալները.

«Բարաղամի և Հովասափի վեպի նկարազարդումը», Փարիզ, 1837 թ., 2 հատոր (ֆրանսերեն)։

«Վենետիկի Մխիթարյան հայրերի Մատենադարանի ԺԲ, ԺԳ և ԺԴ դարերի հայերեն նկարազարդ ձեռագրերը», Փարիզ, 1936—1937 թ. թ., 2 հատոր (ֆրանսերեն)։

«Հայաստան և Բյուզանդական կայսրությունը», Քեմբրիջ, 1946 թ. (անգլերեն)։

«Ջեստեր-Բիտտի հավաքածու։ Ցուցակ հայերեն ձեռագրերի», Դուբլին, 1958 թ., 2 հատոր (անգլերեն)։

Հարգելի պրոֆեսորը միաժամանակ ստորագրել է բազմաթիվ արժեքավոր հոդվածներ հայ և օտար պարբերական մամուլի մեջ հայ արվեստի մասին։ Այդ հոդվածներից են «Էջմիածնի Տաճարի սկզբնական մանրանկարների թվականը» (անգլերեն), «Է դարի նկարների մի ապոլոգիա» (Վրթանես Քերթողի «Ցաղագս պատկերամարտից» գրության ուսումնասիրությունը) (ֆրանսերեն), «Դժոխքի ավերման մասին ճառերի հայերեն թարգմանությունը» (անգլերեն)։

Հարգելի պրոֆեսորը գտնվում է իր ուժերի հասունության և ստեղծագործական թափի մեջ։

Ցանկանալով առողջություն հարգելի պրոֆեսորին, մաղթում ենք, որ նա ապրի երկար՝ նոր և արժեքավոր ուսումնասիրություններով հարստացնելու համար դարավոր հայ մշակույթը։

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ



ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱԿՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ.— Հայ ժողովրդի ազգային վերածնդի 40-ամյա փառապանծ տոնի կապակցությամբ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կոլեկտիվը հրատարակում է մի շարք արժեքավոր գրքեր։

Արտադրության է իջեցվել «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» խորագիրը կրող փաստաթղթերի և նյութերի ստվարածավալ ժողովածուն։ Գրքի կազմության աշխատակցել են մի շարք անվանի գիտնականներ և պատմագետներ։

Արվեստի բնագավառում ուշագրավ է ռեսպուբլիկայի արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու Սարգիս Մելիքսեթյանի «Ուրվագիծ սովետահայ թատրոնի պատմության» խորագրով շափազանց հետաքրքրական և արժեքավոր աշխատությունը, բաղկացած 26 գլուխներից։

Սովետական իշխանության տարիներին ժողովրդական տնտեսության ձեռք բերած աննախընթաց նվաճումների մասին կպատմի Տնտեսագիտության ինստիտուտի կազմած «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 40 տարում» (1920—1960 թ. թ.) գիրքը, որի նյութերը գրել են տնտեսագիտական գիտությունների դոկտոր-պրոֆեսորներ, թեկնածուներ և ավագ գիտական աշխատողներ։

Լույս կտեսնի նաև պատմական գիտությունների թեկնածու Հ. Կարապետյանի «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում» վերնագրով գիրքը։

ՏՈՒՆ ԵՆ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ՊԱՆԴՈՒԽՏ ՁԵՌԱԳՐԵՐԸ.— Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-մատենադարանը տարեցտարի հարստանում է նոր ձեռագրերով։ 1922 թվականին այն ուներ ընդամենը 4160 ձեռագիր, իսկ այժմ արդեն ունի 11 հազար հայերեն և օտար լեզուներով ձեռագրեր, 4000 պատառիկ ու պահպանակներ։

Այստեղ ձեռագրեր են ստացվում աշխարհի բոլոր մասերից։ Պոլսահայ բանասեր Թորոս Ազատյանի այրին Մատենադարանին է նվիրել 54 ձեռագիր։ Եղեգնաձորից ստացվել է Դիոնիսիոս Թրակացու մի ձեռագիր «Քերականութիւն», ԺԶ դարի գործ։ Հայրենասիրության լավ օրինակ է ցուցաբերում հալեպաբնակ Հովսեփ Դեղեյանը։ Նա իր սուղ միջոցներով օտար ափերում աստանդական մնացած ձեռագրեր է ձեռք բերում և նվիրում Մատենադարանին։ Միայն վերջին երկու տարում նա նվիրել է 19 ձեռագիր։ Դեռ վերջերս Մատենադարանը ստացավ 1193 թվականին գրված մի «Շարակնոց», որ իր տեսակի մեջ ամենից հինն է։

Մի առանձին հետաքրքրություն է ներկայացնում 1676 թվականին արտագրված «Բժշկարան»-ը, որ ամփոփում է Ամոդդովլաթ Ամասիացու, Գալիանոսի, Ասար Սեբաստացու և ուրիշ հայ և օտարազգի բժիշկների գործերը։ Դա մի ինքնատիպ հանրագիտարան է վիրաբուժության, ծննդաբերության, ակնաբուժության, ատամնաբուժության և այլ հիվանդությունների մասին։ Թուրք բարբարոսների ձեռքով ամայացած Աղթամարի թանկարժեք դպրանոցի ձեռագիր հարստությունները հրաշքով փրկվելով, երկար թափառումներից հետո այսօր իրենց հանգիստն են գտել Մատենադարանի հյուրընկալ կամարների տակ, եթե ոչ լրիվ, գոնե մեծ մասով։

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանը ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի միջոցով ստացավ գրող և մշակույթի գործիչ Կարեն Միքայելյանի արխիվի մի կարևոր և ստվար մասը։

Արխիվը պարունակում է ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ գրողների, գիտնականների և կուլտուրայի գործիչների ստեղծագործություններ, հոդվածներ և ուսումնասիրություններ, որոնք իր ժամանակին ուղարկվել էին Մոսկվա՝ «Գարուն» ալմանախի խմբագրության, որի կազմում էր նաև Կ. Միքայելյանը։

Ստացված նյութերի թվումն են Ա. Շատուրյանի, Հ. Հակոբյանի, Ռ. Սևակի, Զ. Եսայանի, Մ. Մանվելյանի, Ս. Զորյանի և շատ ուրիշների գեղարվեստական գործերը, ուսումնասիրություններն ու հոդվածները։

Առանձին արժեք են ներկայացնում Կ. Միքայելյանին ուղղված նամակները, որոնց թիվը հասնում է

200-ի։ Նամակներ կան Դ. Վարուժանից, Դ. Դեմիրճյանից, Հ. Խանզադյանից, Շ. Կուրղինյանից, Ա. Կարինյանից, Իոննա Բրուսովայից, Վ. Բրյուսովից, Ա. Խանջյանից, Մ. Սարյանից, Շիրվանզադեից, Ե. Չարենցից, Ա. Մռավյանից և բազմաթիվ ուրիշներից։

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՑ ԿԻՆՈԱՇԽԱՏՈՂԻ ՆՎԵՐԸ.—Աշխարհի տարբեր երկրներից մեր արևաշող Հայաստանի մայրաքաղաքն այցելած սփյուռքահայ տուրիստները լինում են նաև Երևանի պատմության թանգարանում։ Նրանք խոր և անջնջելի տպավորություններով են հեռանում այնտեղից։

Տուրիստներից մեկը՝ սուդանահայ կինոաշխատող Ազատ Խաչիկյանը, իր խոստման համաձայն թանգարանին է ուղարկել «Գեներալ Գորդոնի հիշողությունները» անգլերեն հազվագյուտ գիրքը։ Նվիրատուն գրքին կցել էր գրքից թարգմանված 20 մեքենագրված էջ, որտեղ խոսվում է Ղրիմի պատերազմի (1856—1857 թ. թ.) մասին, մանրամասն նկարագրելով ռուս—թուրքական պատերազմական գործողությունները, պատմում է նաև Հայաստանի և հայ ժողովրդի կենցաղի ու սովորությունների մասին։ Անգլիացի զորավարը մեծ գովեստով է խոսել հայկական ճարտարապետական կոթողների մասին։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ.—Հայտնի է, թե արևելագիտության մեջ ինչպիսի հետաքրքրություն է եղել Հայաստանի և մանավանդ հայերենի նկատմամբ։ Դեռևս անցած դարից սկսած արտասահմանյան մի շարք գիտական և ուսումնական հաստատություններում ստեղծվել են հայագիտական ամբիոններ, որոնց մի մասը շարունակում է մինչև այսօր էլ գործել։ Հայ ժողովրդի պատմության, նրա մշակույթի նկատմամբ արևելագետների ցուցաբերած հետաքրքրության վկայությունն են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանում գտնվող բազմաթիվ նամակները, որոնք փոխանակվել են հայ գիտնականների և համաշխարհային հռչակ վայելող արևելագետ հայագետների միջև։

ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.—Օգոստոսի 19-ին Թբիլիսիից Երևան ժամանեցին Մոսկվայում կայացած արևելագետների միջազգային 25-րդ կոնգրեսի բազմաթիվ մասնակիցներ։ Արտասահմանյան գիտնականներին ուղեկցում էին Հայաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Բ. Պիոտրովսկին, Ասիայի երկրների ինստիտուտի գիտաշխատող Ի. Գ. Սանովիչը և ուրիշներ։ Սևանում հյուրերին դիմավորեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահության, ակադեմիայի ինստիտուտների պատասխանատու աշխատողները։

Հյուրերը Հայաստանում ծանոթացան պատմական հուշարձաններին, այցելեցին Մատենադարանը, թանգարանը, հանդիպումներ ունեցան ռեսպուբլիկայի գիտնականների հետ։

Արևելագետների 25-րդ կոնգրեսին մասնակցում էին նաև հայտնի գիտնական, Ամերիկայի Հարվարդ համալսարանի դասախոս Սիրարփի Տեր-Ներսեսյանը, Հ. Քյուրտյանը, Հ. Վ. վարդապետ Հովհաննիսյանը և ուրիշներ։

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՆԱԽԱԳԻԾԸ.—Վերջերս անցկացվեց հայ մեծանուն բանաստեղծ Ա. Իսահակյանի հուշարձանի նախագծի մրցանակաբաշխություն։ Ներկայացված մի շարք աշխատանքներ բարձր գնահատվեցին ժյուրիի կողմից։ Քանդակագործ Ս. Բաղդասարյանի և ճարտարապետ Լ. Սադոյանի ներկայացրած նախագիծը արժանացավ երկրորդ մրցանակի։

Որոշվեց հուշարձանի կառուցման համար ընդունել Ս. Բաղդասարյանի և Լ. Սադոյանի ներկայացրած նախագիծը։ Հուշարձանը կդրվի Մաալիևի պողոտայի և Բարեկամության փողոցի ձախ անկյունում գտնվող պուրակում։ Հուշարձանի բացումը տեղի կունենա Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակին։

ՆՈՐ ԳԻՐՔ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ.—Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը, Արվեստի ինստիտուտի հրատարակությամբ, լույս ընծայեց «Ալեքսանդր Թամանյան» խորագրով մի ժողովածու։ Այն կազմել, ծանոթագրել և առաջաբանն է պատրաստել Լևոն Զորյանը։ Գիրքը լույս է տեսել 3000 օրինակ տպաքանակով, 283 էջ։

Գրքում տեղ են գտել մեծ ճարտարապետի հոդվածները, նրա գործունեության վերաբերյալ փաստաթղթեր, ինչպես նաև մի շարք հուշեր իր ժամանակակիցներից գրի առնված։

ՊԱՅՔԱՐԸ ՔԱՂՑԿԵՂԻ ԴԵՄ.— Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրության օնկոլոգիական դիսպանսերը, Վենինականի ու Կիրովականի դիսպանսերներն ու ռեսպուբլիկայի բոլոր շրջանները ընդգրկող 27 օնկոլոգիական կաբինետները մշտական հսկողություն են հաստատել բնակչության լայն խավերի վրա՝ քաղցկեղով յհիվանդների վաղաժամ հայտնաբերման և հաջող բուժման նպատակով։ Այս տարվա 5 ամսում քաղաքներում և շրջաններում օնկոլոգիական ստուգման է ենթարկվել 150 000 մարդ։ Հայտնաբերված հիվանդները բուժվում են Ռեսպուբլիկական դիսպանսերի և Ռենտգենոլոգիայի ու օնկոլոգիայի ինստիտուտի համատեղ շանքերով։ Երկու հաստատություններն էլ ունեն ռենտգեն բուժման ու գամմաթերապիայի ժամանակակից ապարատներ, ինչպես նաև ռադիոակտիվ ներգործության պրեպարատներ։ Հիվանդանոցում կատարվում են բարդ վիրահատություններ՝ ախտահարված մասերը հեռացնելու համար։ Զգալի թիվ են կազմում այն հիվանդները, որոնք ժամանակին հայտնաբերվել են և բուժվել։ Նրանց նկատմամբ սահմանված է մշտական հսկողություն։

ՔԱՂԱՔ ԼՃԱՓԻՆ.—Նոր է շինվում Հրազդան քաղաքը, Հրազդանի ջրերից առաջացած լճի ափին։

Դեռ նոր ձևավորվող փողոցների երկայնքով արագ բարձրանում են վարդագույն շենքեր։ Ավելի քան 100 բանվոր-ծառայողներ իրենց համար այս տարի կառուցել են արևոտ, լուսավոր բնակարաններ։ Ավարտվել են 300 տեղանոց լայնէկրան կինոթատրոնի շենքի քարային ու ծածկային աշխատանքները։ Շրջկենտրոնը կիսող ճանապարհի եզրին կառուցվում է Պետրանկի շրջանային բաժանմունքի շենքը։ Լճի ափին, ժայռի վրա, բարձրացել է ճաշարանը իր ընդարձակ պատշգամբով։

Բլրի ստորոտում տարածվել է քաղաքի բանվորական ավանը։ Ամեն օր հարյուրավոր էքսկուրսանտներ և հովեկներ քայլում են այդ նոր թաղամասով, հիանում ծաղկանոցներով, թիավարում լճի կապույտ հարթության վրա, լողանում մեջը։

Հրազդանն ունի դպրոցներ, կուլտուրայի տուֆակերտ տուն, հարուստ գրադարաններ, արդյունաբերական ու մթերային խանութներ, հիվանդանոց, պոլիկլինիկա, կահավորված բուժկաբինետներ, մանկական կոնսուլտացիայի շենք։ Շրջկենտրոնում աշխատում են 19 բժիշկ և 70 բուժաշխատող։ Այս տարի շրջանի աշխատավորության առողջապահության նպատակին հատկացվել է մոտ 4 000 000 ռուբլի։

Դարձ ժամանակից Հրազդանը կդառնա մեր ռեսպուբլիկայի խոշոր ինդուստրիալ կենտրոններից մեկը։ Ոչ հեռու գտնվող Ջրառատ գյուղի մոտ կկառուցվեն լեռնաքիմիական կոմբինատի արտադրական բազայի օբյեկտները, որոնց գործարկումից անմիջապես հետո կսկսվեն բուն կոմբինատի շինությունները։ Ցոթնամյակում շարք կմտնեն ատաղձագործական կոմբինատն ու սառցարանը։

Շուտով կավարտվի Հրազդան—Սևան երկաթուղու կառուցումը և Հրազդանի արդիական գեղեցիկ կայարանից գնացքները կուրան դեպի Սևանի գեղածիծաղ ափերը։ Հրազդանում շոգեքարշին կփոխարինի էլեկտրաքարշը։

ԵՐԵՎԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՆՈՐ ԿԱՅԱՆԸ։— Նորքի գեղատեսիլ լանջին, մոտ հինգ հեկտար տարածության վրա ծավալվել է Երևանի հեռուստատեսային նոր կայանի կոմպլեքսի շինարարությունը։ Դա կլինի երկրի խոշոր կայաններից մեկը, որը կհագեցվի հեռուստատեսային տեխնիկայի ժամանակակից կատարյալ ապարատներով ու սարքավորումներով։

Նոր կայանը ունենալու է մի քանի խոշոր կորպուսներ։ Դրանցից կենտրոնականը, որի շինարարությունը արդեն սկսվել է, ճակատով դեպի քաղաքն ուղղված հինգհարկանի տուֆակերտ գեղեցիկ շինություն է։ Նրա կենտրոնում, 3 հարկի բարձրությամբ, կլինի ստուդիայի 600 քառ. մետր մակերեսով մեծ դահլիճը։ Գլխավոր կորպուսը կունենա նաև 80 քառ. մետր մակերեսով ստուդիական փոքր դահլիճ, կինոդիտման շորս սրահ, ձայնագրական տեխնիկայի բաժին, դերասանական հարդարանքի, հանգստի սենյակներ, բազմաթիվ օժանդակ հարմարություններ։

Մեկ այլ շենքում կտեղադրվի նկարչական-դեկորացիոն արվեստանոցը, որտեղ կստեղծվեն մինչև 200 քառ. մետր մակերեսով նկարներ և դեկորացիաներ։ Այս շենքի, ինչպես նաև 1 600 լիամետրաժ կինոնկարների ժապավենների պահեստի շինարարությունն արդեն ավարտված է։ Կոմպլեքսի կառույցներից մեկն էլ լինելու է Երևան—Թբիլիսի ռադիոռելեային գծի գլխային կայանը, որով մեր ռեսպուբլիկան հեռուստատեսային փոխադարձ կապ կհաստատի երկրի այլ վայրերի հետ։

Նոր կայանի ամբողջ տերիտորիան կլինի բուսապատված, կունենա գեղեցիկ ծառուղիներ, շատրվանող ջրավազան։ Նրա մի անկյունում, 2 500 քառ. մետր մակերեսով հրապարակում, կկառուցվի ճոպանուղու կայանը, որով հեռուստատեսային կենտրոնը և մերձակա թաղամասերը օդից կկապվեն Զարենցի փողոցի հետ։

ՑՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 121
ՇԱՐԱԿՆՈՑ

ԹԵՐԹԵՐԸ՝ 414։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 35, յուրաքանչյուրը 12 թերթից։ Միայն հետևյալ պրակները բաղկացած են տարբեր թվով թերթերից՝ ԻԹ՝ 10, ԺԴ, Ի, ԻԲ, և ԻԳ՝ 11։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 12,5×9,5×6 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ խունացած թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ։ Կաշվի վրա ճնշումով նկարված են ծաղիկներ և այլ զարդարանքներ։ Կաշին մաշվել է, կռնակի մասը պոկվել, իսկ կազմի զույգ բռնիչները ընկել են։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ սկզբում և վերջում կան մեկական թերթ թուղթ։— ՎԻՃԱԿԸ բավարար, սակայն որոշ թերթեր թափվել են։ Կազմի կռնակն էլ պոկվել է։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 21։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։ Ամբողջ ձեռագիրը խազագրված է միաժամանակ հայկական խազերով։— ՁԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան նկարներ միջակ գեղեցկությամբ սրբերի և հրեշտակների, մարդկանց և թռչունների, կենդանիների և խաչերի, կիսախորաններ, լուսանցազարդեր, մարդագրեր, զարդագրեր, թռչնագրեր, թագավորներ (45բ և 48ա), վեղարավոր հոգևորական (43բ)։ Կան հետևյալ անձանց նկարները՝ ձկան բերնից դուրս եկող Հովհան մարգարեն (63բ), Սարգիս զորավար (66ա), Ս. Գրիգոր Լուսավորիչ (111բ և 231ա), Հովհաննես Մկրտիչ (164ա և 229բ), Ս. Հռիփսիմե (237ա), Ս. Մեսրոպ (289բ), Ս. Հակոբ Մծբնա հայրապետ (292ա)։— ԳՐԻՉԸ՝ Ավետիս քահանա։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ անհայտ։— ԾԱՂԿՈՂԸ՝ Կիրակոս քահանա Ավընդացի—ժամանակը՝ 1526 թ.։— ՎԱՅՐԸ՝ Մայեկաց երկրի Ավընդաց գյուղ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված Կոստանդնուպոլսից, տիկին Նվարդ Ֆերիդի կողմից։ Ձեռագիրը վերանորոգվել է որոշ ժամանակ առաջ։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 2բ.—Ձեռամբ մեղաւոր և անպիտան Կիրակոսի Աւընդացոյ ծաղկեցաւ և կազմեցաւ շարակնոցս և զխաչն արարի. վասն որոյ աղաչեմ զձեզ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք։ Ես ձեզ հող և մոխիր եմ։ Քանզի յոյժ յանցող եմ պատուիրանացն Աստուծոյ։ Վա՛յ է ինձ հազար բերան։

Թ. 414ա.— [Փ]առք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Որ ետ կարողութիւն անարժան և անիմաստ, եղկելի և մեղսամած գրչիս անպիտան և անարժան քահանայի, հասանել ի յաւարտ տառիս որ կոչի շարակնոց, ի լաւ և յընտիր աւրինակէ, որ է խլիկ կոչեցեալ, ձեռամբ յոգնէմեղ գրչի մեղաւոր Աւետիսի։ Շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի ի յերկիրս Մայեկաց, ի գեղջս որ կոչի Աւընդանց։ Ընդ հովանեաւ Սրբոյն Պետրոսի և Պաւղոսի և Սուրբ Գէորգեա զաւրավարին, ի թվականութիւնս հայոց (մի տառ ջնջված է այստեղ) ՀԸ (պետք է լինի շատ հավանաբար ՋՀԸ=1526), ի դառն և ի նեղ ժամանակիս յորում նեղիմք և հալածիմք ի յանաւրինաց և ի հարկապահանջութենէ, յորո զատեսցէ և փրկեսցէ Տէր Աստուած զամենայն քրիստոնեայքն, ամէն։

Թ. 414բ.—[Ե]և արդ անիմաստ և անպիտանս ի գրչոց ա... որացեալ և հեռացեալ յամենայն բարեաց, Աւետիս սուտ անուն քահանայ, գրեցի զշարակնոցս բազում աշխատութեամբ, և վարպետն իմ Տէր Կիրակոս ծաղկեաց և կազմեաց։

[Ա]րդ, որք հանդիպիք սմա, կարդալով և կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զԱւետիս գծող սորա և զծնաւղսն իմ զՏէր Վարդան և զՄախմուրն և զամենայն արեան մերձաւորսն իմ, և զվարպետն իմ զՏէր Կիրակոսն և զիւր ծնաւղն զՄուսէսն և զԹոխիկն, և զամենայն արեան մերձաւորս նորա, ամէն։ Դարձեալ կրկին անգամ աղաչեմ զձեզ զի լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք ստացողի գրոցս։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կազմի առաջին կողքի կռնակը՝
Թէ հացուցէք վերիհիշեալ Մարգրէս
Նիկեղոյսս աղի եղբայր է։
Մէ շարականս։
Սկզբի պահպանակի առաջին երեսի վրա՝
Ի վայելումն լուսահոգի Կուլիճանի որդի Մագարին Աստուած վայելումն տայ, լաւ կը տայ։ Թուին Ռ Բ՚ ԼԴ-ին (1785)։

Այս շարական Թօհմախենց լուսայհոգի Նիկեղոս աղի որդի Գիրիգորին և իւր որդիք Նիկեղոսին և իւր եղբայրք Մարգարին։ Աստուած բարի վայելում տացէ, ամէն։

Թ. 1բ.—Ի յիշատակ հանգուցեալ քրոջս՝ տիկին Շուշան Գաբլանի, ծնեալ Եղեկելի և Երանեակի Թօխմախեան դուստր, կը նուիրեմ Ս. Էջմիածնի մատենադարանին, ձեռամբ Թուրքիոյ հայոց պատրիարքին Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի։ Կ. Պոլիս, 10 սեպտեմբեր 1955, Նուարդ Ֆերիտ։

№ 122
ՇԱՐԱԿՆՈՑ

ԹԵՐԹԵՐԸ՝ 23։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 3, որից Ա՝ 7, իսկ Բ և Գ՝ 8 թերթ։—ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ երկայնությունը՝ 9,5 սմ., լայնությունը՝ 6 սմ. (կազմված է նախորդ № 121 ձեռագրի վերջում)։ ՆՅՈՒԹԸ՝ խունացած թուղթ։—

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1960 թվականի № № Ե-ից և Է-ից։

ԿԱՋՄԸ՝ կաշեպատ տախտակ։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չոր։— Վիճակը՝ քայքայված և հետագայում կազմըված։— Բազմաթիվ թերթեր թափվել են։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն։ Տողերը՝ 22։— ԳՇՈՒՄՆԵՐԸ՝ ոչ ճնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։ Նախորդ՝ № 121 Շարակնոցի նման ձայնագրված է հայկական խազերով։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ունի մի քանի շատ հասարակ զարդագրեր և թռչնագրեր։— ԳՐԻՉԸ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ ԺԷ—ԺԸ դ. դ.։— ՎԱՅՐԸ՝ անհայտ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սուն ձեռագրից պակասում է զգալի մասը, իսկ մնացյալը կազմված է № 121 ձեռագրի վերջում։

№ 123
ԱՒԵՏԱՐԱՆ
(ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ)

ԹԵՐԹԵՐԸ՝ 189։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 17, յուրաքանչյուրը 12 թերթից։ Միայն հետևյալ պրակները բաղկացած են տարբեր թվով թերթերից՝ ԺԷ՝ 3, Ա և ԺԵ՝ 10, Ը և ԺԱ՝ 11։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 10,8×7,5×3,5 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ նուրբ մագաղաթ։— ԿԱՋՄԸ՝ կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով զարդեր են նկարված։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ սկզբում և վերջում կան երկուական թերթ հաստ մագաղաթ, եբրայերեն գրությամբ, տեքստը՝ Հին Կտակարանից։ Հնությունը շատ հավանաբար ԺԲ—ԺԳ դարերից առաջ է։ Կան հայերեն և հունարեն հիշատակագրություններ։— Վիճակը՝ բավարար։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 13—16։— ԳՇՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան մի քանի շատ հասարակ թռչնագրեր և զարդագրեր միայն։— ԳՐԻՉԸ՝ Գրիգոր քահանա։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1335 թ։— ՎԱՅՐԸ՝ Կովառա դղյակ (Կիլիկիա)։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սուն ձեռագիրը ստացված է Վեհափառ Հայրապետի միջոցով։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 188ա.— Արդ, աղաչեմ զամենեսեան վասն սիրոյն Քրիստոսի յիշեսջիք ի մաքուր աղաւթս ձեր զմեղուցեալ և զանարժան գրող սորա զԳրիգոր նեաստ քահանայ, զհայր Թադէոսի Վասիլն և զծնաւղսն իմ զՍիրուհի, զՏէր Դաւութոյն (թ. 188բ) և զմայրն իմ զՄարիոն և զամենայն ննջեցեալսն իմ զորոյ աղաւթիւք ձերոյ՝ Յիսուս Քրիստոս և բարիխաւսութեամբ սուրբ ծնաւղին իւր հանգիստ և ողորմութիւն շնորհեսցէ յիշողացդ և յիշեցելոցն ի միւս անգամ գալըստեանն իւրոյ, զհանգիստ յաւիտենական պարգևեսցէ նոցին և ամենայն հաւատացելոց։ Որպէս յիշէք նոյնպէս դուք յիշեալ լիջիք ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ, որում փառք յաւիտեանս, ամէն։

Գրեցաւ սա ի թվականիս հայոց ՉՁԴ (1335), ընդ հովանաւոր Սուրբ Աստուածածնայ(թ. 189ա)նիս, յանառիկ դղեակս, որ այժմ Կովառայ կոչի, ի հայրապետութեանն Տեառն Յակոբա և ի թագաւորութեան Լևոնի, և դառն և ի վատ ժամանակիս որ ենք այժմ ի Սղար, զի և յանկարծակի գերեալ զազգս մեր անաւրէն ազգն իսմայելացւոց, զորոյ Տէր հատուցէ նոցա ըստ գործոց նոցա և առցէ ի նոցանէ զվրէժն մեր, և ողորմեսցի մեզ Տէր Յիսուս Քրիստոս, նոյնպէս և ձեզ և ամենայն հաւատացելոց և նմա փառք յաւիտեանս, ամէն։

№ 124
ՄԱՅՐ ՏՕՄԱՐ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՃԱՐԻ

ԹԵՐԹԵՐԸ՝ 279։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 25, յուրաքանչյուրը 12 թերթից, բացառությամբ՝ ԻԴ պրակը 14 թերթից, է պրակը 10 թերթից, Գ, Դ, Ե, Զ պրակները 8 թերթից և Բ պրակը 6 թերթից։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 38,5×24,5×5 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ դեղնած հաստ թուղթ։—ԿԱՋՄԸ՝ կաշեպատ ստվարաթուղթ, որի երկու երեսներին ճնշումով նկարված են խաչեր և այլ զարդեր։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չորս թերթ սկզբից և բազմաթիվ թերթեր վերջից։— Վիճակը՝ բավարար։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն։—ՏՈՂԵՐԸ՝ փոփոխական, 4—5-ից մինչև 44։—ԳՇՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։—ԳԻՐԸ՝ բոլորգիր։—ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չկա։ Գլխատառերը մեկը կապույտ, իսկ մյուսը կարմիր ներկով են գրված։— ԳՐԻՉԸ՝ Երեմիա վարդապետ։—ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Սիմեոն կաթողիկոս Երևանցի։—ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1768 թ.։—ՎԱՅՐԸ՝ Ս. Էջմիածնի վանքը։—ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սուն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի Դիվանատան արխիվից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. թ. 5ա—172բ.— Ս. Էջմիածնի Մայր Տաճարի ոսկեղենների, արծաթեղենների, շորերի և այլ բոլոր իրերի ու անոթների ցուցակը, որոնց վերնագրերը տրվում են ստորև.

Թ. 5ա.— Կարգ սրբութեանց՝ թէ որքան գոն ի Սուրբ Աթոռոջս (67 հատ)։

Թ. 17ա.— Կարգ խաչից մեծաց և փոքունց (262 հատ)։

Թ. 25ա.— Սուրբ նշանք և արծիւք, զորս կաթողիկոսունք արկանեն ի պարանոցս (5 հատ)։

Թ. 28ա.— Դարձեալ կարգ խաչից (18 հատ խաչ և պատկեր)։

Թ. 39ա.—Սկիհք արծաթեղէնք, հանդերձ իւրեանց մաղզմայիւքն (38 հատ)։

Թ. 46ա.— Մասնատուփք (9 հատ մասնատուփ, մաղզմա, տուփ և բաժակաման)։

Թ. 47ա.— Բուրվառք (10 հատ)։

Թ. 53ա.— Տապանակք ձեռաց՝ արծաթեայք (11 ձեռքի և անդաստանի տապանակ և գավազան)։

Թ. 58ա.— Կանթեղք արծաթեայք (30 հատ)։

Թ. 62ա.— Սաղաւարտք արծաթեայք (7 հատ)։

Թ. 65ա.— Սաղաւարտք սրմայագործք, յորոց ոմանք մարգարտով են, կամ որք յաղնիւ ճոթից են (15 հատ)։

Թ. 67 ա.— Վակասք արծաթեայք (14 հատ)։

Թ. 70ա.— Վակասք սրմայագործք, յորոց ոմանք մարգարտով են, կամ որք յաղնիւ ճոթից են (20 հատ)։

Թ. 73ա.— Գօտիք արծաթեայք, յորոց ոմանք մարգարտով են (45 հատ արծաթյա գոտիներ, զունարներ և դեղին պղնձյա գոտիներ)։

Թ. 77ա.— Աղաւնիք արծաթեայք (5 հատ արծաթյա աղավնի և մեռոնի տուփ)։

Թ. 78ա.— Քշոցք արծաթեայք (10 հատ արծաթյա և պղնձյա քշոց և կոթ)։

Թ. 79ա.— Աւետարանք արծաթապատք բազմոցի, թէ՛ գրչեայք և թէ՛ տպեալք (36 հատ, որոնց 26 հատը ձեռագիր Ավետարաններ, իսկ մեկը ձեռագիր խազատետր են։ Սրանցից բացի կան նաև մի հատ Ավետարանի կողք և 8 հատ տպագիր Ավետարաններ։ Բոլոր ձեռագրերը, որոնց մեծ մասը մագաղաթյա են, պատկանում են ԺԷ դարին, բացի № 13-ը, որը գրված է 1595 թվականին)։

Թ. 82ա.— Աւետարանք մեծադիրք՝ բազմեցուցանելիք ի վերայ սեղանոյ (19 հատ, բոլորն էլ ձեռագիր, մի մասը մագաղաթյա։ Սրանց մի հատը պատկանում է ԺԳ դարին, երեքը՝ ԺԵ դարին, ութը՝ ԺԷ դարին, երկուսը՝ ԺԸ դարին, իսկ հինգը՝ անորոշ են)։

Թ. 83ա.— Աւետարանք Ատենի, որք ի բազմոցի ևս դնին (8 հատ, բոլորն էլ տպագիր)։

Թ. 89ա.— Աշտանակք և շամադանք արծաթեայք (2 հատ)։

Թ. 92ա.— Ջահք արծաթեայք (չի գրված)։

Թ. 94ա.— Գաւազանք արծաթեայք (13 հատ)։

Թ. 97ա.— Գաւազանք հասարակք՝ թէ՛ փայտեայք և թե՛ ոսկրայք (51 հատ)։

Թ. 100ա.— Գոգնոցք արծաթեայք (3 հատ)։

Թ. 102ա.— Գոգնոցք սրմայագործք և կլապիտոնագործք, նաև որք յաղնիւ ճոթից են (29 հատ)։

Թ. 106ա.— Զգեստք պատուականք, որք կաթողիկոսականք են (3 ձեռք կաթողիկոսական զգեստ, որոնցից մեկը պատկանում է Աղեքսանդր կաթողիկոսին, իսկ մյուսը՝ Հակոբ պատրիարքին)։

Թ. 115ա.— Եպիսկոպոս ձեռնադրելոյ հանդիսի զգեստ՝ զորս զգենուն գղերիկոսքն, որք ուրուն կապեցեալ են ի միում բողչայոց և են յիշատակ Սիմէօն սրբազան կաթուղիկոսին, զորս ի մեծէն Պոլսոյ եբեր, որք են այսոքիկ (2 շուրջառ և 16 շապիկ)։

Թ. 116ա.— Զգեստք հասարակք, թէ՛ պատուականք և թէ՛ հասարակաց գործածելիք։

Կարգ թագից (26 հատ)։

Թ. 122ա.— Կարգ եմիփորոնաց (30 եմիփորոն և 8 խաչ)։

Թ. 127ա.— Կարգ փորուրարաց (55 հատ)։

Թ. 132ա.— Կարգ բազպանաց (51 զույգ)։

Թ. 137ա.— Կարգ շուրջառաց (142 շուրջառ և 3 սրմայագործ խաչ)։

Թ. 146ա.— Կարգ կերպասեայ շապկաց (282 շապիկ և 6 սրմայագործ օձիք)։

Թ. 149ա.— Կարգ կտաւեղէն շապկաց (153 հատ)։

Թ. 151ա.— Կարգ հողաթափից (18 զույգ)։

Թ. 153ա.— Ուրարք սարկաւագաց (87 հատ)։

Թ. 155ա.— Ջաթխիք՝ մահրամայք, սքօլք և այլք սոցապիսիք (632 կտոր)։

Թ. 157ա.— Սփոռոցք Սրբոյ Իշման տեղւոյն (4 հատ)։

Թ. 157բ.— Ծածկոցք սեղանի (12 հատ)։

Խալիչայք սկհւոյ (80 հատ)։

Խալիչայք սեղանաց (40 հատ)։

Խալիչայք խորհրդանոցի (5 հատ)։

Թ. 158ա.— Ծածկոցք խաչի (34 հատ)։

Թ. 158բ.— Ծածկոցք Սրբալոյս Մեռոնի ղազանին (26 հատ)։

Թ. 159ա.— Գրքակալաց շապիկք (6 շապիկ, 4 ծածկոց և 40 բողչա)։

Թ. 161ա.— Փարտայք մեծ և փոքր (22 հատ)։

Թ. 162ա.— Արծիւք (3 արծիվ խալիչաներ, 4 կերպասյա խալիչաներ և 13 ժամարարի խալիչաներ)։

Թ. 163ա.— Վարագոյրք Մեծ Սեղանին (4 հատ)։

Վարագոյրք Սուրբ Իշման տեղւոյն (5 հատ)։

Թ. 163բ.— Վարագոյրք Սուրբ Ստեփաննոսի և Սուրբ Յոհաննիսի սեղանացն (4 հատ)։

Վարագոյրք Սուրբ Յակոբայ և Սուրբ Լուսաւորչի սեղանացն (16 հատ)։

Վարագոյրք որիշք՝ որք վերոյգրեալ սեղանացն ոչ համեմատին (9 վարագույր և մեկ զուգուր վարագույրի)։

Թ. 165ա.— Պատկերք արծաթապատք, որք դնին ի բազմոցի (9 հատ)։

Թ. 166ա.— Պատկերք մանր որք ի վերայ սեղանաց դնին կամ ի բազմոցի (48 հատ)։

Թ. 167բ.— Խաչվառք մանր (8 հատ)։

Խաչվառք մեծք (13 հատ)։

Թ. 168ա.— Պատկերք մեծք, որք ի յորմոց կախին։

Ի մէջ մեծի խորանին Սուրբ Աստուածածնի, են այսք (7 հատ)։

Ի Սուրբ Յակոբայ խորանն և առ ընթեր նորին ի վերին դասն՝ են այսք (7 հատ)։

Ի Սուրբ Լուսաւորչի խորանն և առ ընթեր նորին ի ներքին դասն՝ են այսք (5 հատ)։

Ի Սուրբ Ստեփաննոսի խորանն են այսք (3 հատ)։

Թ. 168բ.— Ի Սուրբ Յովհաննիսի խորանն են այսք (6 հատ)։

Ի յետին դասն են այսք (60 հատ)։

Թ. 170ա.— Խորհրդատետրք (13 հատը ձեռագիր, իսկ 4-ը՝ տպագիր։ Ձեռագրերից 5-ը պատկանում են ԺԷ դարին, 2-ը՝ ԺԸ դարին, իսկ 6-ի գրչության ժամանակն անհայտ է)։

Թ. 170բ.— Հասարակ գրեանք եկեղեցւոյ (7 հատը ձեռագիր, իսկ 11-ը՝ տպագիր։ Ձեռագրերից 3-ը Հայսմավուրք են, 2-ը՝ Ատենի Ժամագիրք, մեկը՝ Աստվածաշունչ, մեկը՝ Մաշտոց։ Հայսմավուրքներից մեկը ԺԷ դարի է, իսկ մնացյալ երկուսը ԺԸ դարի։ Մնացյալ 4 ձեռագրերի գրչության ժամանակը անհայտ է)։

Թ. 171ա.— Շորեղէնք որք սփռին յեկեղեցւոջն (88 հատ խալի և այլ տեսակի շորեր)։

Թ. 171բ.— Պղնձեղէն, երկաթեղէն, փայտեղէն և այլ ինչ անօթք եկեղեցւոյ, որք ի միասին գրին ի ներքոյ խառն (262 զանազան կտորներ՝ ջահեր, աշտանակներ, մըկրատներ, պնակներ, ափսեներ, ամպհովանիներ, ծնծղաներ, զանգակներ, խաչի պատվանդաններ, լապտերներ, գրակալներ, սանդուխներ, աթոռներ, մոմակալներ, խնկատուփեր և զանազան այլ տեսակի իրեր)։

5ա—172բ թերթերում մանրամասն կերպով սիստեմատիկ ցուցակագրված իրերից կարևորագույնները նկարագրված են ամենայն ճշտությամբ և մանրամասնությամբ, տալով ճշգրիտ տեղեկություն թե ո՞ւմից է նվեր տրված տվյալ իրը կամ զգեստը, ո՞ր տեղից է բերված, ո՞ւմ է տրված իրը և նվեր։ Տրվում է արժեքավոր որոշ իրերի մանրամասն նկարագրականը, թե քանի՞ գրամ ոսկի ունի, թե վրան քանի՞ հատ քար կա և այլն։

Ձեռագրի 173ա—279բ բոլոր թերթերը մաքուր են և ոչ մի գրություն չկա։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 5ա.— Դաւթար և հաշուագիր անօթից և սպասուց Սրբոյ և Միածնաիջի Տաճարիս, թէ ոսկեղինաց, թէ արծաթեղինաց, թէ պղնձեղինաց, թէ շորեղինաց և թէ այլ նիւթեղինաց, որ ի Ռմէէ (1768) թուոջ մերում, հրամանաւ Տեառն Սիմէօնի Սրբազան Կաթուղիկոսին, և ձեռամբ նորին սպասաւոր Մկրտիչ, և գրագիր Երեմիա, և լուսարար Գրիգոր վարդապետացն գրեցաւ երկու օրինակ ի ձեռն միոյ գրողի, զորս Սրբազան Վեհըն կնքեալ՝ զմինն ետ լուսարարին՝ զի առ նա մնասցէ, և զմիւսն ի Վեհարանոջն եդ ի պահեստի։ Զի ըստ ժամանակի յորժամ գիտել կամիցի որ զհաշիւ սպասուց Սրբոյ Տաճարիս, համաձայնութեամբ երկուց դաւթարացս գիտասցէ։

(Գլխավոր այս հիշատակարանից բացի յուրաքանչյուր իրի կամ առարկայի ցուցակի վերջավորության տրվում է այդ իրի ընդհանուր քանակը և ապա գրվում է հետևը).

... ի Ռմէէ (1776) թուոջս, և ի յօգոստոսի Ժ գրեցաւ։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 5ա.— Թերթի վերևում կա Սիմեոն Կաթողիկոսի սեփական ձեռագրով գրված գրությունը և իր անձնական հայրապետական կնիքը, կնքված կարմիր թանաքով, կապգրով, որը վերծանվում է՝

է

Սիմէօն Կաթողիկոս

ՌՄԺԹ

Սիմեոն կաթողիկոսի նոտրգիր ձեռագիրը՝

Այս դաւթարս Բ հատ գրեցաւ միևնոյն իմով գիտութեամբ և հրամանաւ, վասն որոյ և կնքեցի ի յսկզբանս և ի վերջ գրեցելոցն ի հաւաստութիւն սոցա։

Թ. 172բ.— Ցուցակի, այսինքն ձեռագրի վերջում կա Սիմեոն Կաթողիկոսի նույն կնիքը և ինքնագիր ձեռագիրը հետևյալ բովանդակությամբ.

Այս դէվթէրս Բ հատ գրեցաւ մինչև ցասուտ միևնոյն իմով գիտութեամբ և հրամանաւ, վասն որոյ և զայսքանս գրեցի իմով ձեռամբ և կնքեցի ի յսկզբանն և ի վերջ գրեցելոցս ի հաւաստութիւն սոցա։

№ 125

ՄԱՅՐ ՏՕՄԱՐ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՃԱՐԻ

ԹԵՐԹԵՐԸ՝ 277։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 25, յուրաքանչյուրը 12 թերթից, բացառությամբ է պրակը 10 թերթից, Ա պրակը 9 թերթից, Գ, Դ, Ե, Զ պրակները 8 թերթից, իսկ Բ պրակը 6 թերթից։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 39×25×5 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ դեղնած հաստ թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ կարտոն, որի երկու երեսներին ճնշումով նկարված են խաչեր և այլ զարդեր։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ երկու թերթ սկզբից և բազմաթիվ թերթեր վերջից։— ՎԻՃԱԿԸ՝ բավարար։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն։— ՏՈՂԵՐԸ՝ փոփոխական, 4—5-ից մինչև 14 տող։— ԳՇՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չկա։ Գլխատառերը մեկը կապույտ իսկ մյուսը կարմիր ներկով են գրված։— ԳՐԻՉԸ՝ Երեմիա վարդապետ։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Սիմեոն Կա-

թողիկոս Երևանցի։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1768։— ՎԱՃԱՐԸ Ս. Էջմիածնի վանք։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի Դիվանատան արխիվից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. թ. 3ա— 170բ.— Ս. Էջմիածնի Մայր Տաճարի ոսկեղենների, արծաթեղենների, շորերի և այլ բոլոր իրերի ու անոթների ցուցակը, որ տառ առ տառ նույնն է նախորդ ձեռագրի (№ 124) հետ, բացառությամբ 26բ թերթից, որտեղ չեն արձանագրված արծաթյա մի խաչը և երկու պատկերները, որոնք № 124 ձեռագրի համապատասխան բաժնում (թ. 28բ) նշված են «Ի ՌՄԻԵ թուոջս և ի յօգոստոսի Ժ գրեցաւ» փոքր հիշատակարանից անմիջապես հետո։ Սա ավելացված է հետագայում, նույն գրչի կողմից, որը մոռացված է ավելացվել նույնպես № 125 ձեռագրում։

Ձեռագրի 171ա—277բ բոլոր թերթերը մաքուր են և ոչ մի գրություն չկա։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 3ա.— Դաւթար և հաշուագիր անօթից և սպասուց Սրբոյ և Միածնաիջի Տաճարիս թէ ոսկեղինաց, թէ արծաթեղինաց, թէ պղընձեղինաց, թէ շորեղինաց և թէ այլ նիւթեղինաց, որ ի ՌՄԺԷ (1768) թուոջ մերում, հրամանաւ Տեառն Սիմէօնի Սրբազան Կաթուղիկոսին, և ձեռամբ նորին սպասաւոր Մկրտիչ, և գրագիր Երեմիա, և լուսարար Գրիգոր վարդապետացն՝ գրեցաւ երկու օրինակ, ի ձեռն միոյ գրողի, զորս Սրբազան Վեհրն կնքեալ՝ զմինն ետ լուսարարին՝ զի առ նա մնասցէ, և զմիւսն ի Վեհարանոջն եդ ի պահեստի։ Զի ըստ ժամանակի յորժամ գիտել կամեցի ոք զհաշիւ սպասուց Սրբոյ Տաճարիս, համաձայնութեամբ երկուց դաւթարացս գիտասցէ։

(Գլխավոր այս հիշատակարանից բացի յուրաքանչյուր իրի կամ առարկայի ցուցակի վերջավորության տրվում է այդ իրի ընդհանուր քանակը և ապա գրվում է հետևյալը).

...Ի ՌՄԻԵ (1776) թուոջս, և ի յօգոստոսի Ժ գրեցաւ։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 3ա.— Թերթի վերևում կա Սիմեոն Կաթողիկոսի սեփական ձեռագրով գրված գրությունը և իր անձնական հայրապետական կնիքը, կնքված կարմիր թանաքով, կապգրով, որը վերծանվում է՝

է

Սիմէօն Կաթողիկոս

ՌՄԺԹ

Սիմեոն կաթողիկոսի նոտրգիր ձեռագիրը՝

Այս դէվթերս Թ հատ գրեցաւ միենոյն իմով գիտութեամբ և հրամանաւ, վասն որոյ և կնքեցի ի սկիզբանս և ի վերջ գրեցելոցն ի հաւաստութիւն սոցա։

Եփրեմ կաթողիկոսի նոտրգիր ձեռագիրը՝

Եփրեմ սակրի, որ այժմ իբր կաթողիկոս կոչեցեալ, 1810 յամի Տեառն նոյեմբերի 6։

Թ. 170բ.— Ցուցակի՝ այսինքն ձեռագրի վերջում կա Սիմեոն Կաթողիկոսի նույն կնիքը և ինքնագիր ձեռագիրը հետևյալ բովանդակությամբ.

Այս դէվթերս Բ հատ գրեցաւ մինչև ցասա մինենոյն իմով հրամանաւ և գիտութեամբ, վասն որոյ և ի յսկզբանն և ի վերջ գրեցելոցս զայսքանս իմով ձեռամբ գրեցի և կնքեցի ի հաւաստութիւն սոցա։

№ 126

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ

(Պարսկերեն)

ԹԵՐԹԵՐԸ՝ 94։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 10, յուրաքանչյուրը 10 թերթից։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 21×14,5×1 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ գեղնած և խունացած հասարակ թուղթ։— ԿԱԶՄԸ՝ չունի։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չկան։— ՎԻՃԱԿԸ՝ քայքայված է և որոշ մասեր թերի։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 14։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ առանց ճնշման։— ԳԻՐԸ՝ հստակ և գեղեցիկ ձեռագիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ամբողջ ձեռագիրը գրված է կարմիր թանաքով կազմված շրջանակների մեջ։— ԳՐԻՉԸ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ ԺԷ—ԺԸ դ. դ.։— ՎԱՃԱՐԸ՝ անհայտ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ պարսկերեն լեզվով սույն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի Դիվանատան արխիվից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պարունակում է քառյակներ և այլ բանաստեղծություններ Հաֆեզից, Սաադուց և ուրիշներից։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կան հետևյալ էջերում՝ 4բ, 7ա, 7բ, 8ա, 8բ, 9ա, 9բ, 10ա, 10բ, 11ա, 11բ, 12ա, 12բ, 13ա, 13բ, 14ա, 14բ, 15ա, 15բ, 22բ, 26ա, 46բ, 81ա, 90ա, 91ա։

№ 127

ԱՒԵՏԱՐԱՆ

(Վրացերեն լեզվով, Գիորգի Մթածմիդելու խմբագրությամբ)

ԹԵՐԹԵՐԸ՝ 275։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 35, յուրաքանչյուրը 8 թերթից, ի բաց առյալ հետևյալ պրակները, որոնք ունեն Ա՝ 5, Բ՝ 6, Թ՝ 7, ԼԲ՝ 9 թերթ։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 29×23×8 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ գեղնած և կեղտոտած հաստ մագաղաթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ, որի երկու երեսները զարդարված են։ Կազմի առաջին երեսին կա խաչելության նկարը, երկու հրեշտակներ, չորս սրբեր, շրջանակ և հունարեն լեզվով երեք բառեր, բոլորն էլ մինայով գործված, միջնադարյան փորագրության արվեստի շատ արժե-

քավոր և գեղեցիկ նմուշներ։ Դժբախտաբար խաչելության նկարի կեսը՝ մեջքից ներքև, շրջանակի ձախակողմյան մասը, ներքևի գրությունի մոտ ¾ մասը ընկել են։ Սրանցից բացի կազմի վրա կան արծաթյա հասարակ այլ զարդեր, երեք քարեր (4-ըն ընկել է), խաչելությունը պատկերացնող մի խաչով շղթա, որոնց բոլորն էլ ամրացված են կազմին կլորագլուխ մեխերով։ Կազմի կոնակի մասը կենտրոնում ունի արծաթյա մի խաչ, ինչպես նաև գունավոր շորս քարեր, գոգավոր երեք մեծ ձվաձև ապակիներ (4-ըն ընկել է), որոնցից մեկի տակը գրություն կա և արծաթյա այլ զարդեր, շինված հասարակ ոճով։ Կենտրոնական խաչը և շրջանակի զարդերը բոլորն էլ կազմին ամրացված են կլորագլուխ մեխերով։ Բացի այդ կան նաև երկու շղթաներ։ Ձեռագրի առաջին և վերջին մագաղաթյա թերթերը մեխերի սրածայր ծայրերով միացված են կազմի երկու կողքերին։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ սկզբում և վերջում երկուական թերթ մագաղաթ։— ՎԻՃԱԿ՝ լավ։— ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ երկսյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 20—21։— ԳՇՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ հին վրացերեն (նուսխա խուցուրի)։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ նկարները միջնադարյան մանրանկարչության հիանալի նմուշներ են։ Ձեռագիրն ունի գեղեցիկ թռչունների, ծառերի, ծաղիկների, գազանների և մարդկանց նկարներ, ինչպես նաև շատ սիրուն մի հատ մարդագիր (211ա), գազանագիր (248բ) և միացած թռչնագիր ու առյուծագիր (82ա)։ Կան շորս ավետարանիչների մեծ նկարները, շատ սիրուն (8բ, 81բ, 130բ, 210բ), ինչպես նաև 12 հատ գեղեցիկ կիսախորաններ։ Սրանցից բացի կա նաև շորս էջ համաբարբառ (3-րդ և 4-րդ թերթերի երկուական երեսները), շատ գեղեցիկ մանրանկարչությամբ։ Ձեռագրի վերջում գտնվող ցուցակները (Բ. Բ. 268—273) նկարազարդված չեն։— ԳՐԻՉԸ՝ անհայտ։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ անհայտ։— ԾԱՂԿՈՂԸ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ շուրջ ԺԲ—ԺԴ դ. դ։— ՎԱՅՐԸ՝ շատ հավանաբար Վրաստան։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը 1952 թվականին հանված է Ս. Էջմիածնի Մայր Տաճարի թանգարանի հյուսիսային խորանից։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բ. 273բ.— Խել Վլասիտա զնդկի (այսինքն՝ Վլասի ձեռքով է ցուցակը)։

Բ. 274ա.— (Հիշվում է Իշխանցի եպիսկոպոսապետ Մակրա (պետք է լինի Մակարի) և թիվը նշանակված է 1650)։

Վերոհիշյալներից բացի կան նաև բազմաթիվ հիշատակագրություններ հետևյալ էջերում. 1բ, 2ա, 2բ, 3ա, 3բ, 4ա, 4բ, 5բ, 6ա, 8բ, 9ա, 10ա, 24բ, 46բ, 48բ, 50բ, 51բ, 79բ, 80ա, 80բ, 81ա, 81բ, 82ա, 126բ, 129բ, 130ա, 130բ, 131ա, 132ա, 156բ, 205ա, 209բ, 210ա, 210բ, 211ա, 211բ, 212ա, 251բ, 267բ, 268ա, 272բ, 273ա, 273բ, 274ա, 274բ, 275ա։

№ 128

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

ԹԵՐԹԵՐԸ՝ 32։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 3 հատ (10, 14 և 8 թերթ)։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 28,8×21,5×3 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ գեղեցած և կեղտոտած հատ թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տավարաթուղթ։—ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի։— ՎԻՃԱԿԸ՝ անբավարար։ Որոշ թերթեր պատռված են։ Վերջում պակասավոր է։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 19։— ԳՇՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ունի մի հատ գեղեցիկ կիսախորան (Բ. 1ա), նաև շատ սիրուն թռչնագրեր, երկու սրբանկարներ, լուսանցազարդեր և երկու քահանաների նկարներ։—ԳՐԻՉԸ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ ԺԷ—ԺԸ դ. դ.։— ՎԱՅՐԸ՝ հավանաբար Սպահան։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Տ. Քերովբե քահանա Շահբազյանը հայրենադարձի ժամանակ 1946 թվականին սույն ձեռագիրը Սպահանից բերում է Հայրենիք, իսկ 1953 թվականին էլ Տիրուհին նվիրում է Մայր Աթոռի ձեռագրատանը։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բ. 1ա.— Տեր Յակոբոսն։

Քահանա ան չէ երկոտասան մի։

Բ. 6բ.— (Կա պարսկերեն լեզվով մի կնիք, երեք օրինակով)։

Բ. 15բ.— Պատարագամատույցս պատկանում է Տ. Քերովբ քահանայ Շահբազեանին 1930-ից։

№ 129

ԱՒԵՏԱՐԱՆ

ԹԵՐԹԵՐԸ՝ 226։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 19, յուրաքանչյուրը 12 թերթից, բացի վերջինից, որ 10 թերթ է։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 26,5×18,5×6,5 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ գեղեցած հատ թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ, տեղ-տեղ կաշին պատռվել է։ Կաշու վրա ճնշումով նկարված են խաչ և որոշ զարդեր։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ ձեռագրի սկզբում կա երկու հատ թերթ մագաղաթ մանր երկաթագիր հայերեն գրությամբ (Ժ—ԺԲ դ. դ.), որի բովանդակությունը բժշկության մասին է։ Վերջում կա մի հատ բարակ թերթ մագաղաթ լատիներեն գրությամբ, դարձյալ հավանաբար որպես Ժ—ԺԲ դարերի գրության նմուշ, կրոնական բովանդակությամբ։— ՎԻՃԱԿԸ՝ բավարար, սակայն տեղ-տեղ ցեցակեր։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 23—24։— ԳՇՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիրն ունի մանրանկարչության բավական գեղեցիկ նկարներ։ Շատ գեղեցիկ են հատկապես շորս Ավետարանների սկզբում գտնվող շորս խորանները (2բ, 65բ, 105բ, 173բ), որոնք ներկայացնում են շորս ավետարանիչները։ Սրանց դիմացի էջում կան նաև գեղեցիկ շորս կիսախորաններ (3ա, 66ա, 106ա, 174ա)։ Ձեռագրում կան նաև երկու գազանագրեր (66ա և 106ա) և մի հատ մարդագիր (3ա), ինչպես նաև բազմաթիվ թռչնագրեր, զարդագրեր և ձկնագրեր։ Բացի այդ կան նաև սիրուն լուսանցազարդեր և գմբեթներ, սրբանկարներ և հրեշ-

տակներ, գազաններ, թռչուններ և խաչեր։— ԳՐԻՉՐ՝ Մկրտիչ քահանայ։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Ղազար քահանայ։—ԾԱՂԿՈՂՐ՝ Աբրահամ վարդապետ։—ԺԱՄԱՆԱԿՐ՝ 1489 թ.։—ՎԱՅՐՐ՝ Թիֆլիս։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սուրբ ձեռագիրը Ռոստովից բերել է Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանը 1953 թվականին։ 156-րդ թերթին կպած է լատիներեն լեզվով մի փոքրիկ պատառիկ։ 117բ և 118ա էջերում գրություն չկա։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 2բ.— Զստացող Սուրբ Աւետարանիս զՂազար քահանայ, զԱբրահամ նկարիչ յիշեա, թվին ՋԼԷ (1489)։

Թ. 223բ.— Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և անզրաւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ըստ յաճախման աստուածային բանին և զՀոգւոյն Սրբոյ, որով լուսաւորէ զհոգիս աստուածասիրաց անձանց (թ. 224ա) և տպաւորէ ի նոսա զլոյս աստուածագիտութեան և մերձաւորս առնէ աստուածային երանութեանն։ Որ և զհուր սիրոյ իւրոյ արկեալ ի սիրտ աստուածասէր սրբասնեալ հեզահոգի Ղազար քահանայն, որ մեծաւ ջանիւ և փափագանաւք ետ գրել զՍուրբ Աւետարանս ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնաւղաց իւրոց, հաւրն իւրոյ Սքանդարին, և մաւրն իւրոյ Բէգի խաթունին, և կենակցին իւրոյ Գուլումին, և եղբարց իւրոց Ջանդարին, Մարտիրոսին, Թադէոսին, Ստեփանոսին, Ջաֆարին, Սպանդիարին, Խաչատուրին, և որդւոյն իւրոյ Ղուկասին, և դստերաց իւրոց Թանգիկին, Նարինին, Ազիզին, և քրւերաց իւրոց Դեղա խաթունին և Մարթա խաթունին, և այլ ամենայն արեան մերձաւորացն։ Արդ գրեցաւ զՍուրբ Աւետարանս ձեռամբ մեղապարտ և անարժան գրչի Մկրտիչ սուտանուն քահանայի ի թվիս ՋԼԷ (1489) ի մայրաքաղաքս Տփխիս, ընդ հովանեաւ կամակատար Սուրբ Աստուածածնիս, և Գէորգայ զաւրավարիս, ի դաւն ի շփոթ ժամանակիս։ Արդ, աղաչեմ զամենեսեան որք կարդայք և կամ աւրինակէք, յիշեսջիք նախ ասացեալ զստացող սորա զՏէր Ղազարն (թ. 224բ) և զիւրսն ամենայն ընդ նմին և զհոգևոր եղբայրն և զքաջ վարդապետն զԱբրահամն զնկարող և զկազմող սորա, այլ և զհոգևոր եղբայրքն զՏէր Վարդանն, և զՏէր Յովհաննէսն, և զՏէր Եսայի աւագ երէցն, և զԲարսեղն։ Եւ որք յիշէք բարի յիշմամբ և աներկբայ հաւատով յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի առջևի մագաղաթյա հայերեն լեզվով պահպանակի երկրորդ թերթի լուսանցքում գրված կան 13 տող զանազան անկապակից բառեր)։

Թ. 1բ.— Յիշատակ է Աստուածաշունչ Սուրբ Գիրքս որ կոչի Աւետարանս Գեղաշինեցի Ղլանց Տէր Ղազարի որդի տիրացու Թադէոսին, հօրն Տէր Ղազարին, մօրն Սալվարին, կնոջն Շահզատին, որդւոյն ըՍտեփաննոսին, տստէրն Գայիանին, որ եղաք ի ձեռն տիրացու Յարութիւնին, զոր Տէր Աստուած վայելումն դացէ, որ ընթերնու Աստուած ողորմի ասէ վերոյգրելոցն, ոյվոր յեղոյ դաւի անի ՅԺԸ (318) հայրապետաց եղովեալ լինի, նաև Յուդային մասնակից լինի, ամէն։

Թվին ՈՃՂԵ (1746) յունվարին Ա-ումն գրեցաւ։

Թ. 224բ.— Ով կարդայ բեր. մի Աստուած ողորմի ասի (ողորմութիւն յԱստուծոյ առցէ, ամեն — ջընջված է) Գիրիգորին ողորմութիւն Աստուծոյ առց. ամեն։ Թվին ՌԾԳ (1605) եր որ Շահ յԱպազն եկաւ Երևեան։

Դարձեալ յիշեցէք զՏէր Յակոբովին որ յետ գնելիս զՍուրբ յԱւետարանս յիշատակ իւր և ծնաւղացն իւրոց՝ հաւրն Դաւթին, և մաւրն Նսեփին և եղբարքն իմ Էվումին, Սարգիսին, Յաատումին, և կողակիցն իմ Ճայ խանումին, և քեռերն իմ Սիրայմարքին, Հոռումին և Թանդումին։

Դարձեալ յիշեցէք զհանգուցեալ որդին իմ Սուրիան և միւս որդին իմ յապաւն Անդրեասն, և դստերքն իմ Ղատամին և Թոզծամին, ամեն։

Թ. 225ա.— Յիշեցէք զհարսներն իմ Նազումին, Շաղերին, Թողթատրին, և եղբայր որդին իմ Մարգարին, Հարապէտին, Յանախաթունին, Թարվանդին, և կսեր եղբարորդին իմ Խաչումին, Եղիսաբեթին և յամենայն յարեան մերձաւորացն, ամեն։

Դարձեալ յիշեցէք զԹոռոնքն իմ Վարդիթերն, Եղիսաբէթն, Մարիեանն, Հոռումն, Հիրիզնազն և հարսն իմ խաթունն, ամեն։ Թվականին ՌԻ (1572) էր որ առանք Սուրբ յԱւետարանս։ Ով ծախիլու թամահ անի կամ ասի թէ եղբարայ մէջ է, ծախէնք, նզովաց լինի, ով որ քահանայն լինին որպէս լինի յանպատճառ։

Դարձեալ յիշեցէք զսուտանուն Դաւիթ յարեղայն, որ յիշատակարանս գիրեց։ Ով կարդայ բերան մի Աստուած ողորմի ասի, ողորմութիւն Աստուծոյ յառցէ, ամեն, Հայր։

Թ. 226բ.— (Վերջին էջում գրված կա 12 տող, որոնք հետագայում ջնջված են։ Կարդացվում է միայն մեկ-երկու բառ)։

(Շարունակելի)